

Վիս Մանուկյան

Սրբյս
ԸՆԴՈՒՄ



Սույն ուսումնասիրությունը նվիրված է XIX դարի հայ պոեզիայի հիմնադիրներից մեկի՝ Սմբ. Շահագիգի կյանքի, գրական-հասարակական գործունեության և ստեղծագործությունների վերլուծությանը:

Աշխատության մեջ բացահայտված է Շահագիգի բանաստեղծությունների և ընդհանրապես գրական ողջ ժառանգության հայրենասիրական, ազատագրական իշխող ոգին, պայքարը հնամուկության ու նախապաշարումների դեմ, գաղափարական ընդհանրությունները վաքսունականների հետ և այն առաջավորն ու նորը, որոնք անժխտելիորեն արտացոլված են Շահագիգի երկերում:





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт литературы и.и. М. Аверьяна

Алис Манукян

Сибат
Шахазиз

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН · 1959

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.Ա.ԲԵՂՅԱՆԻ ԻՆՍՏԻՏՍԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՎԻԶԻՍ

ԿԿԻ Մանուկյան

891.99.092 [Ճանաչողություն]

Մ-

ՍԵՐԿՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

A $\frac{I}{321}$



Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ • 1959

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի տեղագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ:



Սմբատ Շահազիզը հայ նոր պոեզիայի հիմնադիրներից մեկն է: Կարճատե էր բանաստեղծի ստեղծագործական կյանքը, բայց նա խոր հետք թողեց հայ գրականության պատմության մեջ իր ստեղծագործությամբ և հատկապես «Լեոնի վիշտը» պոեմով, ուր ցայտուն արտահայտություն ևն գտել 60-ական թվականների հայ առաջավոր դադափարները:

Լուսավորականության և բուրժուական դեմոկրատիզմի դիրքերից պայքար մղելով կղերա-ավատական գաղափարախոսության ու սխոլաստիկայի դեմ, ոգեշնչված «գարիբալդյան զենքի հաղթանակով», ինչպես և ուսւ վաթսուականների գաղափարներով, Շահազիզը ջերմորեն արձագանքեց հայ ազգային-ազատագրական շարժմանը և ողջունեց Զելթունի հերոսական ապստամբությունը:



W. L. P.

Իր ստեղծագործական կյանքի ընթացքում
Շահազիզը խոշոր դեր կատարեց հայ պոեզիայի
պատմության մեջ: Նա հանդիսացավ նախահայրը
բանաստեղծների մի ամբողջ սերունդի, որի փայ-
լուն ներկայացուցիչներն էին Հովհ. Հովհաննիս-
յան, Ալեք. Ծատուրյան և ուրիշներ:

Սմբատ Շահազիզը ծնվել է 1840 թ. սեպտեմբերի 5-ին, Աշտարակում: Նա բազմաճյուղյա ընտանիքի կրտսերն էր, վեց եղբայրներից ամենափոքրը: Նրա հայրը՝ տեր-Սիմոն քահանան, 1848 թ. զոհվում է խոլերայի համաճարակին, և փոքրիկ Սմբատը վաղ հասակից ճաշակում է որբության դառնությունները:

1851 թ. դեպքերի բարեպատեհ բերումով հաջողվում է Սմբատին ուղարկել Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում ուսանելու:

Փոքրիկ Սմբատի համար դժվար էր կտրվել հարազատ միջավայրից, մոր զգվանքներից, եղբայրների ընկերակցությունից: Անշատման վիշտը Շահազիզին ապրել է ծանր կերպով և տարիներ անց երգել իր մի շարք բանաստեղծություններում: Ձևով անպաճույճ այդ բանաստեղծությունները տողորված են հուզականությամբ և հարա-

դատորեն արտացոլում են բանաստեղծի ներքնաշխարհը:

Շահազիզը հետաքրքիր և տպավորութլուններով հարուստ ճանապարհորդութլուն է կատարում Թիֆլիսից դեպի Մոսկվա: Թիֆլիսից նրան ընկերակցում է ապագա բանաստեղծ ու թարգմանիչ Գևորգ Բարխուդարյանը: Այս ուղևորութլան վերհուշն է Գ. Բարխուդարյանի՝ 1894 թ. Շահազիզին նվիրված մի բանաստեղծութլունը, որը թեև գեղարվեստական տեսակետից թույլ է, բայց հետաքրքրական է որպես կենսագրական մի վավերագիր կյանքի ուղին անցած վաստակավոր գրականագետի և նշանավոր բանաստեղծի երբեմնի կապերի ու հոգեվիճակների մասին նոր և անհայտ աշխարհ թեկնոսելու շեմքին:

Հասնելով Մոսկվա, Շահազիզն ընդունվում է Հաղարյան ճեմարանը: Նոր միջավայրը և նոր սլաշմանները իրենց ուժեղ ազդեցութլունն են թողնում գլուղից եկած մանուկի վրա, մանավանդ, որ ուսումնառութլան սկզբնական տարիները կապված էին անխուսափելի դժվարութլունների հետ:

Փոքրիկ Սմբատը ընդունվում է ճեմարան առանց մտավոր որևէ պաշարի: Սակայն, բնական ընդունակութլուններն ու ջանասիրութլունը հաղթահարում են ամեն մի խոչընդոտ և կարճ ժամանակամիջոցում նա դառնում է ճեմարանի աչքի ընկնող սաներից մեկը:

Շահագիղի ուսումնառության շրջանում Լա-
զարյան ճեմարանը արդեն հռչակված հաստատու-
թյուն էր, ուր հայ սաներին, հանրակրթական
առարկաներին ղուգընթաց, ավանդվում էր և
հայերենը իբրև մայրենի լեզու:

Ճեմարանը կարողացել էր իր շուրջը համա-
լսմբել ժամանակին հեղինակություն և համբավ
ձևաք բերած հայկաբանների, որպիսիք էին Ստ.
Նազարյանը և Մ. Էմինը, որոնք գրաբարի, բա-
նահյուսության և հին գրականության ճանաչված
մասնագետներ էին:

Այդ տարիներին ինչպես մյուս ուսումնական
հաստատություններում, այնպես էլ Լազարյան
ճեմարանում զհսկա շարունակվում էր գրաբարի
տիրապետությունը: Սակայն, հետզհետե ճեմարա-
նի պատերից ներս է թափանցում աշխարհաբարը:
Ռուսաստանի և Կովկասի տարբեր վայրերից եկած
մանուկները միմյանց հետ խոսում էին իրենց
հարազատ բարբառով, ձգտելով գործածել ընդհա-
նուրին հասկանալի բառեր ու ձևեր: Ճեմարանի
ներսում աշխարհաբարի դասի հիմնական պաշտ-
պանն էր Մ. Նալբանդյանը իր կարճատև ուսուց-
չության ընթացքում:

Մեկը մյուսի հետևից սկսում են լույս տես-
նել աշխարհաբար գրքեր ու պարբերականներ,
ինչպես օրինակ, Գ. Ախվերդյանի «Սալաթ-
Նովա»-ն, «Գամառ-Քաթիպա» ընկերության գրք-

քույրները¹, Ստ. Նազարյանի «Հանդես նոր հայա-
խոսութեան» երկահատոր ժողովածուն, «Հյուսիսա-
փայլը» և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»
վեպը, որը ուժեղ ներգործութիւն է ունենում
ձեմարանի աշակերտութեան և ընդհանրապէս
ժամանակակից երիտասարդութեան վրա:

Հայ գրականութիւնը և գրական լեզուն ապ-
րում էր բեկման շրջան. դանդաղ, բայց հաղթա-
կան քայլերով գրականութեան մեջ մուտք էր
գործում աշխարհաբարը:

Աբովյանի հարթած ճանապարհով ընթանում
են նույն գրողները: Պ. Պոսշյանն իր հուշերում
պատմում է, թե ինչպիսի զորեղ տպավորութիւն
է թողել «Վերքի» առաջին ընթերցանութիւնն
իր վրա:

«Դժվար է ինձ պատմել,—գրում է նա,—աչն
տպավորութիւնը և աչն հեղհեղուկ զգացմունք-
ներս, որ անընդհատ միմյանց հետևում էին. մի

¹ 1855 թ. Պետերբուրգում Ռաֆայել Պատկանյանի
ջանքերով հրատարակվեցին «Գամառ-Քաթիպա» ընկերու-
թյան տետրակները, ուր առաջին անգամ, 1856 թ. լույս
տեսավ «Արաբսի արտասուքը»: Ընկերութիւնը իր գոյու-
թյան երկու տարիների ընթացքում տպագրեց Պատկան-
յանի «Երկու բանաստեղծ», «Թիֆլիսի քեֆը», «Աղեն տանն է»,
«Երկու բանաստեղծ», «Նկարիչ», «Մայրաքաղաքում կըր-
թած հայ երիտասարդը» և մի շարք այլ բանաստեղծու-
թիւններ, թվով տասնյոթ հատ: Նույն այս տետրում
տպագրվեց և Դոգոխյանի հայտնի «Ծիծեռնակը»:

լուսին արտասուք տրամության, մյուս վայրկյանին արտասուք ուրախության, երրորդ ականթարթին նստած տեղս անհեթեթ ոստոստյուններ և ես ինչ գիտեմ ընչեր էին պատահում հետս. լավ էր, որ տանուտերս գնացել էր և մոտս ոչ ոք չկար, ապա թե ոչ գուցե կապերին և հիմարանոց տաներին»¹:

Ապա, պատմելով իր և տանտիրոջ խոսակցությունը «Վերքի» մասին, Պոռչյանը շարունակում է.

«Եվ ընչո՞ւ, պ. Հովհաննես, հետևողներ չունենա Աբովյանցը, ընչո՞ւ գուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրությունից, հերիք չէր մեր գրականությունը մի փոքր դասակարգի սեփականություն թողնել»²:

Պարզ է, այս տողերը արտահայտում են Պոռչյանի անձնական տպավորությունները, բայց դժբախտաբար բնութագրական են ողջ ժամանակաշրջանի համար: Դա հրամայական պահանջ դարձած, աշխարհաբար լեզվի և գրականության հաղթանակն էր:

50-ական թվականների կեսերից սկսած գրական այս շարժումը իր որոշակի ազդեցություն է ունենում պատանի Շահաղիզի վրա: Նա նույնպես արձագանքում է Լադարյան ճեմարանում առաջացած գրական նոր ձգտումներին: Ոգեշնչվում է Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանա-

¹ Պ. Պոռչյան, Հուշեր, 1940, էջ 34:

² Նույն տեղում, էջ 35:

ստեղծությամբ, հուզմունքով ու սրտի բարախում-
մով կարգում «Վերքը», հմայվում նրանով: Ճե-
մարանում կալին Շահազիզի գրական ճաշակի և
ընդունակությունների զարգացմանը նպաստող
բոլոր նախապայմանները: Այս առթիվ հետաքրք-
րիր հիշողություններ ունի Ռ. Պատկանյանը, որը
նույնպես ուսանել է Լազարյան ճեմարանում:
Ճեմարանի սաների մտավոր զարգացման գոր-
ծում, ինչպես երևում է այդ հուշերից, նշանա-
կալից է եղել Մ. Էմինի դերը.

«Պ. Էմինի պատմածը,—գրում է Պատկանյա-
նը,—եթե ասեմ լսում էինք՝ սխալ ասած կլինեմ.
մենք ամբողջապես կուլ էինք տալիս այն ու հեռ
դասին օրերով ու շաբաթներով մեր ընկերական
զրույցի և վիճաբանության առարկա էինք դարձ-
նում»¹:

Բացի այս, Էմինը աշակերտությանը ծանո-
թացրել է ռուս և համաշխարհային գրականության
խոշորագույն դեմքերի հետ, զարթնեցնելով նրանց
մեջ սեր և հետաքրքրություն դեպի այդ ժողո-
վուրդների գրականությունը: Աշակերտական նստա-
րանից նրանք հայ հին և նոր հեղինակներին զու-
գահեռ՝ Նդիշե, Սորենացի, Փավստոս, Ալիշան,
ծանոթացել են նաև Հոմերոսի, Միլտոնի, Ֆենե-
լոնի, Պուշկինի, Լերմոնտովի և համաշխարհային

¹ Ռ. Պատկանյան, Երկեր, 1955, էջ 690:

գրականության ալլ ներկայացուցիչների ստեղծագործություններին:

«...Պուշկինի և Լերմոնտովի գրվածքը,—գրում է Պատկանյանը,—առաջին անգամ մեզ ծանոթացուց նա. շատ անգամ, հենց իր դասի միջոցին, ձեռքը առնում էր նոցա շարադրությունները և կարդում էր մեզ համար, և այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ուսու հեղինակների մասին: Եվ այդ իսկ էր պատճառը, որ պ. Էմինի աշակերտների մեջ բավականին շատ թվով բանաստեղծական ոգով և ճաշակով երիտասարդներ երևան եկան. ինչպես Ասկարյանցը, Փափազյանը, Միրիմանյանը («Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ»), Դոդոխյանը («Ծիծեռնակ») Շահազիզյանը և այլն»¹:

Բանաստեղծական ձիրքը Շահազիզի մեջ հանդես է գալիս դեռևս աշակերտական հաստարանից: Նա սկսում է գրել բանաստեղծություններ, երգիծական քառյակներ. բացի ստեղծագործական հակումներից, Շահազիզի մեջ զգացվում էր սեր և հետաքրքրութուն դեպի հայագիտությունը:

Ճեմարանի ուսուցիչներից Շահազիզը ջերմ և բարեկամական զգացմունքներով կապված էր Ստ. Նազարյանի հետ, իսկ Մ. Նալբանդյանին թեև անմիջապես չի աշակերտել, բայց շատերի նման կրել է նրա մտավոր և բարոյական ազդե-

¹ Ռ. Պատկանյան, Երկեր, 1955, էջ 696:

ցությունը, հարպանքով ու երախտագիտությամբ հիշել նրան:

1860 թ. Շահազիզն ավարտում է ձեմարանը և նույն թվականին ընդունվում ձեմարանին կից լիցեյը: Վերջինիս ուսումնական տեղությունը երկու տարի էր. այդ ժամանակամիջոցում աշակերտները խորանում էին արևելագիտության մեջ: 1862 թ. Շահազիզն ավարտում է լիցեյը՝ նույնպես փալլուն հաջողություններով: Նրա անունը, ըստ ձեմարանում ընդունված կաշգի, գրվում է ոսկե տախտակի վրա: Այնուհետև Շահազիզը նշանակվում է նախակրթարանի ուսուցիչ և վերակացու: Որպես ուսուցիչ նա սիրվել է աշակերտության կողմից, եղել մեղմ ու ներողամիտ, երբեք մոռացության չմատնելով ուսուցչի և աշակերտության փոխադարձ պարտավորությունները:

1867 թ. Շահազիզը նշանակվում է ձեմարանի առաջին երեք դասարանների հայոց լեզվի ուսուցիչ: Նախքան պաշտոն ստանձնելը, ուսուցչական ցենզ ձեռք բերելու համար մեկնում է Պետերբուրգ՝ թեկնածուական քննություններ հանձնելու համալսարանի արևելագիտական բաժնում: Լազարյան ձեմարանի լիցեյը այդ ժամանակ դեռևս իր շրջանավարտներին միջնակարգ դպրոցներում դասավանդելու իրավունք չէր տալիս:

Հաջողությամբ ավարտելով քննությունները, 1867 թ. Շահազիզն ստանում է արևելյան լեզուների թեկնածուի գիտական աստիճան:

1873 թ. Մ. Մսերյանի մահից հետո Շահա-
զիզը դառնում է ձեմարանի կրտսեր և ավագ
խմբերի հալոց լեզվի ուսուցիչ:

ձեմարանում դեռևս շարունակվում էր դասա-
վանդումը այն սխոլաստիկ, հակամանկավարժա-
կան մեթոդներով, որոնց կիրառողներն էին Մ.
Սալլանթյանը և Մ. Մսերյանը: ձեմարանում,
բացի գրաբարից, ավանդվում էր և ճարտասանու-
թյուն Մ. Սալլանթյանի՝ 1862 թ. Մոսկվայում
հրատարակված ձեռնարկով և Մ. Էմինի «Հրահանգ
ճարտասանութեան ի պէտս աշակերտաց» ձեռա-
գիր տետրակներով: Ստանձնելով հալոց լեզվի
ժամերը, Շահազիզը նախ և առաջ որպես առար-
կա վերացրեց ճարտասանությունը, գործածու-
թյունից հանեց վերոհիշյալ գրքերը, ինչպես և
Սալլանթյանի և Էմինի քերականական դանազան
ձեռնարկները: Վերջիններս նա փոխարինեց հնա-
րավորության չափ պարզեցրած ու աշակերտու-
թյանը մատչելի դարձրած քերականության իր
ձեռնարկով:

Իբրև մանկավարժ, Շահազիզին հետաքրքրել
են մանկավարժության տեսական հարցերը: Ծիշա-
է, մանկավարժության տեսության նվիրված հա-
տուկ ուսումնասիրություններ նա չի գրել, բայց
այդ խնդիրներին անդրադարձել է իր հրապարա-
կախոսական աշխատություններում:

Մանկավարժի կոչման և բարոյական նշանա-
կության հարցերը նա արծարծել է և իր մասնա-

վոր թղթակցություններում: Շահադիդը սպառնացաւ թագաւորություն է տվել, թե իր հասկացողութեամբ ի՞նչ է ուսուցչի դերը, ի՞նչ զգացմունքներ և իդեաներ է նա պարտաւոր պատվաստել մատուղ սերնդի մեջ:

«Այո, ես աշխատել եմ, — գրում է Շահադիդը, — դատաւանդութեան տարեշրջաններին դատաւարակելու ուսանողի մեջ ո՛չ միայն լոկ գիտութեան, այլև յիստիկ և ազնիվ զգացումներ դեպի ընկերը, դեպի ազգութեան և մարդկութեան: Ես աշխատել եմ, որ այդ զգացումները խոր նստեն աշակերտի սրտի մեջ, որ դրանք ձուլվեն որպէս համոզմունք և եթե պետք լինի հարկաւոր փոփոխութեան կոթարկելու, լինի միայն ազատ և վերլուծող գիտակցութեան ճանապարհով և ո՛չ քամու նման ազատ, ինչպէս այդ տարարախտարար նկատվում է այսօր մի քանի թեթևամիտների մեջ»¹:

Շահադիդը նեղ, սահմանափակ հայացքների տեր ուսուցիչ չէր. նա աշակերտութեանը դատաւարակել է հումանիզմի, ժամանակի առաջավոր գաղափարների ոգով:

Շահադիդը ձեռնարանում կիրառեց աշխարհաբար շարադրութեաններ գրելու մեթոդը, որը նրա մանկավարժական գործունեութեան մեծագույն վաստակն էր: Դեռևս լիցեյի աշակերտ, նա հա-

¹ Դրականութեան և արվեստի թանգարան, Էր. Շահադիդի ֆոնդ, III բաժին, № 214:

տուկ շահագրգռությամբ է հետեւել աշխարհաբարի ծափալմանը: Այս մասին տարիներ անց՝ 1892 թ. Լազարյան ճեմարանի նախկին աշակերտ, հետագայում հայտնի մանկավարժ Սեդրակ Մանգինյանը, բանաստեղծի 30-ամյա հորեւլյանի առթիւ, գրել է.

«Հիշում եք, թե ճեմարանական անկերպարան, խոժոռ և խրթին բարբառի մեջ ինչպես էր հնչում ձեր ուռճացած լեզուն»¹:

Շահադիւղի մանկավարժական դործունեությունը չի սահմանափակվել միայն դասավանդման նոր մեթոդներով և աշխարհաբարի դործածությամբ: Նա ներգործել է աշակերտության վրա և բարոյապես: Հայրենիքից հեռու, տարբեր վայրերից հալածված հայ աշակերտության մեջ նա վառ է պահել սերը դեպի հայրենիքը, մայրենի լեզուն և մշակույթը: Նույն նամակում Ս. Մանգինյանը հիշեցնում է.

«Մինչույն «օրհնյալ հարկի» տակ, դուք՝ սովադ դասատան աշակերտ, ես՝ նորընծա, երկուսս էլ ալլանդակ կուրտիա հագին,—բայց և այնպես դուք եղաք ինձ համար այն ուսուցիչն ու դաստիարակիչը, որը ոչ թե դաս է տալիս և դաս է լսում, այլ մտքեր է շարժում և զգացումներ է ազնվացնում: Ես կկեղ էի ուսում ստանալու, այդ բանը դուք քիչ

¹ «Սմբատ Շահադիւղյանի երեսնամյա հորեւլյանը», 1894, էջ 103—104:



համարեցիք, հայությունը չկորցնել, հայությունը սիրել, հայությունը բարձրացնել՝ այսպիսի ներշնչումներով ձգտում էիք լրացնել խմ և ուրիշ շատ շատերի պակասը: Օրհնյալ լինիք, ազնիվ ուսուցիչ՝¹:

Շահազիզը ինքը նույնպես տարիներն է վեր հեռացել էր հայրենիքից, բայց կարոտն ու սերը, հետաքրքրությունը դեպի հայրենիքը միշտ վառ էր նրա մեջ մինչև կյանքի վերջին օրերը:

Մանկավարժական գործունեությունը զուգահեռ, Շահազիզը զբաղվել է և հասարակական աշխատանքներով: Հայրենիքի սերը և հարազատ ժողովրդի ծանր վիճակը թեթևացնելու գիտակցությունը նրան դավապարել են հասարակական գործունեության մեջ: Նա 1898—99 թթ. Մոսկվայում վարում է որդախնամ ընկերության նախագահի պաշտոնը, կազմակերպելով համիդյան գաղանակա՛ն կոտորածներից մազապուրծ բազմաթիվ գաղթականների և որբերի խնամքի ու կրթության գործը:

Շահազիզի հասարակական գործունեությունը լավագույն էջերից է նրա մասնակցությունը արևելախաչ թատրոնի հիմնադրմանը: Մանրամասն տվյալներ չկան այս բնագավառում բանաստեղծի կատարած աշխատանքի բնույթի մասին, բացի Ս. Մանգինյանի վերը հիշատակված նամակից, ուր գրված է. «Հիշում եք հայկական բեմական արվեստի

¹ «Սմբատ Շահազիզյանի հրեանամյա հոբելյանը», 1894, էջ 103:

սկզբնավորութիւնը, որի հիմնաքարերից ոմանք
ձեր ձեռքով դրվեցան»¹:

Այս մի ակնարկ է միայն, թուեցիկ հիշեցում,
սակայն բավական է արժեքավորելու Շահազիզի
դերը հայ թատրոնի պատմութեան մեջ: Մանդի-
նյանը ամենայն հավանականութեամբ նկատի է ու-
նեցել 1859 թ. Լազարյան ճեմարանի սաների
ուժերով բեմադրված Շահազիզի «Կովարար Կի-
կոս» կատակերգութիւնը, որ բանաստեղծը գրել
էր աշակերտական շրջանում և որի ձեռագիրը,
ցավոք, չի պահպանվել:

Կյանքի հաջորդ տարիներին բանաստեղծի
հասարակական գործունեութիւնը չի նշանա-
վորվում ուշագրավ փաստերով: Իր անհատական
նկարագրով նա քաշված, ինքնամիտի մարդ է
եղել, միշտ խուսափել է լայն շրջանների հետ
շփուկուց: Ունեցել է ընկերների, մտերիմ ու
հարազատ գրականագետների մի նեղ շրջան՝ Միք.
Միանսարյան, Լազարյան ճեմարանի վերակացու
Կար. Արզանգուլյան, Մելք. Փանյան, Ստ. Նա-
ղարյան, Ման. Սաղաթյան և ուրիշներ: Սերտ
էին հատկապես Շահազիզի և Ստ. Նաղարյանի
կապերը: Բանաստեղծի եղբորորդին, հայտնի բա-
նասեր Եր. Շահազիզը իր հիշողութիւններում
պատմում է, թի հաճախ է տեսել Ստ. Նաղարյա-

¹ «Սմբատ Շահազիզյանի երեսնամյա հորեկյանը»,
1894, էջ 103:

նին իր հորեղբոր տանը, իսկ «Դեմ»-ի տաղանդա-
 վոր թարգմանիչ Ման. Սաղաթյանը բանաստեղծի
 մտերիմ ընկերն էր: Պատմում են, որ մի սենյա-
 կում Սաղաթյանը թարգմանել է Լեւոնտովի
 «Դեմ»-ը, իսկ մյուսում Շահազիզը գրել է «Լեւոնի
 վիշտը»: Շահազիզը այնքան է սիրել և բարձր
 գնահատել Սաղաթյանին, որ վերջինիս հիվան-
 դության ժամանակ սեփական միջոցներից փող
 է տրամադրել նրան, հայրենիք վերադառնալու
 ու բուժվելու համար: Իսկ մահվանից հետո, Սա-
 ղաթյանի հիշատակին նվիրված սրտառուչ մի
 բանաստեղծութիւն է գրել՝ «Բանաստեղծի
 դամբարանին» վերնագրով: Երիտասարդ երգիչը
 կյանքից հազուրդ չոտացած, մարդկանցից չգնա-
 հատված, հեռանում է դուռը աշխարհից, որը չու-
 ղեց ունկնդրել նրա երգերին: Նա ալիս ալիւրդ
 է համարում հետ մահու մեծարանքները, արտա-
 սուքն ու վարդերը: Նրա միակ ցանկութիւնն է,
 որ իր կորած հոգաթումբը լինի բնության գրկում:

Երբ որ ինձ թաղեք, մի՛ արտասովազին

Ծաղիկներ ցանեք զազաղիս վերա.

Ի՞նչ հարկավոր է անշունչ դիակին,

Որ մահից հետո սիրո կուռք դառնա:

Մանուկ օրերից հուսով սիրավառ

երգ ևս երգեցի ոգևորության,

Բայց ինձ չլսեց դուռը այս աշխարհ.

Վա՛յ ձեր վարդերին, որ ահա չը կան:

Սմբատ Շահազիզը վաշկեկ է ամբողջ հալ
 հասարակութիւն սերն ու հարգանքը, գրա լավա-

դույն ապացուցն էր Շահազիզի հոբելյանի նշանավորումը: 1892 թ. ապրիլի 9-ին, Մոսկվայի հայ համալսարի նախաձեռնությամբ, արժանավայել հանդիսավորությամբ տոնվում է սիրված բանաստեղծի և բաղմավաստակ մանկավարժի գրական-հասարակական գործունեության 30-ամյա հոբելյանը: Այս առթիվ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ներսես Ներսիսյանը հանդես է գալիս ընդարձակ ճառով, իսկ Ա. Ծատուրյանը ընթերցում է հոբելյարին նվիրած իր բանաստեղծությունը, որը մարտական երգի կոչ էր. նա խրախուսում է պոետին՝ սրտահույզ քնարով երգել լուսավոր ապագան, հայրենասիրության և ազատության սուրբ գաղափարները:

Դա՛ռն է մեր կյանքը, տխո՛ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդել է ստրկության շղթան.
Օ՛, երգիչ, երգի՛ր մեզ հզոր երգեր,
Բոցավա՛ռ երգեր ոգևորության:

Երգի՛ր մեզ անահ, կորովի ձայնով
Փառք և հաղթանակ փայլուն գործերի,
Երգի՛ր, որ ազատ քնարիդ լաբերով
Ցնցես թելերը թմբած սրտերի...

Շահազիզը շուտ հեռացավ ստեղծագործական կյանքից: 1892 թ. «Հանգած քնար» բանաստեղծության մեջ նա երգեց անցած կյանքի, գարնան օրերի մասին, երբ իր միտքն ու հոգին կաշկանդված չէին բռնությամբ, իսկ այժմ, խորտակված էին հասարակական իդեալները, բանաստեղծը

ապրում էր խոր հիասթափություն, լռել են
առհավետ նրա քնարի լարերը, որովհետև բնու-
թյան նման մարդկային սիրտն անկարող է ալլես
վերականգանանալ.

Անց կացան օրերս, անցավ և դարուն,
երբ զեղեցկացած մանուկ ուշժերով,
Իբր սըրաթովչ արծըվի կորյուն,
Թռչում էի ես հըզոր թևերով,
Ձրկա՛ր ինձ արդեւք, չըկա՛ր բանություն:

Ա՛խ թե և մեր սիրտն ծառի պես լիներ, —
Ձքմեռը կանաչ տերեխց թափվեր.
Ամառը որ դար, մանուկ աշխուժով,
Բանաստեղծական ելե՛ջներով
Յուր թմբությունից նորի՛ց ըսթափվեր:

Շահազիզի մանկավարժական գործունեու-
թյունը տեղւմ է մինչև 1897 թ., որից հետո նա
կոչվում է հանգստի, հակառակ իր ցանկության:
Բանաստեղծի կյանքը այնուհետև դառնում է ավելի
ինքնամոփոխ ու պարփակված: Նա կտրվում է
աշակերտության հետ շփվելու հնարավորությունից,
որ խիստ ծանր է անդրադառնում բաղմամաստակ
մանկավարժի հոգեբանության վրա: Շահազիզը
իրևև մանկավարժ ամբողջ էությամբ կապված էր
իր աշակերտների հետ, և մինչև իսկ տարիների
անջատումը նրան չէին կտրել արդեն կյանք մտած
իր երբեմնի աշակերտներից: Նա հոգով միշտ
եղել է իր սաների հետ, հետաքրքրվել նրանց
հակատագրով: Հուզիչ են և ջերմ աշակերտներին

հասցեագրված սեր ու գուրգուրանք արտահայտող
ուսուցչի տողերը.

«Ընկերներդ, որպես և դու, իմ անմոռաց բա-
րեկամներդ, քաջ պիտի խելամուտ լինեիք, որ ձեր
նախկին ուսուցիչը միշտ և հանապաղ ձեր
հետ է, թեև շատ օրեր ու տարիներ անցնեն մին-
չև որ կենդանության զարկը դադարելով կդիակ-
նանամ, և կմտնեմ գերեզման՝¹:

Նվազ ծանր հարված չէր բանաստեղծի համար
հանգստի կոչվելու առթիվ ձեմարանի շենքից հե-
ռանալը ևս: Նա ամուրի էր, չուներ ընտանիք.
կրկարամյա տարիները միայնակ մարդուն բազ-
մաթիվ հիշատակներով ու սովորություններով կա-
պել էին բնակության միևնույն վայրի հետ: 1897 թ.
մայիսի 25-ին Եր. Շահազիզին գրած նամակում
բանաստեղծը ներքին մեծ խռովքով նկարագրել
է այդ օրերի իր հոգեվիճակը.

«Այստեղ պիտի լինի,—գրում է նա,—Տեր-
Հակոբյանի ավագ դուստրի հարսանիքը մոտա-
բար 10 հունիսի և ես հրավիրված եմ որպես
խաչեղբայր: Բացի սրանից, պիտի տունս դատար-
կեմ և իրեղենները հանձնեմ պահեստի: Պատրաստ
բնակարան գտվար է գտնել, որ ինձ մեծ հոգս է
պատճառում: Ձեմարանը արդեն, կարելի է ասել,
թողել եմ և հանձնել գարշելի պարոնին²:

¹ Գրականության և արվեստի Թանգարան, Եր. Շահա-
զիզի ֆոնդ, III բաժին, № 197:

² Ակնարկում է Գեորգ Քանանյանին:

Ես ամենալին մասամբ ծերացել եմ, բայց որ-
պես դասատու, ասում եմ առանց պարծենալու,
կամ, կմնամ նույնպես կայտառ և կենդանի, որպես
ձեր ժամանակներում. և թե երբեմն աշխարհը դը-
խիս միջում է և հուսահատությունը դառնում է ինձ
անբաժան ընկեր, մի հույս, որ ինձ պահում է կեն-
դանի, լուսավորում է հոգիս, մաքրում է միտքս,
հանգստացնում է ջղերս, այդ իմ հավերժ սիրա-
հար և մշտադալար դասարանն է: Ես իմ երիտա-
սարդ ընկերակցություն մեջ դառնում էի այն, որ
ոչ ոք ինձ չէր կարող տալ, ոչ դուն, իմ սիրելի,
ոչ հարստությունը, ոչ պաշտոնական մեծությունը
և ոչ նույնիսկ երկինքը: Հավատացե՛ք ինձ, որ այս
տողերս գրում եմ և արտասուքը հեղեղի պես
թափվում է աչքերիցս: Ների՛ր ինձ, Երվանդ, որ
և դու պիտի շարժվիս ինձ հետ, սորա համար և
կտրում եմ իմ խոսքս: Եվ դու ինձ այլ մի հիշիր
սորա մասին. կշռված է և որոշված. այլևս Սմբատդ
ճեմարանումը չէ...»¹:

Մանկավարժական ասպարեզը թողնելուց հե-
տո Շահազիզը մտավոր ամլության չգատապարտ-
վեց: Ստեղծագործական աշխատանքին, մանկա-
վարժական գործունեությանը փոխարինեց հրա-
պարակախոսությունը: Հետզհետե նա լույս է ընծա-
յում «Հրապարակախոս ձայն» (1881), «Ամառնալին

¹ Գրականության և արվեստի թանգարան, Եր. Շահա-
զիզի ֆոնդ, III բաժին, № 212:

նամակներ» (1897), «Հիշողութիւններ Վարդանանց տոնի առթիւ» (1901), «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» (1903) հրապարակախոսական աշխատութիւնները, որոնք հարուստ և հետաքրքիր նյութ ևն պարունակում հեղինակին բաղմակողմանիորեն ուսումնասիրելու համար:

Նկարագրով զուսպ, կենցաղով համեստ էր Շահաղիզը: Նրա մեջ միշտ վառ է եղել քաղաքացիական պարտքի գիտակցութիւնը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ, ինչպես և մարդկային սըրտացով վերաբերմունքը դեպի շրջապատը: Նա երբեք չի ձգտել մեծության ու դիրքի, չի խնկարկել հարուստներին և ամբողջ կյանքում հպարտությամբ պահպանել է մարդկային արժանապատիւթիւնը: Իր 30-ամյա հորելյանի հանդիսավոր երևելիին բանաստեղծն ասել է.

«Երբեք ձեռնամուխ չեմ եղել մեծության և ոչ երկրային կուռքերից անդաչել ողորմութիւն. չեմ դեղերել մեծամեծների դրան, որ բարձր երևւում և ոչ անցելի եմ հարուստներին այն հույսով, որ նոցա սեղանից վայելեմ: Իմ միակ սենյակս, իմ ոգեպահիկը ավելի եմ համարել այն բաղմախորտիկ և սակեղարդ դահլիճներից»¹:

Շահաղիզը ջերմ հայրենասեր էր: Թե ինչքան մեծ էր նրա սերը դեպի իր հայրենիքը և ինչքան հզոր վերջինիս ստեղծարար զորութիւնը բանա-

¹ Սմբ. Շահաղիզ, Հորելյանի տարեգարձ, էջ 34:

ստեղծի համար, պարզվում է նրա հետևյալ տողերից.

«...Հայրենի հողը և ջուրը ամենակարող միջոցներն են, այն և դրդողներ բանաստեղծական գույների ու բազմազան հեղհեղման»¹:

Երկարատե բացակայությունից հետո, միայն մի անգամ՝ 1873 թվականին, բանաստեղծին հաջողվում է այցելել իր ծննդավայրը, հատկապես ծերունի մորն ու Աշտարակը տեսնելու: Այս առթիվ Մ. Փանյանին ուղղած նամակում նա գրում է.

«Թե ինչպես եղավ իմ մուտքը մեր մայրենի աշխարհը, մնում է պատմել ինձ երես առ երես, երբ յատված կհաջողի հասնել այդտեղ. միայն այսքան ունիմ ասել քեզ, որ իմ մուտքը Աշտարակ այնքան նխրական և սրտաշարժ էր, որ շունչս սպառած դարձել էի ևս մի արտասուքի ծով:

Ո՛հ, մեծ է սերը հայրենյաց, թեև տնանկության և թշվառության մեջ»²:

Հայ իրականության մեջ Շահաղիզն է եղել առաջին գրական ֆոնդի հիմնադիրը: 1893 թ. Շահաղիզի մանկավարժական գործունեության երեսնամյա հորելյանի (1892) ստիժիվ ստացված

¹ Գրականության և արվեստի թանգարան, Եր. Շահաղիզի ֆոնդ, III բաժին, № 193:

² Եր. Շահաղիզ, Սմբատ Շահաղիզի կենսագրությունը, 1944, էջ 41:

նվիրատվությունների գումարով, հորեկյարի նախաձեռնութեամբ, կազմվում է «Արովյան-Նաղարյան» ֆոնդը, որի տոկոսները հատկացվում էին կարիքավոր հալ դրողներին: Այդ գումարներից օգտվել են Ղ. Աղայանը, Պ. Պոռշյանը, Հովհ. Թումանյանը և ուրիշներ:

Շահազիզի նկարագրի ճիշտ ըմբռնման, նրա ստեղծագործութեան ու անհատականութեան մեջ ընդհանրություններ գտնելու համար ուշադրավ է բանաստեղծի թղթերի մեջ հետամահու հայտնաբերած «Կտակիս շարժառիթը» վերնագրով ձեռագիրը:

Հայրենիքը բանաստեղծի համար ստեղծագործական ներշնչումների աղբյուր չէր միայն, այլև նրա մտորումների մշտական առանցքը. հայրենիքի ներկան ու ապագան հավասարապես հուզում էին բանաստեղծին և այս էր այն ներքին մղիչ ուժը, որ Շահազիզին թեւագրեց իր ամբողջ կարողութունը թողնել ազգին թեկուզ մի չնչին չափով բարելավելու նրա ծանր վիճակը:

Ահա կտակի պատճենը.

«Իմ առաջին ազգականը իմ ազգն է, որովհետև ազգը, ինչպես հավաքական միություն, ավելի երկար կյանք ունի, քան թե առանձին անհատը. այս պատճառով ես էլ իմ գույքիս մեծ մասը կտակել եմ իմ ազգին: Եթե մի ինտելիգենտ կամ առհասարակ մի կրթված մարդ լուր հարըստությունը կտակում է միայն լուր ազգական-

հերին և մոռանում է հասարակությանը, այդ ասել է, որ նրա կրթությունը դեռ խոր արմատ չի արձակել նրա մեջ. այդպես է վարվում և ամեն մի անկիրթ կամ ևսակամ կյանքով ապրող մարդ, թեև երբեմն և այդ անկիրթների մեջ էլ տեսնում ենք աշնալիսի անհատներ, որոնք իրենց բնական բարեւիրությամբ մեծամեծ դումարներ են թողել ազգի զարգացման համար:

Եթե իմ ազգակից ժառանգներն¹ անբավական մնան ինձանից, որ քիչ ևս կտակել նրանց, կամ թե ոչինչ չեմ կտակել, փուլթ չէ, ևս ինքս շատ բավական եմ ինձանից, որ այս տեսակ կրտակ եմ արել:

Ինձ հարկավոր չէ ոչ մի նյութական արձան կամ պատկ, ևս ինչպես իմ կենդանությամբ փախել եմ այդ ժամանակավոր ցույցերից, աշնալես էլ փախչում եմ դրանից և մահից հետո, միակ արձան, որ կարող էր ընծայել ինձ հասարակությունը, այդ աշն է, որ բարի մարդիկ հետեին իմ օրինակին և դոհարեր լինեն իրենց դժբախտ ազգի վիճակը թեթևացնելու:

Ես, ինչպես իմ կենդանության ժամանակ, աշնալես էլ իմ մահից հետո, ավանդում եմ իմ բազ-

¹ Շահազիզը բաղմանդամ տոհմի զավակ էր, ճաղգակից ժառանգները նրա եղբայրներն ու եղբորորդիներն էին, որոնցից հատկապես երվանդ Շահազիզի հետ կապված էր ջերմ զգայմունքներով. վաղ հասակից բերել էր նրան իր մոտ՝ Մոսկվա, Լազարյան ձեմարանում սովորելու:

մաթիւ աշակերտներին այն համերաշխության պատվերը, որով մենք շաղկապված ենք եղել ճեմարանի հարկի տակ, աղաչում եմ անմոռաց հիշել մարդասիրության սկզբունքը և աշակցել հասարակաց պահանջներին»¹:

Շահազիզը չապրեց խոր ծերություն, նա վախճանվեց 1907 թ. դեկտեմբերի 24-ին, 67 տարեկան հասակում՝ սրտի կաթվածից:

Հակառակ բանաստեղծի ցանկության, Մոսկվայի հայ հասարակությունը նրա հուղարկավորությունը կատարեց պատշաճ հանդիսավորությամբ: Եկեղեցում դամբանական ճառով հանդես եկավ Լազարյան ճեմարանի ուսուցիչ, հայագետ Գր. Խալաթյանը, իսկ գերեզմանատանը՝ հայտնի գրականագետ Յուր. Վեսելովսկին: Հուզիչ էր հատկապես Ալեք. Ծատուրյանի արտասանած Շահազիզի՝ «Զոհեր» բանաստեղծության տպավորությունը:

Շահազիզը թաղվեց Մոսկվայի Վազանկա հայոց գերեզմանատանը իր ուսուցիչ և սիրելի բարեկամ Ստ. Նազարյանի կողքին: Նրա հողաթումբը զարդարված է շքեղ մահարձանով:

¹ Եր. Շահազիզ, Մաքառ Շահազիզի կենսագրությունը, 1944, էջ 40:





Մինչև առանձին գրքուկով հրապարակ գալը, Շահազիզն իր առաջին բանաստեղծությունները տպագրել է Մսեր Մսերյանի «Ճռաքաղ» ամսագրում:

«Ճռաքաղ»-ում տպագրված «Արարատյան դաշտ» խորագրով առաջին բանաստեղծությունը Շահազիզը գրել է, երբ Լազարյան ճեմարանի 5-րդ դասարանի աշակերտ էր: Հայրենիքի կարոտն ու սերը միշտ վառ էին նրա մեջ և զարմանալի է, որ երիտասարդ բանաստեղծը գրչի իր վարժությունները սկսել է հայրենի երկրի բնության գովերգումով: Ամբողջ բանաստեղծությունը բնության սովորական նկարագրություն է, չկա բնության խոր ընկալում, թվարկված են բնության հրապույրները, քան գեղարվեստորեն պատկերված է այն:

Հաջորդ բանաստեղծութիւնն՝ «Ավետարներ
աղայնի»-ի բովանդակութիւնը կրօնական է: Այս-
տեղ օգտագործւած է Աստվածաշնչի հայտնի
ավանդութիւնը մարդկութիւնն նախահայր Նոյի
մասին, որը ջրհեղեղից ազատվել է Մասիսի
զագաթին տալաստանելով: Աղայնին ավետել է նրան
կյանքի վերականգանացումը:

Բանաստեղծութիւնը աչքի չի ընկնում ստեղ-
ծագործական ներշնչմամբ, ոչ լեզվի հարստու-
թեամբ, ոչ էլ պատկերների բազմազանութեամբ,
ավանդութիւնը պարզապէս չափածոյի է վե-
րածւած:

Վերջին բանաստեղծութիւնը՝ «Սոխակ ող-
բերական» է, դարձյալ կրօնական բովանդակու-
թեամբ: Բնութիւն կենսախիւնդ երգչի գեղգեղանք-
ները սգալի են, որովհետեւ նա երգում է Արեւի
մահը:

Առաւօտեանն անդ և Ձեփիւս
Շընչեալ հեղի՛կ հանդարտի՛կ՝
Ձազդ ազդ ծաղկանց զանուշարոյր
Սըփռէ համա՛յն ըզհոփիկ:

Տխու՛ր սակայն լըսի նըւագ
Երաժըշտին օղական,
Ձի զԱրեւին վարդակալակ
Երգէ զհեղումն արեան՝:

¹ «Ճառքաղ», 1859, էջ 414—415:

Շահադիդի սկզբնական շրջանի այս բանաստեղծությունները իրենց կրոնական թեմայով ու բարոյախոսությամբ, գրաբարով և անմշակ ձևերով գրեթե ոչնչով չէին տարբերվում ժամանակակից շատ հեղինակների նման գործերից: Դրանք աշակերտական վարժությունների էին, պատանի Շահադիդի գրական նախնական փորձերը:

Երկար չլուց նորեկ բանաստեղծը: «Ճառքադ»-ում հանդես գալուց մի տարի անց, 1860 թ. Մոսկվայում, Լուդարյան ճեմարանի հրատարակությամբ լույս տեսավ նրա «Ազատության ժամեր» վերնագրով աշխարհաբար բանաստեղծությունների փոքրիկ հավաքածուն: Գրքույկին կցված առաջաբանում հեղինակը խոսելով իր բանաստեղծությունների պակասությունների մասին, գրանք համարում է հետևանք աշխարհաբարի գեղեստանբավարար մշակվածության:

«Մատուցանելով իմ այս փոքրիկ գրքույկը մեր աշխարհ կարգացող հայոց ժողովրդյան դատաստանին, ես պարտ եմ համարում ասել մի քանի խոսք, որպես իմ ոճի, նույնպես և ոտանավորների մասին: Երկրորդ հատորը իմ շարադրության գրված է ժամանակակից աշխարհաբար լեզվով, որ հիշե ոչ բոլորը, գոնե ըստ մեծի մասին ամենալն մտածող հայ մարդ կարող է հասկանալ առանց աշխատանքի և բառարանի: Շատ անգամ հարկ եղավ ինձ գեղեցիկ գրաբար ձևեր փոխել աշխարհաբար (թեպետ և միանգամայն ճշմարիտ զգացմունքով

գրգռածը չի փոխվում) հատուկ նորա համար, որ առավել մոտենալի լինի ժողովրդին, անուամենայնիվ ես շատ լավ զգում եմ, որ անհամար պակասություններ կան ոճի կողմից իմ ոտանավորներին մեջ, պատճառ, որ մեր այժմյան խոսակցական լեզուն շատ թերություններ ունի: ... Դեռ նա չունի այն կատարելությունները, այն դարձվածները, այն ձևերը, որոնցով կարող էինք արձակ խոսել և գրել»:

Ինչպես առաջարանից պարզվում է, «Ազատության ժամեր» գրքուկը հեղինակի բանաստեղծությունների երկրորդ հատորն է, առաջինում նա ամփոփել էր իր գրարար բանաստեղծությունները և մտադիր է եղել, «եթե կհաջողվի, մի քանի ժամանակից հետո» հրատարակել: Այսպիսով, Շահազիզը իր ստեղծագործության նախնական շրջանում գրել է գրարար ոչ միայն առանձին բանաստեղծություններ, այլ նույնիսկ մի ամբողջ գրքուկ «Պատանեկական գրոսանք» միանագրով, որը լույս չի տեսել: Ամենայն հավանականությամբ, ինքը Շահազիզն է հրաժարվել իր մտադրությունից, զգալով, որ ժամանակավրեակ է վաթսուհակաթյան թրվականներին գրարար բանաստեղծություններ հրատարակելը: Հետագայում, «Լեոնի վշտի» մեջ նա բացասաբար է արտահայտվել իր այդ գրարար ոտանավորների մասին:

Թեև երբեմն սիրտըս դրավեց
Խրթին կանոնքը խրթին արվեստի,

Բայց զարգանալով խելքս չընդունեց.
Հետ ուղարկեցի,—ապերա՛խտ սրդի:

Հետաքրքրական է «Ազատության ժամերի»
բովանդակությունը: Այնտեղ կան անցյալի փառ-
քին, պատմական սիրած հերոսներին նվիրված
բանաստեղծություններ («Երգ», «Երկիր և երկինք»,
«Վարդան Մամիկոնյան»), հայրենի գլուղից ան-
ջատվելու նկարագրություններ («Ողջուն հրաժա-
րական Աշտարակի հետ»), իր՝ պոետի աշակեր-
տական տարիների միացնության հուլյները պատ-
կերող երգեր և եղբոր՝ հիշատակին նվիրված մի
բանաստեղծութուն («Ամենախոնարհ ներողու-
թյուն»):

Բացի այս բանաստեղծություններից, Շահա-
ղիզը երգել է բնությունը («Ծաղիկ», «Աշուն»),
կյանքի և հրիտափարկության վաղանցիկությունը
համեմատելով բնության հետ:

Գրքուկի երկրորդ մասը «Ոռմաններ» են,
այսպես է անվանել ինքը հեղինակը և մի ընծայա-
կանով նվիրել է այն հայոց աղջիկներին: Ռոմանս-
ների մեջ հեղինակը երգել է սիրո հրապույրը,
տվայտանքը և նրա ամենակարող ուժը («Սեր»):

Բանաստեղծի հուլյները անկեղծ են ու անմի-
ջական. կենսագրական փաստերից և առաջաբանում
տրված բացատրությունից պարզվում է, որ Շա-
հաղիզի սիրո առարկան ոչ թե երևակայությամբ
ստեղծված մի կույս է, այլ իրական անձնա-
վորութուն, Աննա անունով մի օրիորդ, որի հան-

դեպ նա տաժել է լուրջ և հարատև զգացմունքներ:

Գրքի երրորդ բաժինը կոչւում է «Գրաբար շարադրություն», որոնցից մի մասը սիրալին բանաստեղծություններ են՝ ոչնչով չտարբերվող նախորդներից, բայց գրված գրաբար, իսկ մնացյալները կարոտի երգեր են հայրենիքին նվիրված («Հայ մանուկ յօտարութեան», «Իդձ սրտիս»): Բանաստեղծությունների այս բաժնում, առանց հեղինակի: անվան հիշատակության կա և մի թարգմանություն Գյոթեից («Անդորր»):

Մեծ չեն «Աղատության ժամեր» ժողովածուի զեղարվեստական արժանիքները: Նրա դերը գերազանցապես պատմական է. այդտեղ ղեկեղված բանաստեղծությունները հայ նոր պոեզիայի առաջին նմուշներից են, որոնցով հեղինակը երգել է իրական կյանքը, բնությունը, սերը, կարոտը հայրենի գյուղը:

* * *

Շահազիզի ստեղծագործական կյանքը սերտորեն կապված է «Հյուսիսափայլի» հետ: Որպես բանաստեղծ նա հասունացավ և կազմավորվեց «Հյուսիսափայլի» գաղափարական ազդեցության տակ: «Հյուսիսափայլը» այն օրգանն էր, որը սնեց բանաստեղծին գաղափարապես, տպագրեց նրան իր էջերում, ուղի հարթեց նրա հետագա զարգացման համար:

«Հյուսիսափայլը» առաջին անգամ 1858 թ.

փետրվարի համարում տպագրեց Շահազիզի դամբանական ճառը՝ Գեորգ Գեղամյանի մահվան առթիվ արտասանած: Գեղամյանը երևանցի էր, Խ. Աբովյանի աշակերտներից. նա ավարտել էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը և զուգահեռաբար զբաղվում էր գրականությամբ, կատարելով զանազան թարգմանություններ:

Շահազիզի ինչպես առաջին բանաստեղծությունները, նույնպես և այս դամբանականը գրված էր գրաբար: Ամսագրի խմբագրությունը այդ առթիվ տվել է հետևյալ ծանոթությունը.

«Բուն ճառը լուր լեզվի հնությամբը անհամաձայն լինելով «Հյուսիսափայլ» օրագրի ընդհանուր ուղղությունը և հոգուն, աղգային կենդանի լեզվով թարգմանած դրեցինք այստեղ միևնույն բանը»:

Զարմանալի չէր գրաբարի գործածությունը. դա հեղինակի գրական գործունեության սկիզբն էր:

Որպես բանաստեղծ Շահազիզը հանդես է եկել «Հյուսիսափայլ»-ի 1861 թ. ապրիլ ամսվա համարում՝ «Սևորակ աչեր», «Առաջին սեր», «Առաջին տեսություն», «Աղջկա երգ», «Գիշեր» բանաստեղծություններով: Նույն տարվա սեպտեմբերին տպագրվեցին «Հուսահատություն» և «Յանկություն» բանաստեղծությունները: Հաջորդ՝ 1862 թ. մարտի և դեկտեմբերի ամսատետրակներում լույս տեսան «Աղգային վիճակը» և «Առ գեղեցիկահի Կ»-ն: 1864 թ. մայիս ամսվա համարում տպագրվեց

հայտնի «Երազը», հռենիսին՝ «Պոետը», հուլիսին՝ «Սորհրդածություն բանաստեղծի», սեպտեմբերին՝ «Այն երազ էր» և «Ես տխուր եմ» բանաստեղծությունները:

1865 թ. Մոսկվայում լույս է տեսնում «Լեոնի վիշտը» և զանազան բանաստեղծություններ» ժողովածուն, ուր ամփոփված են բանաստեղծի գրեթե բոլոր գեղարվեստական երկերը:

Շահազիզի բանաստեղծությունները իրենց թեմատիկայով և զաղափարական բովանդակությամբ մի ամբողջություն են կազմում «Լեոնի վշտի» հետ: Վերջինիս առաջադրած առանցքային խնդիրներն ու հարցերը՝ պալքար խավարամոլության, ստրկության, կրոնական ֆանատիզմի, գրաբարի դեմ՝ հանուն լուսավորության, ժողովրդի ազատության և աշխարհաբարի հաղթանակի, կազմում են նրա բանաստեղծությունների նյութը: Բացի այս թեմաներից, բանաստեղծությունների մի մասը նվիրված է Հայաստանի պատմական անցյալի ու փառքի դրվատմանը, անուհեռե կրոնական բովանդակությամբ երգեր են, իսկ հիմնականը նվիրված է հայրենիքի ծանր վիճակին, նրա կարոտին, բնության հրապույրներին և ապա սիրային բանաստեղծություններ:

Պատմական բովանդակությամբ բանաստեղծություններում Շահազիզը, ինչպես Պատկանյանը, Բաֆֆին և մեր մի շարք ալլ հեղինակներ, ստրկացած և ավերված հայրենիքի ներկա վիճակին հա-

կազմում է անցյալի փառքը՝ ժողովրդի ազգային
ինքնագիտակցությունն արթնացնելու նպատակով:
«Հովիտ տրտմության» բանաստեղծության մեջ
հեղինակը սղում է գերության լծի տակ տառա-
պող հայրենիքը, որի ազատության համար Ալա-
րայրի ճակատամարտում հերոսաբար իրենց կյան-
քը զոհեցին նրա որդիները: Այժմ խավարով է
պատած Հայաստանը, անհետացել է նրա երբեմնի
փառքը: Բանաստեղծը ահազանդում է ժողովրդին,
որ եթե նա չսթափվի, ապա հեռու չէ այն օրը,
երբ կանհետանան նրա վերջին հիշատակներն իսկ:

Դու տեսնո՞ւմ ես քո տխուր վիճակ,
Դառն արտասուքի արժանի դավակ.
Դառն արտասո՛ւքի... չարագույժ ազնավ,
Անգեղ գիշատիչ քո ջուխտակ աչեր
Սրտձայր ճանկով շուտով կլիփրեն,
Եվ տարածելով հաղթական թևեր,
Հիշատակիդ հետքն անգամ կտանեն:

Երկի հիմնական իմաստը ամփոփված է վեր-
ջին տողերի մեջ, ուր, որպես հայության փրկու-
թյան, ինքնապաշտպանության ուղի, մատնացույց
է արված լուսավորությունը:

Եթե քո այդին դալար չծաղկե,
Թե չկանաչի ծառը գիտության,—
Ավե՛ր օրհասի քեզ պիտի ճնշե.
Այսպես է անբախտ հայիդ ապագան,
Անհա՛յր, անտերո՛ւնչ և թափառակա՛ն:

Պատմական բանաստեղծություններից է «Միջին Տիգրանը», որի մեջ Շահազիզը գովերգել է Հայաստանի ինքնակալության ուժը մարմնավորող Տիգրան «աշխարհակալին»: Բանաստեղծն այն միտքն է արտահայտում, որ Հայաստանը նվաճող հռոմեական մեծ զորավարներ Լուկուլոսի, Պոմպեոսի փառքն ու հաղթությունները ժամանակը մոռացության է մատնել, հաղթողի և հաղթվողի վախճանը նույնն է, հավիտենական ու անխուսափելի մահը հավասարեցնում է ամենքին և ամեն ինչ:

Բայց այժմ տեսե՛ք... բլուրներ բարձրացած,
Շիրիմներ ճնշված... այստեղ և հաղթող,
եվ տեր, և ծառա մի հողով ծածկված,
եվ Հա՛յն, և Պարթև՝ և Հռո՛մայացին
Նո՛ւյն անարգ կորուստը ընդունեցին:

Անարժեք են Շահազիզի կրոնական բանաստեղծությունները: Կրոնական մտածողությունը որոշակի տեղ է գրավում Շահազիզի աշխարհայացքի մեջ և այն անդրադարձել է հեղինակի թե՛ հրապարակախոսական և թե՛ գեղարվեստական ստեղծագործություններում:

Շահազիզի պոեզիայի հիմնական լարը հայրենասիրությունն է: Սերը դեպի հայրենիքը, անձնագոհության գաղափարը հանուն հայրենիքի, նրա ստեղծագործության մշտական մոտիվներն են: Շահազիզը պատկերում է հայրենիքի ստրկացած վիճակը, ժողովրդի քաղաքական անապահով կյանքը, իրավական ու նյութական ծանր պայմանները:

Բանաստեղծը մերթ անողոք և սուր գրչով քննադատում է լուր ազգի տգիտությունը, խափարամոլությունը, մերթ պարսավում է կեղծիքն ու խաբեությունը, շահագործումն ու ստրկամտությունը, կոչ անելով ազատության պայքարի, որին ղինվորագրվում է և ինքը:

Շահաղիզի հայրենասիրական բանաստեղծությունները միայն լաց ու սուգ չեն ազգի կորուստը ողբացող և կամ սին հպարտություն՝ հայրենիքի երբեմնի փառքի համար: Շահաղիզը իրականության հետ ընթացող, իրականությունը տեսնող և ճանաչող քաղաքացի էր: Նա տեսնում էր իր ժողովրդին սպառնացող վտանգը՝ տգիտություն, նախնադարյան խավար, նախապաշարումներ, բարքերի անկում, նյութապաշտություն և աշխատում էր փրկել նրան կորստյան անդունդից: Ո՞րն էր հայի փրկության խարիսխը: Լուսավորությունը: Լուսավորությունն էր, որ ժողովրդին արթնացնելու էր դարերի ընդարձակությունից, խավարից: Լուսավորությունն էր, որ հային ղինելու էր հոգեպես և ազատելու նրան մտավոր ստրկության կապանքներից, որոնք ճնշել էին և կաշկանդել մարդկային մտքի ամեն մի խոյանք:

Հառա՛ջ հայություն, հառա՛ջ ազգություն,
Լուսավոր դարուս գաղափարներով.

Ատի՛ր ազգ անգին, խավար տգիտություն,

Մի՛ տար քեզ խաբել խարդախ խոսքերով:

Կորի՛ր դու խավար և տգիտություն,

Կորե՛ք դարձելի ձեր ծնունդներով.—

Մինչև ե՞րբ մեր վրա այս վայրենություն
Պիտի բռնանա գոռոզ ճանկերով:

Միայն այսպիսով կարելի էր հասնել «կամքի»
ու «աշխատության» ազատության, «լույսի» և
«ճշմարտության», հալածելով նենգություն, նա-
խանձ և կեղծիք:

Իրավունքն ազգի զարկել են գետին,
եվ սուտ հայությամբ դիմակավորված,
Փոսեր են փորում բարի մարդերին:
Առողջ մտածողն — աղանդավոր է:
Ճշմարիտ խոսքն — հայի ոխերիմ:

Հայության մեջ առաջացել է նյութապաշտու-
թյամբ, ոսկու մարմաշով տառապող, վաճառված
մի սերունդ, որի սրբությունը պղծված է, հավա-
տը կաշտաված: Հասարակական կյանքի կորստարեր
այս չարիքների հանդեպ անհողդողդ կամքով ու
պալքարի վճռականությամբ լցված, կանգնած է
բանաստեղծը, պտտրաստ՝ ազատության սուրբ-
դադափարի համար զոհելու իր անձը:

Ո՛վ ազատություն, սուրբ աքսորական,
Զոհելու եմ քեզ իմ անձս հավիտյան:
Թո՛ղ ստրկացած դարերով մարդիկ,
Դնեն իմ վերա նգովքի կնիք:

Թո՛ղ սրե չար լեզուն անդոր թշնամին,
Թափելով վերս թունավոր սլաքներ.
Ես պիտի խնդրեմ, ա՛ղգ իմ լալազին,
Ոտնակոխ եղած քո իրավունքներ:

Կարգալով Շահազիզի կրքոտ և վճռականու-
թյամբ հագեցած այս տողերը, հիշում ենք Մ. Նալ-

բանգյանի հայտնի «Աղատն Աստված» բանաստեղծութիւնը, որի ազատատենչ ոգու ազդեցութիւնը դգացվում է ո՛չ միայն երկի գաղափարական բովանդակութեան, այլև նրա ընդհանուր տրամադրութեան վրա: «Աղգային վիճակը» Շահազիզի հայրենասիրական լավագույն բանաստեղծութիւններից մեկն է և՛ իր հասարակական արժեքով և թե՛ արվեստով: Երկը հազեցած է մեծ պաթոսով, վարակիչ արամադրութեամբ, ընթերցողն անմիջապես հաղորդակից է դառնում հեղինակի գաղափարներին և հուլիներին: Ուշագրաւ է հատկապես զրական լեզվի հղկվածութիւնը, զերծ՝ գրաբարյան արտահայտութիւններից և սճերից:

Նույն ուժգնութեամբ են հնչում Շահազիզի «Անուսումնասիրութիւն» բանաստեղծութեան այն տողերը, որոնցով նա ողջունում է գիտութիւնը, որպէս «լուսո արարչի»: Գիտութիւնը այն կենսական ուժն է, որով զինված հեղինակը աշխարհ է թեակոխում: Նա զորավիգ է բանաստեղծին՝ չարին դիմադրելու, հոգին չկաշառելու, կյանքին հրպարտ ու համարձակ աչքերով նայելու համար:

Տեսնելով կյանքի անարդարութիւնները, բազմաթիւ արատաւոր, խոցելի կողմերը, բանաստեղծն իր քնարը նվիրում է հասարակական գործին: Շահազիզը հասաւ այն բարձր գիտակցութեան, որ գրողը կոչված չէ երգելու իրականութիւնից կրտրված, մեղկութեամբ հազեցած վերացական հույզեր: Նա կյանքի հետ կապեց բանաստեղծին, և

Նեկրասովի հայտնի նշանաբանը՝ „Поэтом можешь ты не быть, но гражданином быть обязан...“, դարձրեց իր ստեղծագործության նշանաբանը՝ «Նախ քաղաքացի և ապա պոետ»։ Այսպիսով, Շահազիզի հրգերը ստանում են քաղաքացիական բովանդակություն։

Շահազիզի գրական կյանքը զուգադիպեց 60-ական թվականների սկզբներին, երբ Ռուսաստանում ճորտատիրական կարգերը, միապետական ամբողջ սիստեմը սուր քննադատության և գրոհի էր ենթարկվում աճող դեմոկրատիկ ուժերի կողմից՝ հանձինս Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և նրանց զինակից Նալբանդյանի։

Նոր բովանդակություն և նոր շունչ էր ստացել գրականությունը։ Առաջ էր հիկել գրողների և քննադատների մի նոր, երիտասարդ սերունդ։ Փոխվել էին գրական-էսթետիկական ըմբռնումներն ու պահանջները։ Ռուս առաջավոր գրականության կենտրոնը դառնում էր ռուս մոսկիլը, աշխատավոր ժողովուրդը, որի տառապանքի ու վշտի հառաչանքներովն էին լցված Ռուսաստանի անծալրածիր տափաստանները. լուրացվում էր նրա վաստակը, շահագործվում աշխատանքը, ունահարվում մարդկային արժանապատվությունը։ Պոեզիայի մեջ հանդես հկավ Նեկրասովը իր ձաղկող, մերկացնող երկերով, որոնք ճորտատիրական Ռուսաստանին ուղղված քաղաքական սուր մեղադրանքներ էին։ Նույն ուղղությունն էր իշխում

և գրականության մյուս բնագավառներում, հատկապես հրապարակախոսության և քննադատության մեջ՝ Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի երկերում:

Ի՞նչ արձագանք ստացան դարաշրջանի բնորոշ այդ ձգտումներն ու գաղափարները Շահազիզի պոեզիայում:

Թափանցելով հասարակական կյանքի մեջ, գառնալով նրա գործունյա անդամը, Շահազիզը հրաժարվեց ստեղծագործական իր անցած ուղուց. նա ապրեց ներքին մեծ բեկում, որի ամենավառ երգը հանդիսացավ «Բռնավոր Սուլթան»-ը: Բանաստեղծության բովանդակությունը կապ չունի վերնագրի հետ. սուլթանը որպես բռնության սխմվող հակադրված է երկի հիմնական գաղափարին՝ ազատությունը:

Բանաստեղծության առաջին մասը ամառույին երեկոյի նկարագրություն է: Աստիճանաբար հանգչում է ոսկեզօծ մայրամուտը, կապուտակ երկնակամարի վրա փայլելում են աստղերը: Ծաղիկները միմյանց հանգիստ են շշնջում: Անդորր գիշերի հակապատկերն է պոետի փոթորկված հոգին. նա խորատակում է բռնի կապանքների շղթան: Բնության այս փոքրիկ պատկերը հեղինակի ներքին վերափոխման սխմվոյիկ ներածությունն է: Փոխվել են բանաստեղծի ըմբռնումները իր կոչման ու գերի մասին: Նա թեակոխում է նոր աշխարհ. անհատական զգացումները տեղի են տալիս հասարակական պարտավորություններին: Նա անկա-

բող՝ է լուել, երբ ազգը առաջադրւում է բռնութեան,
խեղճութեան ճիրաններում և կամ երգել «քաղցր»
«մեղկոտութեան» ու «անգործութեան», «գինին»
ու «սերը»: Նա հրաժարւում է ալք սխալ գաղա-
փարներից, նա «բաժանորդ» է ազգի ցավերին,
նրա կոչումն է՝

«Նախ քաղաքացի և ապա պոետ»:

Եվ այժմ պոետն այլ երազում չէ,
Որ նա որդի էր վերին երկնքի,
Եվ նորա հոգին պիտո է լուս,
Ուր բան էր վատթար խեղճութեան ազգի.
Եվ թե ծնել էր, որ լինի թարգման
Քաղցր մեղկութեան և անգործութեան,
Եվ, ոգևորված, քնարի հետ խոսեր,
Երբ նա երգում էր միայն գինի և սեր,—
Ո՛չ, նա փոխել էր այդ ծուլ գաղափար,
Նա բաժանորդ է ազգի ցավի հետ,
Եվ ահա այս խոսքս թնդում է Քնար.
Նա՛խ քաղաքացի, և ապա՛ պոետ:

Շարունակութեան մեջ բանաստեղծը ազատու-
թեան գաղափարով ոգևորված, նշույթ է կարդում
ստրկութեան և երանի տալիս նրան, ով սուրբ
ձեռքին, անձնվիրաբար նվաճել է ազատութեանը:
Բայց ի՞նչպես հասնել ազատութեան: Միայն գի-
տութեան միջոցով: Գիտութեանն է բարձրացնելու
ժողովրդի քաղաքական ինքնագիտակցութեանը և
ապահովելու ազատութեան հաղթանակը.

Բայց երբ ազգերը ուսում կստանան,
Երբ այդ առողջ մարդն կսկսե՛ մտածել, —
Այն ժամանակը կարող է միայն

Աղաաությունը յուր գանձը հանել.
Այն ժամանակը միայն մարդկություն
Կարող է կյանքը իմաստասիրել
Եւ հասարակի բարեբախտություն
Անխախտ հիմքերով արարչագործել:

Ինչքան որ խիստ է և անողոր իրականության քննադատությունը Շահազիզի բանաստեղծություններում, նույնքան և բնորոշ է հեղինակի օպտիմիզմը ապագայի հանդեպ: Հումանիզմի բարձրը զգացմունքներով լցված, նա մարդուն ցանկանում է «բարի» վիճակ, որին նա կհասնի ապագայում:

Շահազիզը անցած է համարում այն շրջանը, երբ իր քնարը անհոգությամբ երգում էր միայն սեր և գեղեցկություն: Նա հրաժարվում է այդ շրջանից, ողջունում իրական կյանքը և քրտնաջան աշխատանքը: Ազգի վիշտը, տառապանքը, լացն ու սուղը ներշնչում են հեղինակին նվիրվելու «հասարակաց պիտույքին»:

Առավել հարուստ է «Պոետ, նյութապաշտ և քաղաքացի» բանաստեղծության բովանդակությունը: Հասարակության երեք տարբեր ներկայացուցիչներ՝ բանաստեղծը, նյութապաշտ հարուստն ու աշխատավոր քաղաքացին ներկայացված են իրենց հասարակական դերով ու արժեքով: Բանաստեղծը արհամարհանքով ու ատելությամբ է լցված դեպի ընչաքաղց հարուստը, որի հոգին «մեռած է», միտքը «գոսացած», «կեղծավոր» է և «խտվարասեր», մինչդեռ ինքը զգացմունքներ

րով զեղուն սլանում է մերթ դեպի կարկաչահոս
առուն, մերթ դեպի վետվետուն ալիքները: Հայտ-
նըլում է քաղաքացին, նա հասարակական կյան-
քից դուրս է համարում և՛ անբովանդակ թափա-
ռող պոետին և՛ շահամու հարուստին: Նա ցույց է
տալիս մի նոր աշխարհ, աշխատանքի, ազնիւ
վաստակի աշխարհ, որի շահերի պաշտպանությանը
պետք է նվիրվեն բանաստեղծի երգերը և միայն այս-
պիսով նա կարող է դառնալ «անդամ ազգի»:

Ե՛կ, Պոետ, քաղաք, այնտեղ դո՛րժ դործիր,
Հասարակի բախտն ու օգուտն երգի՛ր.

Դու այն ժամանակ անդամ ես ազգի.

Եվ արժանի ես մեր սուրբ հարգանքի: —

Այս Բաղաքացին ասաց պոետին,

Շտա՛յլ քայլերով զնաց յուր գործին:

Շահազիզի քնարը ձաղկող է և սուր, երբ նա
ներկայացնում է հասարակական կյանքի չարիքն
ու ապականությունը՝ ստրկություն, կեղծավորու-
թյուն, խաբեություն, փողամուլություն, որոնք
այլանդակել են մարդկային հոգին ու միտքը: Բա-
նաստեղծ-քաղաքացին կոչված է պալքարելու այդ
չարիքների դեմ հանուն արդարության և հալոնե-
նիքի: Նա լինելու է հոգով բարձր, հեռու կյանքի
ճահճից, վաղանցուկ փառքի ու հարստության
հրապուրանքից, ալլապես նա կբարձրանա անար-
գանքի ոլունին:

Մի՛ մեծարիր դու կուռքը հարստի.

Ոտնակո՛խ արա, փշրի՛ր և անց կաց.

Տաճար Աստուծո — հողին Պոետի,
Թե մամոն իշխեց — դժողբ է պղծաց:

Շահազիզի ստեղծագործության մեջ արտացոլվել է 50—60-ական թվականների հայ հասարակական կյանքում տեղի ունեցող հնի և նորի պայքարը:

Հին գաղափարներն ու հասկացությունները իրենց տեղը զիջում են նորին: Հինը ապրել է իր դարը, նա ալլեա անկիք չունի: Կառչել նրանից, պաշտպանել նրան, նշանակում է կյանքը թողնել անշարժության, լճացման մեջ: Անհետացող հին սերնդին փոխարինում է նորը՝ երիտասարդ, առողջ, թարմ և առաջավոր ուժը, որի հետ է կապված հայրենիքի փրկության հույսը: Նա մարմնավորում է վերածնվող հայրենիքի՝ «Մանուկ Հայաստանի» գաղափարը: Վերջինս նոր չէր: Շահազիզից առաջ Պատկանյանը «Հայ պատանին երգում է» բանաստեղծության մեջ ցույց է տվել «Մանուկ Հայաստանը» ստեղծող, «ջլուտ ձեռքերով», «անվհեր» սրտով և «ազնիվ խորհուրդներով» երիտասարդությունը, որը պատրաստ է սևփական ուժերով թոթափել ստրկության լուծը: «Մանուկ Հայաստանի» գաղափարին հակադրվում էին հնամուլության և նախապաշարումների խավարով մթաղնած «ծերերը». նրանք Հայաստանի վերականգնումը համարում էին միայն «երազ»:

Կեցցե՛ Հայաստան, որ երազական
կարծում են ծերերն, իրօք չէ՛ ալլալես.—

Մեր հայրենին դեռ չէ չվառական,
Քանի որ ունի քաջ որդիք մեզ պես:

Պատկանյանի երիտասարդութունը զինված է
«հրացանով» ու «բահով»: Նա պատրաստ է կռվել
և անձը զոհարել:

Շահազիզի մոտ նույնպես հայրենիքի ազա-
տության համար մղվող քաղաքական պայքարի
հեռարանը և ուժը երիտասարդութունն է:

Ինչպես Պատկանյանը, Շահազիզը ևս քաղա-
քական պայքարի կոչ է անում, «սրով», «հրացա-
նով», «քլունդով» և «կացնով» է ուղում հարժեկ
դժվարին ճանապարհը, քանզի «արգելքները» և
տեղից շարժել «Մանուկ Հայաստանը»:

Քշտիր կռներդ, կտրիճ աննման,
Ա՛ն սուր, հրացան, քլունդ ու կացին,
Դժվար ճանապարհն անցիր անասան.—
Աճ ու ձախ քանդիր, թե որ արգելք կան.
Ահա նորածին և մանուկն եկավ՝
Սուրբ ազատության տաճարին ընծա.
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:

Տառապանքներով լի է պայքարի ուղին. կար-
միրի կրիտիկն «գարնանային ծաղկազարդ դաշ-
տերն» ու «ծովի ալիքները», բայց կգա ժամանակը
հաղթական երգի, երբ «նահատակի սուրբ ոսկորնե-
րից» «նոր լույս կծագի աշխարհիս վրա», մահից
կյանքի կոչելով մարդկությանը, գերությունից
ազատելով անճար թշվառին: Այն ժամանակ

«կիսալիի արևելքի նոր արշալույսը», «կչքանա հնությունը», «նորոգման ոգին կապեալ կյանք», նոր դործը թողնելով նոր սերնդին: Այսպես կծնվի ազատության մանուկը՝ սիրով ուր նորածին հայրենիքի.

Եվ այսուհետև առաջ անդադար:
Ահա լուսածին մանուկն եկավ,
Գեղեցիկ՝ որպես ազատն ինքն աստված,
Արարիչ բաղկով շինել սկսավ
Ազգապահության հրաշալի շինված:

Այս բանաստեղծության հղացման անմիջական դրդապատճառը 1890 թ. հունիսի 6-ին Կարինում և հուլիսի 15-ին Պոլսում տեղի ունեցած արյունալի դեպքերն էին: Սկզբում «Զոհերի» տըպագրությունը արգելվեց և մինչև իսկ չթույլատրվեց կարդալու հեղինակի հոբելյանական հանդեսին: Միայն 19 տող տպագրվել է 1893 թ. «Հորեկյանի տարեդարձ» ժողովածուում, իսկ ամբողջությամբ լույս է տեսել «Մշակում», 1908 թ. բանաստեղծի թաղման նկարագրության հետ միասին¹:

Ազատագրական պայքարի թեման Շահազիզի տեղծագործության մեջ հնչել է ուժգնությամբ և տարբեր երանգավորումներով: Բանաստեղծը երգել է և այլ ժողովուրդների՝ ինչպես օրինակ, իտալացիների ազգային-ազատագրական պայքարը՝ Նա համակրանքի ջերմ, սրտաբուխ² տողերով է

¹ Սմբ. Շահագիզ, Երկեր, 1947, էջ 221:

ողջունել հայրենասեր խալուհիներին, որոնք
անձնուրաց մարտեր էին մղում հայրենիքը ստոր-
կռթման շղթաներից ազատագրելու համար: Շա-
հազիզը անեծքով է հիշում Իտալիան նվաճող
Բուրբոնին և հավատով լցված դեպի պայծառ
ապագան, իր տողերը նվիրում է Իտալիային՝ իբ-
րև անհավատալի ազատութեան այն սուրբ գաղա-
փարի, որով տոգորված է և հայը

Իտալիա', դու զորավոր,—
ե՛վ կեցցե՛ն քո զավակներ,
Իտալիա', ես հոգևոր
Բերում եմ քեզ իմ տաղեր:
Ե՛վ հայի մեջ կա կենդանի
Ազատութեան արձագանք,
Ե՛վ թո՛ղ չասեն, որ հայն չունի
Ո՛չ ազատ կամք և ո՛չ կյանք:

Հայ ժողովուրդը ևս բռնեց ազատութեան
պայքարի ուղին: 1862 թ. Զելթունը ապստամ-
բութեան դրոշ բարձրացրեց սուլթանական բռնու-
թյունների դեմ: Զելթունի մարտերը ժողովրդա-
կան ընդվզման ու խիզախութեան փայլուն ցույցեր
էին: Նրանք ցնցեցին ամբողջ հայ իրականութունը
և լայն արձագանք գտան թե՛ գեղարվեստական
գրականութեան մեջ և թե՛ մամուլի էջերում: Ապս-
տամբութեան դրվագները ոգևորեցին բազմաթիվ
հեղինակների, որոնք իրենց ստեղծագործութուն-
ներում նկարագրեցին հերոսական փառքով նահա-
տակված հայրենիքի քաջ զինվորներին: Մ. Պե-

շիկթաշլյանը բանաստեղծությունների մի շարք նվիրեց Զեյթունի հերոսամարտին՝ «Հայ քաջորդին», «Մահ քաջորդվուն», «Թաղումն քաջորդվուն» և «Հայկուհին», որոնք հայ պոեզիայի դահարներից են:

Որպես մեծ հայրենասեր Շահազիզը նույնպես երգեց զեյթունցիների հերոսամարտերը: Հեղինակի տեսադաշտից չվրիպեցին այն ստոր դավերը, որ զեյթունցիների շուրջը նյութում էին կաթուղի քարոզիչները: Վերջիններս նկատի ունենալով զեյթունցիների ծանր վիճակը, ամեն կերպ փորձեցին նրանց ձուլել կաթուղիության հետ, հայությանը ամբողջությամբ ենթարկել Հոռմի պապի գերիշխանությանը:

Զեյթո՛ւն, սրբազան մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների Հայ ազգ բնակիչ,
Արթո՛ւն կաց.—գիտե՞ս, վերագ է գալի
Եզվիտ ամբոխը, գայլեր գիշատիչ:
Նոքա յուրյանց հետ շատ ոսկի ունին,
Նոքա կշռում են դորանով կրոն...
Ականջ չգնես գետնաքարշ լեզվին,
Թքի՛ր լրտեսին,— գինվորվի՛ր Զեյթո՛ւն:

Շահազիզի այս տողերը էպոխա բնութագրող և խիստ ակտուալ քաղաքական տաղնապի տհաճանքեր էին և ոչ գավանաճի, կրոնական նեղ հասկացողությունների վեճեր: Նա կաթուղի քարոզիչների գործունեության մեջ տեսավ հայ ժողովրդի ազգային միասնությանն սպառնացող

վտանգ, որի դեմ սուր և հետևողական պայքար էր վարում հայ առաջավոր մտավորականութիւնը՝ Մ. Նալբանդյանի, Մ. Պեշիկթաշլւյանի, Հ. Սվաճյանի ղեկավարութեամբ: Պեշիկթաշլւյանը հասարակական պայքարին ձայնակցեց և իր ստեղծագործութիւններով: Մեր գրականութեան փայլուն գոհարներից է իր հասարակական բովանդակութեամբ և բանաստեղծական խոսքի ներգործող ուժով «Եղբայր հմք մեք», որն իրավամբ ժամանակին հայ ժողովրդի հղբայրութեան գաղտնիարի հիմնը դարձավ:

«Եղուիտներ և Զելթուն» բանաստեղծութիւնը արժեքավորվում է հատկապէս իր հասարակական-քաղաքական բովանդակութեամբ: Բացի Զելթունի հերոսամտերի ներբողումից, ուշագրավ են բանաստեղծութեան այն տողերը, որոնցով հեղինակը ողջունում է ազատութիւնը զենքով նվաճած ժողովուրդներին՝ խալաքիներին և հույներին:

Բայց ահա շատ մոտ արձակ ասպարեզ
Բացվում է աչքիս: Խոնում են ազգեր
Ուրախ երգերով. նոքա ուրդերեւ
Զդիտեն, ի՞նչ է կապանք, շղթաներ...
Ազատ են նոքա... և ամենայն բան
Շնչում է միայն սուրբ ազատութիւն:
Եվ չէ երևում բռնութեան նշան...

Միշտ չէ, որ Շահազիզը մարտական պաթոսով պայքար է հայտարարել թշնամիների, օտար նրվաճողների, ժողովրդի ներքին հարստահարիչների

ու կեղեքիչների դեմ: Նա ունեցել է և «նահանջի» պահեր, երբ ներողամտության և քրիստոնեական անհիշաչարության խոսքեր է ուղղել յուր թշնամիներին: Մենք նկատի ունենք հատկապես «Երգ մեռանող հայրենասիրի» հաչուկված երգը և «Իմ վիճակը» բանաստեղծութունը, որոնցից առաջինի հղացման, գեղարվեստական մշակման գաղափարը գալիս է ռուսական պոեզիայից: Այս մասին Յուր. Վեսելովսկուն ուղղած նամակում նշելով իր կրած ազդեցութիւնները ռուս գրականութիւնից, Շահազիզը գրում է.

«Պատահականութեամբ կարդացած Դոբրոլյուբովի «Милый друг, я умираю» բանաստեղծութունը ներշնչեց ինձ գաղափարը սեփական բանաստեղծութեան, որն ինձ մոտ սկսվում է համարյա ճիշտ այնպես, բայց հետո կրում է տարբեր բնույթ, անմիջականորեն կապվում է հայերի ճակատագրի հետ»¹:

Փաստը ուշագրավ է իբրև ապացույց ռուս վաթսուհակնների հետ ունեցած Շահազիզի զբոսական կապերի:

Ներշնչվելով Դոբրոլյուբովից, ոգեշնչված նրա անձնուրաց հայրենասիրութեամբ, Շահազիզը, սա-
այն, բանաստեղծութեան առաջին քառատողում ար-
տահայտել է խաղաղ հոգով աշխարհից հեռանալու և

¹ Ю. Веселовский, Русское влияние в современной армянской литературе, Москва, 1909, էջ 14—15.

Թշնամուն ներելու քրիստոնեական բարոյախոսութիւնն¹ :

Ազնի՛ւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ Թշնամիքս ես օրհնում եմ, —
Օրհնո՛ւմ եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգի՛ն ընկեր,
Չգնահատած ոչ որեւց.
Բայց հաւաստյալ անձնանկեր
Ազգիս մշակ կհաշվիմ:

Ազնի՛ւ ընկեր, չմոռանաս.
Անդալաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա՛ և դու նույն շավղով:

Բանաստեղծութիւն մլուս քառատողերում
ներբողված է հայրենիքի անդալաճան սիրո և հա-
նուն հայրենիքի անձնադոհութիւն գաղափարը:

¹ Ավելորդ չենք համարում ստորեւ ամբողջութեամբ
մեջ բերել Դորրոյութեան բանաստեղծութիւնը, որպէսզի
պարզ լինի, թե գաղափարական ինչ վերամշակման է են-
թարկվել այն Շահադիդի կողմից:

Милый друг, я умираю
Оттого, что был я честен;
Но зато родному краю
Верно буду я известен.

Милый друг, я умираю,
Но спокоен я душою...
И тебя благословляю:
Шествуй тою же стезею.

Նույն բարոյախոսութիւնն է գրված «Իմ վիճակը» բանաստեղծութիւնն հիմքում: Հասարակական պայքարում բանաստեղծի նշանակեալները որոշ են, նա կուլում է «անխիղճ մարդու» «սե գործի» դեմ և ալս պատճառով փշոտ է նրա ճանապարհը, բայց ինքը «զինված» «ճշմարտութեամբ», աներեր և հաստատ քայլերով ընթանում է դեպի առաջ:

Ես գրում եմ կշտամբելով
Անխիղճ մարդի սե գործեր.
Բոլոր կարծիքն պարսափելով,
Վկայել կամիմ նորան սեր:

Եվ փշոտ է իմ ճանապարհ.
Ամբողջ դժոխք և բողոք
Ինձ լարում են կորուստ վատթար.
Ինձ բարեկամ—և ո՛չ սք:

Հաստատ ոտով ես գնում եմ,
Ճշմարտութեամբ զինվորված,
Անկեղծ քնարով ես օրհնում եմ
Եվ թշնամիքս և աստված:

Պայքարող մարտիկի վճռականութիւնը անսասան է հեղինակի մեջ, սակայն վերջին տողերում հանկարծ օրհնում է թշնամուն: Այսպիսով, երկը զրկվում է նախ յուր իմաստից, որովհետև վերանում է հակառակորդ կողմերի հակասութիւնը, հետեաբար և՛ պայքարը, երկրորդ՝ ստացվում է տրամաբանական հակասութիւն. օրհնել թշնամուն և պայքարել նրա դեմ:

Շահագիղի ստեղծագործութիւնն մեջ տիրապե-

տող չին ալս տրամադրութիւնները, սակայն վերկալում են նրա աշխարհայացքի որոշ տատանումներն ու հակասութիւնները:



Բանաստեղծ-քաղաքացին, որի ստեղծագործութիւնն հիմնական բովանդակութիւնը ազատութիւն գաղափարն է, հայտատարիմ մնալով իր կոչման, սիրո ու բնութիւնը կրկնում նույնպէս հանդէս է գալիս որպէս ազատութիւն և հայրենիքի կրօն:

«Գիշեր» բանաստեղծութիւնը դարնանալին բնութիւնը դիտելից պահերից մեկի գեղեցիկ նկարագրութիւնն է՝ աստղադարձ ջինջ կրկինք, անուշաբույր, ամբրոսական ծաղիկներ... Բնութիւնը հմայքով ու վահութիւնամբ ներշնչված, բանաստեղծն անխռով և մաքուր սրտով կրկնում է ազատութիւն և հայրենիքի սեր:

Սիրո՛ւն պատկեր: Պարզ գիշեր էր: —
Եվ օդեղեն ովկիանում
Փայլում էին անթիվ աստղեր,
Եվ ո՛ւրախ էր սիրտըս դարկում:

Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշոթիւն էին բուրբուռ,
Եվ երկնքի ցող կենարար
Բնութիւնն էր զովացնում:

Եվ ես անխռով կրկնում էի,—
Եվ իմ երգըս խիստ մաքուր էր,
Ազատութիւն էի կրկնում,
Հայրենիքի պարծա՛նք ու սե՛ր:

Աղատութիւնն ըստ Շահազիզի այն սուրբ
գաղափարն է, այն ստեղծարար ուժը, որն իր մեջ
մարմնավորում է կյանք և զորութիւն. նա աղ-
բյուր է լուսի, նա անկաշատ է, նա է փրկութիւնը
մարդկության.

Աղատութիւնն է կյանք և զորութիւն,
Թագաւոր, իշխան և հարստութիւն,
Աղատութիւնը — զուստըր սրբության,
Փրկիչ աղգերի, աստված մարդկության:

Շահազիզի ըմբռնմամբ աղատութիւնը միայն
օտարերկրյա բռնության լծի թոթափումը չէր:
Նա տեսնում էր, որ ժողովուրդը շահագործվում է
նաև իր ազգի «առաջնորդների», հարուստների ու
հոգևոր պետերի կողմից, որոնք զրկում, լուրաց-
նում էին նրա վաստակը ամենադաժան ձևերով:
Ծանր էր և հասարակության բարոյական վիճակը,
վերացել էր արդարության հաղթանակի հավատը,
իշխում էին սուտն ու կեղծիքը: Հոգևոր առաջ-
նորդները կեղծ բարեպաշտության դիմակով ծած-
կել էին իրենց այլանդակ էութիւնը, ազգադավ
դործերը.

Տխուր է, եզրայրբ, տխուր է մեր դար.
Հայի վիշտերից և անարգանքից
Թառամել եմ ես, նա, որպես թշվառ,
Աղատվելու չէ երբեք կապանքից:
Նորան յուր հովիվք, յուր առաջնորդներ
Մինչ հոգևոր ժամն պետք է կեղեքեն,
եզ կզվիտաւան, անփառք թակարդներ.
Օտարի առջև այդ խեղճին դնեն:

Հովիվ դառնալով ազգին հոգևոր,
Մի սարսափելի նպատակ ունին.
Ուրախ մոլեռանդ, դահիճ թունավոր,
Զրկել, պատառել յուր ժողովրդին,
Եվ բողոք կարդալ, և դավաճանել,
Թե այդ զրկյալքը կամեին խոսել:

Ուշադրամ կն Շահազիզի այս սուր մերկացումները, որոնք ուղղված էին ո՛չ միայն ժողովրդի «առաջնորդների» ու հոգևոր հովիվների դեմ, այլ ողջ ժամանակաշրջանի դեմ ընդհանրապես: Բանաստեղծը գալիս է այն ծանր կզրակացության, որ քանի դեռ հասարակութունը ընկած է բարոյական ճահճի մեջ, քանի դեռ թաղավորում են ժողովրդին կեղեքող, զրկող, «պատառող» հոգևոր առաջնորդները, նա կաշկառեղված է և անկարող հասնել ազատության:

Ժողովրդի հոգեկան նկարագրի, բարոյական հասկացությունների ու կենցաղի հարցերը մեր գրականության մեջ սկսել էին արծարծվել դեռևս անցյալ դարի կեսերից: Պատկանյա՞նը մեկն է՝ ը այն հեղինակներից, որն իր տաղանդի ամբողջ զորությամբ դիմակազերծ արեց բոլոր տեսակի «կոլոսիաներին», «տերտներին», «սոր սոյ ազգասերներին» և հասարակության այն ցեցերին, որոնք դաժան հարստահարիչներ էին, աշխատանքի տքնաջան վաստակը յուրացնող, միաքը բթացնող և ազատությունը ճնշող:

Սերը գեպի հայրենիքը Շահազիզը արտահայտել է ամենաջերմ զգացմունքներով: Ուգի Հայաս-

տանի՞մ բանաստեղծության մեջ նա հայրենիքը
մարմնավորել է չքնադ կուլսի կերպարանքով, կը-
դել նրա անմեղության, մաքրության, քնքշության
թովչանքները. նա սուրբ է և նվիրական, գերա-
զանց՝ իր կյանքում հանդիպած բոլոր կանանցից,
որոնք անհետացել են նրա հոգուց և մնացել
միայն որպես սովերներ:

Ո՛վ կույս մանկագեղ, կո՛ւյս արեւելքի,
Հրեշտակ սիրո—բայց ո՛չ թեպօր.
Մի հատիկ գոհար փշրված թաղի,
Կույս՝ ես իմ հոգու, տաճա՛ր փառավոր:

Անմեղութենով փայլում ես պայծառ,
Որպես շուշանը հայոց գաշտերի,
Քեզ այդ շուշանից, հոգո՛ւս սիրահար,
Հյուսում եմ պսակ անթառամելի:

Այս բանաստեղծությունը Շահազիզի հայրենա-
սիրական վառ զգացմունքների և ստեղծագործա-
կան կարողությունների լավագույն արտահայտու-
թյուններից մեկն է: Նա գույների նրբություններով,
բանաստեղծական խոսքի վարպետությամբ ու գե-
ղեցիկ համեմատություններով երգել է հայրենիքը:

Շահազիզն իր հայրենասիրական երգերում
համարձակ է և մարտական: Քննադատության
ոգին հնամոլության, խավարի, ստրկության և շա-
հագործման դեմ անողոք է ու խիստ:

Իրենց գեղարվեստական արժանիքներով
նրանք ստեղծագործական հասունություն ապ-
րած հեղինակի գրչի արգասիք են: Զգուլիորեն
հղիված է հեղինակի լեզուն, վերացված է նախ-

կին պարզունակությունը, որը հատուկ էր Շահազիզի սկզբնական շրջանի ստեղծագործություններին:



Շահազիզի հայրենասիրության և ազատության թեմաներով դրված բանաստեղծությունների հետ սերտ առնչության մեջ են հայրենի բնության և մոր կարոտին նվիրված երգերը: Ծնված և մանկության վաղ տարիներին գյուղում ապրած ու գյուղական կյանքի հետ բաղմապիտի հետաքրքրություններով կապված ապագա բանաստեղծը հանկարծ կտրվում է հարազատ միջավայրից, մերձավորներից և ընկնում միանգամայն անծանոթ աշխարհ: Արարատյան հովտում սնված մանուկի համար օտար էր Մոսկվան իր կուլտուրայով, լեզվով, բարքերով, կենցաղով և վերջապես հյուսիսի խիստ կլիմայով: Այս բոլորի հետեանքով, Մոսկվայում պատանի Շահազիզն ապրում է կարոտի և սիրտ բուռն հույզեր: Թե ինչքան մեծ էր բանաստեղծի սերը գեպի իր հայրենիքը և ինչքան հզոր էր նրա ստեղծարար զորությունը Շահազիզի համար, պարզվում է նրա հետևյալ տողերից:

«...Հայրենի հողը ու ջուրը ամհնակարող միջոցներն են, այո՛, և դրդողներ բանաստեղծական գույների ու բազմազան հեղեղման»¹:

¹ Գրականության և արվեստի թանգարան, Եր. Շահազիզի ֆոնդ, III բաժին, № 193:

Շահագիլը երկարատև բացակայությունից հետո, 1873 թ., վերադառնում է Աշտարակ, հատկապես ժերոնի մորը տեսնելու համար: Հանդիպումը հարազատ վայրերի հետ խիստ հուզիչ էր ու սրտառուչ: Այդ առթիվ Մեկք. Փանյանին ուղղած նամակում բանաստեղծը գրում է.

«Թե ինչպես եղավ իմ մուտքը մեր մայրենի աշխարհը, մնում է պատմել ինձ երես առ երես, երբ աստված կհաջողե հասնել այդտեղ, միայն այսօրվա ունիմ ասել քեզ, որ իմ մուտքը Աշտարակ այնքան տխրական և սրտաշարժ էր, որ շունչս սպառած դարձել էի ես մի արտասուքի ծով:

Ո՛հ, մեծ է սերը հայրենյաց, թեև տնանկության և թշվառության մեջ»¹:

Շահագիլի գրական առաջին փորձերի մեջ արդեն կային կարոտի երգեր: Դեռևս 1857 թ., երբ նա աշակերտ էր Լազարյան ճեմարանում, գրեց «Ողջուն հրաժարական Աշտարակի հետ» բանաստեղծությունը, որը թեև աշակերտական անվարժ գրչի արդասիք է, բայց հեղինակը անմիջականության ու ներքին տագնապով է երգել այն խռովքը, որով լցված էր նրա մանուկ հոգին հայրենի գյուղից հեռանալու պահին: Ուղևորության նախօրին նա այցելում է հարազատ վայրերը, ուր տեսել էին նրա մանկության երջանիկ օրերը: Անշատման տառապանքը, անհայտության հետ կապ-

¹ Եր. Շահագիլ, Սմբատ Շահագիլի կենսագրությունը, 1944, էջ 41:

ված ճանապարհորդութիւնը հոգեկան առավել
ծանր վիճակ են ստեղծում բանաստեղծի համար։
Նա վերջին հրաժեշտն է տալիս Քասաղ գետին,
հայրենի ջրերին, իր Աշտարակին, խոստանալով եր-
բեք չմոռանալ նրանց։

Ծննդավայրի կարոտն ու նրա բնութիւն հրա-
պուլըն է երգել բանաստեղծը «Լեռնի վիշտը»
պոեմում, սղացել հայրենիքի դժբախտ ճակա-
տագիրը, բնութիւնն ու տգիտութիւնն շղթաներով
կաշկանդված։ Հայրենիքի շքեղ բնութիւն, ժո-
ղովրդի ծանր վիճակի հակադրութիւնն է տրված
նաև «Աշտարակ» բանաստեղծութիւն մեջ։

Գեղեցկանիստ է Աշտարակ.

Շատ այգիներ նա ունի.

Այնտեղ երկինքն է կապուտակ,

Այնտեղ օդն է քաղցրալի։

Մեծ, քնդարձակ, կանաչ դաշտեր

Լի են ծաղիկով քաղցրահոտ.

Մարդահասակ, խնկանքներ,

Բարձրանում է այնտեղ խոտ։

Այդ սիրուն գյուղն ունի մի դետ,

Եվ այն լի է ձկներով.

Այնտեղ իշխան և կարմրախետ

Խա՛ղ են կապում խայտալով։

.....

.....

Բայց այդ բոլորն ստրկութիւն

Կաշկանդված է կապանքով.

Ժողովուրդը թշվառական

Խեղդված է մեծ խավարով։

Հնդինական հաջողվել է ազգային վիշտը, հայ-
րենիքի հանդեպ տաժաժ կարոտի ու հիացմունքի
իր զգացումները երգել վարակիչ պարզությամբ,
որով և արժեքավորվում է երկը:

Բնության երգերը զգալի տեղ են բռնում
Շահազիզի լիրիկայում. բնությունը նրա համար
հանդիսացել է ստեղծագործական ներշնչումների
ու խորհրդածությունների աղբյուր:

Ահա գարնան զարթոնքն ավետող և զեղեց-
կությունը մարմնավորող մալիս ամիսը, որը ներ-
շնչում է ժպիտ և ուրախություն.

Երկինքը պա՛րզ, օրն մայիսյան.

Ես ճեմում եմ բուրաստանում,

Միրտա ուրախ է. ես ժպտալով,

Վարդ եմ քաղում, փունջ եմ հյուսում:

Փոփոխական է բնությունը. գարնանային վառ
օրերին հաջորդում է տերևաթափի դալուկ աշու-
նը, երբ բնությունը զրկվում է իր շքեղ զարդի-
րից: Այսպես է և մարդկային կյանքը, որին ան-
խուսափելիորեն սպասում է կենաց աշունը.

Ա՛նձն իմ, ա՛նձն իմ, ուրախ, դարթուն,

Մի՛ ծիծաղիր, սպասի՛ր.

Շուտո՛վ կգա և քո աշուն,

Դո՛ւ ես կողբա՞ս դառնալիք:

Շահազիզի կարոտի զգացմունքների բուռն
արտահայտություններից է մորը նվիրված «Երազ»
հռչակավոր բանաստեղծությունը:

Հեռավոր հյուսիսում, տարիներ շարունակ,

մանկությունից մինչև այրական հասակը բանաստեղծը ապրել է մոր կարոտը: Եվ նա երգել է հոգին ազնվացնող, զգացմունքները մեղմող, գորովագութ մայրական սերն ու նրա թովչանքը:

Ինչպես իրականության, բանաստեղծության մեջ ևս Շահազիզի մայրը հեռավորության մեջ է: Նա զգում է մոր գուրգուրանքները, համբուրը, անուշ ձայնը, վերապրում մանկության օրերը միայն երազում. սակայն պատրանքը փարատվելուց հետո նա դարձյալ մենակ է, զրկված մորից.

Ես լսեցի մի անուշ ձայն, —
Իմ ծերացած մոր մոտ էր —
Փայլեց նշույլ ուրախության,
Բայց ավսո՛ւս, որ երազ էր:

Շահազիզի այս բանաստեղծությունն արժեքավորվում է ո՛չ միայն թեմայի համամարդկային բնույթով, այլև բարձր արվեստով: Իրականության և երազի հակադրությունն առավել ուժեղացնում է բանաստեղծության հուզականությունը: Հեղինակին հաջողվել է դարմանալի հաստիկությամբ, առանց սեթևեթանքների, երգել մարդկային զգացմունքների բարձրագույն արտահայտությունը, մոր սերը:

Մեծ էր «Երազ»-ի հմայքն ու ազդեցությունը ժամանակակիցների և հետագա սերունդների վրա: Շահազիզից հետո շատ երգեր նվիրվեցին մայրական սիրուն և զոհաբերության բարձր զգացմունքներին: Այլ. Իսահակյանը, որը մի շարք բանաստեղծություններում, լեզենդներում չգերազանց-

ված արվեստով երգեց մայրական կաթոգին սերը,
հիշում էր, որ ինքը և իր սերնդի հայ պոետները
խորապես ոգեշնչված են եղել «Երազ»-ից:

«Երազ»-ը հայ գրականության գոհարներից
մեկն է:

* * *

Շահազիզն իր քնարական բանաստեղծություն-
ների մի զգալի մասի մեջ երգել է սիրո հրապույրը,
վայելքը և վիշտը:

Սերը բանաստեղծի համար կյանքի լավագույն
պարգևներից է, սակայն նա առավել վեհ ու գե-
ղեցիկ է, երբ առգորված է մի բարձրագույն իդեա-
լով: Կնոջ հմալքը Շահազիզը միայն նրա ֆիզի-
կական գեղեցկության մեջ չի տեսնում: Եթե պա-
տանեկության հասակում նա երգում էր կնոջ սոսկ
արտաքին բարեմասնությունները, ապա այժմ
հանգել է այն համոզման, որ առանց հոգեկան
հարստության ոչինչ են դրանք:

Պոե՛տ, դիցուք, դու փոքր ինչ հայտնեցիր
նորա արտաքին գեղեցկությանը,
Բայց դու, ո՛վ պոետ, ինչո՞ւ լռեցիր
ե՛վ հոգու կյանքը և մեծությունը:

Այստեղ ընդհատվում են սիրային գեղումները:
Հեղինակը հանդես է գալիս կնոջ համար մտավոր
կրթության անհրաժեշտության իր սկզբունքներով,
որոնք արտահայտություն են գտել նրա մի
շարք բանաստեղծություններում:

Դու գեղեցիկ ես, ո՛վ թե առավել
Ուսման շնորհիվ գեղեցկանալիք,
Եվ քո քույրերիդ, այդ քեզ խիստ վայել,
Առաջնորդուհի հանդիսանալիք:

Շահագլխի սիրալին հույզերն ու խոհերը փոփոխական են: Մերթ նրանք շատ են դատողական և չոր, մերթ սանտիմենտալ, բանաստեղծի հոգեկան կորույլը ընկճող: Եթե մի գեպքում նա պահանջում է հաղթահարել մերժված սիրո զգացմունքը, ապա մի ալլ գեպքում նրա վրա գերիշխում են հույզերը:

«Սիրո կորուստը» բանաստեղծության մեջ Շահագլիղը կյանքի կենսատու ուժը համարում է սերը, որի բացակայության գեպքում կյանքը զրկվում է հետաքրքրությունից, ներքին մղումից, իսկ բնությունը՝ հմայքից.

Այն բույերից, երբ Սերըս մեռավ,
Աշխարհիս վերա շատ օրեր անցան,
Բայց երբեք հողիս չծիծաղեցավ.
Տխո՛ւր երազներ ինձ երևեցան:

Եվ շնչեց գեփյուռ,—և սոխալն երգեց
Խոր լուծթյան մեջ, և թնդաց անտառ.
Իմ անդամներից ցուրտ, սարսուռ վաղեց,
Եվ սոսկալի վի՛շտ և մաշի՛չ խավա՛ր...

Սիրո ծախսվը բուռն է բանաստեղծի մեջ. մինչև իսկ հետ մահու նա հայցում է կույսից սիրո «առհավատչյա» արցունքի կաթիլներ.

Կհիշե՞ս երգչիդ, կտխրե՞ս ծածուկ,
Շաղանակահե՛ր կույս կապուտաչյա,
Կուղարկե՞ս նորան երկու արտասուք,
Իբր հավերժ սիրո սուրբ առհավատչյա:

Տրամադրությունների այս փոփոխումները՝ հուսադրում և հուսախաբություն, վայելք ու տառապանք հաջորդում են միմյանց և բանաստեղծը վերապրում է այդ հուլիներն իր ամբողջ ներքնաշխարհով:

Բազմաբովանդակ է Շահազիզի սիրային լիրիկան: Այն չի սահմանափակվում կույսի հրապուլյրների և կամ սիրո վայելքի ու տառապանքի երգերով:

Ենթարկվելով դարաշրջանի առաջավոր գաղափարների ազդեցությանը, հեղինակն ապրում է քաղաքական հասունացում. գրողի հասարակական դերի ըմբռնումը՝ «նախ քաղաքացի և ապա պոետ», մի կողմ է մղում անհատական զգացմունքները, և եթե մինչ այդ նա ապրում էր նույնիսկ մեռած կույսի հիշատակով («Ես այն օրից, երբ քո պատկեր...»), այժմ մերժում է սերը, որին նրա հոգին չի արձագանքում այլևս: Կյանքը վերափոխել է նրան, մնացել է միայն սնցյալի «անհոգ օրերի» հուշը, սիրո հուլիներին փոխարինել է հայրենիքի սերը.

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր.

Ես շատ և շատ փոխվել եմ.

Ա՛ռ թաշկինակդ—աչքերդ սրբի՛ր,

Ես քեզ սիրել կարող չեմ:

.

.
.
նախար եմ ես, որպես գիշեր,
Իմ չորս կողմին փոթորիկ.
Չունի՛մ քեզ սեր, չունի՛մ քեզ սեր,
Ես սիրո՛ւմ եմ հայրենիք:

Ազգի ծանր վիճակն է այսուհետև մտահոգում
բանաստեղծին և նա հրաժարվելով անձնականից,
նվիրում է իրեն հասարակական գործին, հայրե-
նիքին:

Շահագրգիռ բանաստեղծությունները՝ հայրե-
նասիրական, բնության, թե սիրային երգեր կապ-
ված են միմյանց հետ մի ընդհանուր գաղափարով:
Դա սերն է դեպի հայրենիքը և ազատության վեր-
գաղափարը:



«Լեւոնի վիշտը» պոեմը Շահազիզի գլուխ գործոցն է: Սյուտեղ առավել ցայտուն են արտացոլված բանաստեղծի աշխարհայացքը և ստեղծագործական կարողութիւնները: Պոեմում ամփոփված են հեղինակի գաղափարախոսական և գեղարվեստական այն բոլոր հատկանիշները, որոնց մենք հանդիպում ենք նրա մյուս երկերում:

«Լեւոնի վիշտը» կազմված է չորս գլուխներից և երկի գաղափարական իմաստը մարմնավորող նախերգանքից, որի բնաբանն է՝

«Բավական է, ինչքան մարդկանց քաղցրեղենով կերակրեցին, դրանից փչացել է նրանց ստամոքսը, պէտք են դառնում գեղեր, գառն ճշմարտութիւններ»:

Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը» վե-

պի այս հայտնի տողերը սուր մեղադրանք էին կեղծիքով ու խաբեությումբ քողարկված իր ժամանակի բարոյական հասկացողութունների, ըմբռնումների և հասարակական նկարագրի դեմ: Դառնությամբ ու իրավացի զայրուլթով գրված տողերը Շահազիզն ուղղեց հայի «մեծության», «ոսկի երազներով» սնվող, «բարոյապես անչափ հետ ընկած» և «խավարի մեջ մինչ գլուխ թաղված» հնամոլների դեմ: Մուսլ էր և տխուր իրականութունը, բայց առավել կորստաբեր ու կործանիչ՝ այն քողարկելը.

Անցավ ժամանակն երեւակայել
Ավաղուտ դաշտում դալար ծաղիկներ.
Եվ դադարեց՝ ք ցնորաբանել
Հայի մեծության ոսկի երազներ:

Մեք խավարի մեջ մինչ գլուխ թաղած,
Կա մինք հասանել երկնի բարձրություն,
Մեք բարոյապես անչափ հետ ընկած,
Ծխում ենք մեզ խունկ և հարդո անուն:

Մտավոր խավարի և հետադիմության հիմնական պատճառներից էր ժողովրդին անհասկանալի, խրթին դրաբարը: Նախերգանքի առաջին իսկ տողերն ուղղված են դրաբարի դեմ, հանուն «կենդանի լեզվի», հանուն աշխարհաբարի: Բացի հին լեզվից, բանաստեղծը ընդհանրապես, ժըխտում է հինը, հրաժարվում նրանից.

Նորա մեջ տեսա մռայլը հնության,
Բայց երբեք չտեսա ներկայի հողին.
Խորամանկահյուս բաներ խոսեցան.—
Ես հետեցի սլարդ լողիկային...

Ո՛չ միայն լեզուն էր անմատչելի ու խորթ,
ալլև գրականությունը, որը ժողովրդին մատնել
էր մտավոր աղքատության.

Խավար գրվածներ, կաղ, կույր բռնադատ
Բանաստեղծություն և թարգմանություն
Տվեցինք Հային, և նա հուսահատ
Փակեց ախանջներ և մտավ յուր տուն:

Եվ այսպես, հալը քնած էր դարավոր նիհրով:
Նրան պետք էր ազատագրել, սթափեցնել ան-
օգուտ երազանքներից, օգնել հաղթահարելու խա-
վարճ ու տգիտությունը, ալլապես նրան սպառ-
նում էր անվերադարձ կործանում:

Հին գաղափարների ու հասկացություննե-
րի կրողներն իրենց սխուլաստիկ մտածողությամբ
ժողովրդի մեջ սերմանել էին ստրկություն: Նրանք
մոլեգին հակառակորդներ էին նոր ու լուսավոր
գաղափարների, որոնց հաղթանակի համար հաս-
տատուն կամ քով, աներևր վճռականությամբ պալ-
քարի էր պատրաստվում Լեոնը.

Անխոռվ եմ ես, եթե իմ վերա
Ամբաստանության զան զիզվեն բռններ.
Ե՞րբ են բան տեսել, ինչպես որ նա կա,
Ճշմարտությունից վշտացած աչքեր:

Կորիւր Չարասեր, լսի՛ր, Ամբարի՛շտ,
Ես պիտի ճեղքեմ քո նենդ մեքենան,
Պիտի խորտակեմ սրտիդ սատանան,—
Պիտի ժամանեմ ես նալահանդիստ:

Մտավոր անկումին հաջորդել էր բարոյական քայքայումը: Վերացել էին սկզբունքն ու հավատը, որոնք դուրսուլթյամբ հերքվում էին իրենց իսկ դավանողների կողմից: Վաճառված էր գրիչը, վաճառված էր միտքը: Ոսկին խեղդել էր արդարության ձայնը, կուրացրել աչքերը, լոնցրել խիղճը:

Պոեմի ամբողջ նախերգանքը արտացոլում է ներկայի և անցյալի, հնի և նորի հակադրությունների պայքարը:

Նախերգանքից հետո, առաջին գլխում, հեղինակը ծանոթացնում է ընթերցողին իր հերոսի՝ Լեոնի հետ: Ծագումով Լեոնը բնիկ հայաստանցի էր, տոհմիկ ընտանիքի որդի, Մոսկվայում մեծացած և դաստիարակված մի երիտասարդ: Լեոնի մեջ վառ էր սերը դեպի հայրենիքը: Նա ապրում էր իր ժողովրդի կյանքով, «մտավոր անդամ» էր Վյուր ազգի» և «ընդունակ՝ անձը նորան նվիրել»: Անհատական նկարագրով Լեոնը մուսլ էր, թախծոտ: Սակայն նրա վիշտը հասարակական բնույթ էր կրում: Նրա տխուր խորհրդածությունների պատճառը հայրենիքն էր, նրան մտատանջում էին հայրենիքի և հարազատ ժողովրդի քաղաքական ստրկությունն ու մտավոր հետամնացությունը: Իր միջավայրում Լեոնը մենակ էր՝ ուներ տարե-

կից, բայց ոչ գաղափարակից ընկերներ: Նրանք հայրենասերներ էին միայն խոսքով, օտար էին ժողովրդին, անտարբեր նրա տառապանքներին և չէին իսկ երազում «կանգումը հայի»: Նլուծապաշտության ալիք դարում Լևոնը «սալավինեցավ լուռ առանձնության» և մեկուսացած շրջապատից, անձնատուր եղավ «ազդի» ցավներին ու կարիքներին: Նա սագում էր կորուստն հարազատ ազգի:

Լևոնը առավել խորն էր ապրում հայրենիքի ողբերգությունը, երբ տեսնում էր այլ ժողովուրդներ ի ազգալին դարձոնքը՝ իտալացիների ազատագրական պալքարը ընդդեմ բռնության ու ստրկացման.

Նա տեսնում էր, որ անօրինակ
Ոգևորությամբ ներշնչված ցեղեր,
Կյանք են նվիրում որպես նահատակ,
Մահարեք դաշտը ծածկում են զոհեր:

Նա տեսնում էր և իտալական
Շագկապյալ սիրո միությամբ կնքած
Հաջողակ գործը, և դարիբալդյան
Զենքի հաղթություն, այնքան հռչակված:

Միանգամայն այլ պատկեր էր ներկայացնում հայ իրականությունը:

Բայց Հայոց ազգը — տխուր անապատ...
Անբույժ նեոներով խոցված վիրավոր.
Խավար, նյութապաշտ, երկչոտ և վհատ,
Սիրոզ չարություն և փառք անցավոր:

Լևոնի հուզականությամբ լի հոգին փոթորկ-
վում էր և անձնական հույզերով, սակայն նրա
մեջ գերակշռողը հայրենիքի սերն էր, հանուն որի
նա պատրաստ էր զոհաբերել և իր անձը: Հասա-
րակական պալքարում նրա նշանաբանն էր՝

Ես պիտի լինիմ մարդ ազատ, անրիժ,—
եվ ես կարող եմ իմ ազդը սիրել:

Լևոնը նոր գաղափարներով տոգորված երի-
տասարդության ներկայացուցիչն էր, որ ձգտում
էր «նոր սկզբունք ավետել հային»: Նա տեսնում
էր հարազատ ժողովրդի կեղեքումը, հարստահա-
րումը: Հայրենիքը դարձել էր լացի ու տանջան-
քի, հալածանքի ու շղթաների մի երկիր, ուր թա-
ղավորում էր նյութապաշտությունն ու կեղծավո-
րությունը, ստրկամտությունն ու տգիտությունը:
Սալմարն էր պատել հայրենիքին, որին կարելի էր
փրկել, ըստ բանաստեղծի, միայն լուսավորու-
թյան ճառագայթներով:

Իսկ թե հորիզոն բացվի կըթուլօյան,
կը բացվի և քեզ դուռը փրկության.
Նորից կը ծաղկեն քո բուրաստաններ,—
Նոր կյանք կը շնչեն մեռած անդամներ:

Պետք էր մոռացության տալ տխուր անցյա-
լը, պալքարել հայրենիքի վերածնության համար
և պայծառ հույսերով նայել ապագային:

Լեոնը վերլուծող էր, դիտող: Տեսնելով, որ ժամանակակից իրականության մեջ ճնշված է մարդը, խեղդված ազատությունը, նա բացականչում է.

Աշխարհ աստուծո, բանո ես զգվելի:

Ահա Լեոնի մտորումներն ու խորհրդածությունները հայրենիքի ներկայի և ապագայի մասին:

Տոգորված հայրենասիրական գաղափարներով, առաջնորդվելով հայրենիքին օգնելու, նրան ծանր վիճակից ազատելու բուռն ցանկությամբ, Լեոնը վճռում է ուղևորվել Հայաստան, հեռանալ հյուսիսից, թողնելով իր բարեկամներին և սիրած կույսին:

«Լեոնի վշտի» գաղափարական հիմնական դրույթները՝ պալքար ստրկության, հնամուլության, խավարի ու տգիտության դեմ շարադրված են պլեմի առաջին գլխում: Շարունակության մեջ, հեղինակը ավելի խորացնում, պարզաբանում է վերոհիշյալ հարցերը աչն երևույթների կապակցությամբ, որոնց ականատես է գտնում Լեոնը իր ճանապարհորդության միջոցին:

Պոեմում քննության են ենթարկված անցյալի կրթական ողջ սիստեմը, նրա բովանդակությունը, ուսուցման սխալաստիկ ձևերը: Բանաստեղծը խարանում է հնամուլ աչն «մանկավարժ-

ներին», որոնք աշակերտությանը թաղանթ էին մտավորապես ու տանջում ֆիզիկապես¹:

Ընդհանուր ալս հարցերից հետո, հեղինակն անցնում է բուն նյութին, այսինքն Լևոնի ճանապարհորդության նկարագրությանը դեպի Կովկաս:

Առաջին գլխում ներկայացված է Լևոնը որպես ազգի վշտով ու տառապանքներով ապրող հայրենասեր մի երիտասարդ: Իսկ որոնք էին նրա ներքին հետաքրքրությունների և մտավոր բովանդակության սահմանները: Մոսկվայից հեռանալիս նա իր հետ էր վերցրել Բալրոնի, Շեքսպիրի, Հայնեի, Գյոթեի, Հ. Սվաճյանի և Կոմս Էմմանուելի (Մ. Նալբանդյան) երկերը, համաշխարհային ու հայ գրականության այն դեմքերի, որոնք հաջակված էին ո՛չ միայն իրենց ստեղծագործական հանճարով, այլև առաջավոր մտածողությամբ, ազատաոիրական և հումանիստական բարձր գաղափարներով: Լևոնը սնված և դաստիարակված էր համաշխարհային վշտի երգիչ Բալրոնի, ազատության պայքարի մարտիկ Կոմս Էմմանուելի և հայ հասարակական կյանքի հոռի ու

¹ Եր. Շահաղիզը, 1947 թ. լույս տեսած Ս. Շահաղիզի «Երկերի» նախաբանում և «Լևոնի վշտի» ծանոթագրություններում հայտնել է այն կարծիքը, որ բանաստեղծը, խարաղանելով խավարամոլ ուսուցիչներին, նկատի է ունեցել Մսեր Մսերյանին, որը Լազարյան ճեմարանում եղել էր Սմբ. Շահաղիզի ուսուցիչը:

ստվերոտ կողմերը մերկացնող ու ձաղկող Սվաճյա-
նի ստեղծագործություններով:

Սիրած գրքերից մեծ պաշար առած.—
Տխուր մեղեդիք Հեյնե պոետի,
Գեոտեի Ֆաուստ, այս անմահ քերթված,
Թափառաշրջիկ վեպք Չայլ-Հարուդի:

Երգիծանիշ գործը Հոբենալի,
Եվ Բեռանժեի ողելից երգեր,
Եվ պատմությունը լրջամիտ Բեոքլի,
Եվ Շեքսպիրի ողբերգություններ:

Մի քանի հափար Մեդվից Պոլիսի,
Մի քանի երգեր մեղ ծանոթ Կոմսի,—
Եվ այս բոլորը ամուր կապկպած,
Անմեղ լրագրի թերթերով փաթթած...

Սկսվում է Լեոնի ուղևորությունը: Առաջին
հայաշատ քաղաքը Նոր Նախիջևանն է, ուր նա
ականատես է լինում ժողովրդի արդարացի դաշ-
րույթին՝ ընդդեմ իրենց հոգևոր առաջնորդի, որն
ազգադավ գործունեությամբ գրգռել էր հասարա-
կությանը և ատելություն սերմանել իր շուրջը:

Խավար բռնավոր և ծննունդ դահճի,
Գահիճ արարքով և դահիճ հողով,
Հովվում է հոտը մեր Լուսավորչի
Անուղղա բարքով, թյուր բարոյներով:

Ի դեմս այդ հոգևոր առաջնորդի, Սմբ. Շա-
հաղիլը նկատի է ունեցել Նոր Նախիջևանի և Բե-
սարաբիայի թեմի առաջնորդ Գաբ. Կախսկոպոս
Այվազովսկուն, որը դաշնակցած Նոր Նախիջևանի

քաղաքագլուխ, հայտնի ռեսպեկտներ Հարություն Խալիբյանի հետ, գործում էր ընդդեմ ժողովրդի և ազգային իրավունքների¹:

Շահազիզի երկերում հաճախ են շոշափված կրոնի և հոգևորականության հարցերը: Բանաստեղծություններում տեսանք, թե ինչպիսի խըստությամբ էին դիմակազերծ արված իրենց կոչման բարձրության վրա չդանվող հոգևոր պետերը («Դավաճան»): Այստեղ նույն դիրքերից, կոնկրետ փաստերով քննադատված է նաև կղերականությունը: Խարազանելով հոգևորականությանը, բանաստեղծը երբեք չի հերքել կրոնը: Վերջինս, ըստ Շահազիզի, մարդկային մտքի, առաջընթացի մեծագույն ազդակն է. նա նույնացված է ճշմարտության հետ, իսկ ասածո գաղափարը՝ գիտություն:

Լեոնը հաջորդ հայաշատ քաղաքումն է՝ Թիֆլիսում: Փոխվում են հերոսի խորհրդածությունները: Նա ծանոթանում է հայուհիների հետ և հրապուրված վերջիններիս գեղեցկությամբ, ներբողում է նրանց: Գեղեցիկ է հայուհին, բայց օտարացած, վատ դաստիարակության հետևանքով նա զրկված է մայրենի լեզվից ու ազգային գիտակցությունից:

¹ Այվազովսկու հակաժողովրդական գործունեության մասին ընդարձակ տեղեկություններ է տալիս Եր. Շահազիզը 1947 թ. լույս տեսած Սմբ. Շահազիզի «Երկերին» կցված ծանոթագրություններում:

Աղջիկը չունի դաստիարակութուն
Ո՛չ ազգի հոգով և ո՛չ օտարի.
Արտաքին պէքանք և վալլողութուն,
Ա՛յս է հոգեւոր կերակուր կյանքի:

Ահա ժամանակի դաստիարակության ոգին,
որը գրականության միջոցով հասարակական պար-
տավանքի ու ծաղրի է ենթարկել և մեր տար-
բեր հեղինակների կողմից: Բավական է հիշատա-
կել Ռ. Պատկանյանի երկու հայտնի բանաստեղ-
ծությունները՝ «Մայրաքաղաքում կրթած հայ երի-
տասարդ» և «Մայրաքաղաքում կրթած հայ աղ-
ջիկ», ուր սպանիչ ծաղրով ներկայացված է հայ
երիտասարդության անբովանդակ կյանքը, օտա-
րացումը ազգից և քաղքենիական դաստիարակու-
թյունը:

Տեղը եկավ՝ հայ է նա, տեղը եկավ՝ այլազգի:

Իրոք ո՛չ այդ և ո՛չ այն է, այլ ծընունդ մի նոր ազգի:

Հայ կինը անարժան հաջորդն է արժանավոր
նախնիների. հայրենիքի համար անձնուրաց զո-
հաբերվեց Վ դ. հայուհին, սակայն նրա հերոսա-
կան կերպարը չունեցավ իր հաջորդները: Մտա-
վորապես ընկած, բարոյապես ճնշված է ժամա-
նակակից հայ կինը. նա ամուսնու հաճույքի ա-
ռարկան է, ենթակա նրա բռնություններին, զուրկ
կամքից և ինքնուրույնությունից: Հոգեկան սնան-
կությունն ա. բարոյական ստրկությունն անկարող
են նրան մայր դարձնել՝ ներշնչողը մահուկ սերնդի

հայրենասիրության, անձնվիրության և ազատության գաղափարներին:

Ծանոթանալով հայ հասարակական կյանքին, Լևոնը հակադրվում է գոյություն ունեցող իրականության բարոյական չափանիշներին, մերժում է ժողովրդին անհասկանալի ու անիմաստ ազգային գրականությունը և սխոլաստիկ հեղինակներին: Գրական ընդհանուր այս միջավայրում առանձնացված է մի պալժառ դեմք, ամբասիր արվեստով ու մարդկային նկարագրով, հոգով հարուստ, գործով անմահ: Անունը հիշատակված չէ, սակայն ընդհանուր հատկանիշների մեջ, որոնցով Շահադիզը բնութագրում է իր սիրած գրողին, դժվար չէ ճանաչել Մ. Նալբանդյանի հերոսական պատկերը.

Բայց քեզ հանում եմ այս տխուր դասից,
Ո՛վ նոր հայախոս և ազնիվ մշակ,
Քեզ կարող էի անմահ փուշերից
Քաջ մարտիրոսի բռլորել պսակ:

Քնարիդ լարերն ազատ շարժվում ե՛ն,
Երբ ազատ քո կամք, ազատ քո հոգին.—
Այդպես սփռակներ ներգաշնակում են,
Հեռու վանդակից, թփերի միջին:

Սրտիդ կսկիծը—կսկիծ է ազգի,
Եվ ո՛չ մի դիմակ կեղծավորության,
Գրչիդ վաստակը—մեծություն հայի,—
Թեև հայասերք են քո դավաճան:

Ո՛վ ազգի անդամ, հավերժ հարգելի,
Թո՛ղ մխրթարե կուրծքիս հառաչանք
Պայծառ ճակատըդ Հայրենասիրի,
Որի վարձն եղավ ապերա՛խտ զրկանք:

Լևոնի ուղևորությունը հասնում է յուր բուն
նպատակին. նա արդեն Հայաստանումն է, որին
և նվիրված է պոեմի վերջին գլուխը:

Գունեղ ներկերով, բանաստեղծական կենդանի
պատկերներով նկարագրված է Արարատյան դաշ-
տի կենսաբեր բնության հարստությունն ու գե-
ղեցկությունը՝ վերջինիս հարկադրելով բռնության
լծի տակ հեծող, սովամահ ժողովրդի իրավագուրկ
կյանքը: Տեսնելով հայրենիքի ստրկացած վիճա-
կը և նրա որդիների անտարբերությունը, Լևոնը
կոչ է անում ոտքի կանգնել ընդդեմ բռնության
և ինքը զինվորագրվում է այդ պայքարին.

Մի վե՛ր կաց, կանգնի՛ր, աշխարհ Հայաստան,
Մի թա՛փ տուր ուժով, թո՛ղ ձեզքվեն կապանք.
Ահա՛ քեզ արյուն իմ նվիրական,
Թո՛ղ ցողեն դաշտերդ փրկության հոսանք:

Ձենքի ուժով է միայն հնարավոր խորտակել
բռնության չղթան, զենքով միայն կարելի է նվա-
ճել ազատությունը:

Ուրե՛մըն թրեր, ուրե՛մըն սրեր,
Թո՛ղ հանդիսանան այստեղ դատավոր,
Թո՛ղ թափվին անպարտ արյան առուններ,
Դա անմա՛հ գործի է ավետավոր:

Շահագիզի հերոսը հասնում է պայքարի ամե-

նաբարձր սաստիճանին. նա «թրուլ» ու «սրուլ» է ուղղում ձեռք բերել օտար լծի տակ ստրկացած հայրենիքի ազատությունը, բայց թույլ էր Լեոնի մարտական հոգին, անկալուն և ոչ հետևողական: Նա բուրժուական լուսավորական դիրքերից պաշարող հերոս էր և նրա ցասումն ու բողոքը ի վերջո հանդում են հայրենիքը ուսմամբ ու կրթությամբ փրկելու գաղափարին, նրա կարծիքով (հետևաբար՝ նաև Շահազիզի համոզմամբ) ժողովրդի լուսավորությունն էր հայերի ինքնագիտակցություն զարգացման և ազգային վերածննդի գլխավոր նախապայմանը:

Ուսո՛ւմ և ուսո՛ւմ մեզ հարկավոր է,
Ուսումը լինի թո՛ղ մեր թաղավոր,
Ուսումը հային թո՛ղ բուսուցանե
Մի բարի վիճակ և կյանք վառավոր:

Այս խորհրդածություններով և համոզմամբ իր ավարտին է հասնում Լեոնի ուղեորությունը, վերջանում է նրա միսիան հայրենիքի հանդեպ:

* * *

«Լեոնի վշտի» հղացման ազդակը, ինչպես տեսանք, հալ ժողովրդի քաղաքական-հասարակական վիճակն էր, նրա ձգտումներն ու իդեալը: Սակայն պոեմում ակնհայտ են և ժամանակի ուսական իրականության՝ 60-ական թվականների ազատագրական շարժման արձագանքները, որոնք

իրենց ներգործութիւնն են ունեցել նրա ընդհանուր ոգու, շոշափւած հարցերի վրա և նպաստել են քննադատական մտքի զարգացմանը:

Յուրի Վեսելովսկուն ուղղած նամակում, Շահազիզը գրում է.

«Խոսք չկա, որ ինձ, ինչպես և մեր ամբողջ սերնդի վրա ուժեղ ներգործութիւն է ունեցել մեծ ռեֆորմների էպոխան և նրա արտացոլումը ռուսական մտավոր կյանքում: «Լեոնի վիշտը», ուր մերկացվում են հայ իրականութեան մութ երևույթները և արտահայտում են նրա վերածննդյան երազները, զգալիորեն ստեղծվել է այն ոգեւորութեան ազդեցութեան տակ, որն առաջացել էր գլուղացիութեան ազատագրմամբ:

Հիշում եմ, թե ես ինչքան սրտիս մոտ էի ընդունում այդ դեպքը:

Ընկերակիցների շրջանում ես պատկանում էի այն երիտասարդների թվին,—շարունակում է Ս. Շահազիզը,—որոնք ավելի ջանադիր հետևում էին ռուսական ամսագրերին, օրինակ՝ «Современник»-ին և այնտեղ շոշափած հարցերին... 1859 թ. «Современник»-ից է վերցված «Լեոնի վշտի» երգերից մեկի բնաբանը...»¹:

«Լեոնի վշտի» գաղափարների կրողը, հեղինակի մտքերի և խոհերի հաղորդակիցն ու պաշարի

¹ Ю. Веселовский, Русское влияние в современной армянской литературе, Москва, 1903, էջ 14.

անբաժան ընկերը երկի միակ հերոս Լևոնն է, որն իր ժամանակի և միջավայրի մեջ նոր մարդ էր: Նոր էր իր հետաքրքրություններով, ձգտումներով, հնի քննադատություններ: Քաղաքական նկարագրով Լևոնը հասավ այն բարձրություն, որ կարողացավ տեսնել աշխատավոր համքարին և ողջունել արդար քրահնքով ձեռք բերված նրա ազնիվ վաստակը:

Միայն Համբարն է, որ համեստ բարքով
Սիրում է վաստակ, հեռու վատ կյանքից.
Հաբար է Համբարն. պարզերես ղեմքով,
Ոչինչ ահ չունի ղեխոտ հարստից:

Լևոնը տեսավ այլելին, հակադրությունը երկու դասակարգերի, թե ինչպես շահագործվում է խեղճ աշխատավորը, լուրացվում է նրա վաստակը անառակություն և խաբեություն ճանապարհով:

Անառակության ճանապարհներով,
Խեղճ չքավորի հացը կտրելով,
Գիդում եք առատ արծաթի թումբեր
Նվ ինչո՞ւ համար, աչքածակ դայեր:

Իր ուղեորություն ընթացքում նա տկանատես դարձավ սոցիալական բաղմամբով չարիքների ու հակասությունների, և նրա սիրտը լցվեց զայրույթի ու ատելության թուլնով: Լևոնը հոգևոր վերածնունդի գիրքերից պալքարող, դեմոկրատական գաղափարախոսություններ տողսրված բուրժուական երիտասարդության ներկայացուցիչներին էր: Նա օժտված էր գիտելու, վերապրելու,

ներքնապես մաքառելու կարողություններով, բայց դուրաբեկ էր և թույլ պայքարում: Նահոգեբանորեն պարտվեց իրականությունից, մասնավեց հոռետեսության և նույնիսկ իր վերջնական եզրակացության մեջ՝ կրթությամբ փրկել հայրենիքը, տոկունություն և հետևողականություն չցուցաբերեց և հանգեց այն համոզման, թե անկարող է հաղթել չարին:

Նորա սիրտն լցվեց դառն մտածմունքների:

Որ նա չկարաց թափալել Չարին:

Մեր եզրակացությանը որպես ապացույց կհիշատակենք հետևյալ փաստը: Ըստ Ս. Մանգինյանի, «Լևոնի վիշտը» ունեցել է նախնական վարիանտ, որը Շահազիզը կարդացել է Լազարյան ճեմարանի աշակերտությանը և հետագայում ոչնչացրել:

«Վիշտ¹ ևք, թե քանի դուխներ Ձեր վիպասանությունից մեր առաջ կարդացել ևք, ապա ծվեն-ծվեն պատռել ևք, մինչև որ «Լևոնի վիշտը» տպագրված տեսանք և ափսոսացինք, որ մեջը պատռտածների հետքեր չէին մնացել»¹:

Նույն փաստը ավելի շահեկան մանրամասնություններով պատմել է Փ. Վարդանյանը, թե ինչպես ինքը՝ Վարդանյանը կարդացել և ուղղումներ է կատարել «Լևոնի վիշտի» նախնական օրվ.

¹ «Սմբատ Շահազիզյանի երեսնամյա հորելյանը» 1894, էջ 103:

նակի վրա և համաձայն այդ ձևագրի՝ Լեոնը հռոմախարությունից վախճանվել է¹։ Լեոնի նման մահը տրամաբանական լուծումն էր նրա ընդհանուր նկարագրի, հասարակական պայքարում հռոմախար և պարտված հերոսի։ Ճիշտ է, տպագիր օրինակում անհայտ է Լեոնի ճակատագիրը, բայց դժվար չէ գուշակել, որ Լեոնը, և՛ թե ոչ ֆիզիկապես, գոնե հոգեպես սպառված էր արդեն։

Լեոնի հոգեկան պարտությունը պայմանավորված չէր նրա նկարագրի թուլությամբ կամ անձնական անհաջողությամբ, այլ ավել ժամանակաշրջանի արտահայտությունն էր, ռևոլյուցիոն սիտուացիայի նահանջը, վալրեջքը, որը գրեթե ինքնակամաբար, տատանումներով ու հուսահատությամբ։

Լենինը Գերցենի հիշատակին նվիրված հոդվածում, խոսելով Գերցենի «հոգևոր ողբերգություն» մասին, ցույց է տվել վերջինիս քաղաքական-հասարակական պատճառները, որպես էպոխայի առանձնահատկություն, որն իր անդրադարձումն ստացավ և Գերցենի մոտ։

«Գերցենի հոգևոր կրախը, նրա խոր սկեպտիցիզմը և պեսիմիզմը 1848 թվականից հետո, սոցիալիզմի վերաբերմամբ բուրժուական պատրանքների կրախն էր։ Գերցենի հոգևոր գրաման ծնունդն ու արտացոլումն էր համաշխարհային պատմական այն դարաշրջանի, երբ բուրժուական

¹ Սմբ. Շահագիր, Երկեր, 1947, էջ 228։

դեմոկրատիայի ռեոլյուցիոնութլունն արդեն մահանում էր (Եվրոպայում), իսկ սոցիալիստական պրոլետարիատի ռեոլյուցիոնութլունը դեռևս չէր հասունացել»¹:

* * *

«Լեոնի վիշտը» անցյալ դարի 60-ական թվականներին հայ հասարակական կյանքն արտացոլող առաջին պոեմն է: Նա հանդես եկավ այն ժամանակ, երբ մամուլի, հրապարակաստութլան և գեղարվեստական գրականութլան մեջ՝ Աբովյանի, Պատկանյանի, Նազարյանի և Նալբանդյանի երկերում ամենայն վճռականութլամբ առաջադրված էին հայ ժողովրդի քաղաքական զարթոնքի և մտավոր վերածննդի հարցերը:

Շահազիզի պոեմի գաղափարական ուղունքները սկզբնավորվում են «Հյուսիսափայլից»: Հյուսիսափայլյան դիրքերից քննադատված էր հոգևորականութլունը, հայ ժողովրդի մտավոր հետամնացութլունն ու բարոյական ալլասեումը, քաղքենիական կենցաղը, դպրոցների սխալ, հակամանկավարժական դրվածքը, կնոջ իրավազրկութլունը: Նույն դիրքերից էր մղվում պայքարը դրաբարի, հնամուլութլան և նրանց պաշտպանների՝ «ծերերի» դեմ: Եվ վերջապես Շահազիզը Նազարյանին էր ձայնակցում՝ էջմիածնում հոգևոր ակադեմիա հիմնելու առաջարկով,

¹ Վ. Ի. Լեևին, Երկեր, 4-րդ հրատ., հատոր 18, էջ 14:

հայրենիքը լուսավորությամբ ազատագրելու որպէս միակ ուղի: Եվ բնաւ պատահական չէ, որ «Լեոնի վիշտի» հրապարակումից հետո, ողջունի առաջին ջերմ խոսքով «Հյուսիսամիայլում»¹ հանդես եկաւ Նազարյանը: Նա Շահազիզի ստեղծագործության մեջ տեսաւ «Հյուսիսամիայլի» հրապարակախոսության գեղարվեստական ընդհանրացումը:

Նազարյանը արժեքաւորեց նախ երկի իդեական՝ իր տեսակետով ճիշտ ելակետը, որն ազգի փրկության միակ ուղի համարել է կրթությունը, ուսումը և անվերապահ ժխտումը հնամուլության ու պահպանողականության:

«Ամենեւին ուղիղ և ճշմարիտ ձայն է տալիս Լեոնը, ուժգին բարձրացնելով յուր բարբառը, թե միակ ճանապարհը փրկության է ուսումն, դպրոց, բանագիտ վարժապետք, խելացի կրօնուսույցք, ոչ հնամուլ ուսուցիչք Հայոց ճարտասանության, ալլ նոր ժամանակի հոգուն և պիտույքին քաջ ուշադիր մարդիկ, որով միայն կարելի էր դարման տանել ազգային ցավերին և մեր ընդհանուր հայկական թշվառությանը, բուն արմատից սկսանելով ցավագարված ազգի բժշկությունը: Մեք առ

¹ Հայտնի է, որ «Հյուսիսամիայլը» փակվեց 1864 թ., իսկ «Լեոնի վիշտը» լույս տեսաւ 1865 թվականին և որովհետեւ ամսագիրը միշտ ուշացումներով էր տպագրվում, խմբագրությունը հնարավորություն ունեցաւ «Լեոնի վիշտի» մասին ասելու իր խոսքը:

ի սրտե ձայնակից ենք Լեոնին և բանաստեղծի
գեղեցիկ ու առողջամիտ գաղափարներին»¹:

Մի քանի մասնակի գիտողություններից հե-
տո Նազարյանը տալիս է երկի ընդհանուր գնա-
հատականը, որպես հայրենասիրական գործի, որը
«...ոչ մի առողջամիտ հայրենասեր ընթերցող
ձեռքից ցած գնելու չէր, առանց սիրտը շարժվե-
լու նույնպիսի տաք հայրենասիրական զգաց-
մամբ, որ սկզբից մինչև վերջը փչում են Շա-
հազիզյանի բանաստեղծական գրվածի մեջ»²:

Նազարյանից հետո «Լեոնի վիշտը» մատնը-
վեց լուսթյան, ավելի ճիշտ՝ հալածանքների: Ան-
ցյալի հալ ռեակցիոն մտավորականությունը Շահա-
զիզի համարձակ և անողոք մեղադրանքների,
քննադատությունների մեջ տեսավ իրականության
մերկացումն ու խարաղանումը: Բացի այս, «Լեո-
նի վշտում» ակնհայտ էր Նալբանդյանի ազատա-
տենչ ոգու, առաջավոր գաղափարների ազդեցու-
թյունը, որի համար, իրավամբ, ժամանակակից-
ները «Լեոնի վիշտը» համարեցին «Նալբանդյանի
վիշտը»: Ուշագրավ է նաև այն ավանդությունը,
ըստ որի Նալբանդյանը բանտում կարգալով պոե-
մը, բացականչել է. «Լեոնի վիշտը իմ վիշտն է»:

Այս բոլորից հետո պարզ է, թե ինչո՞ւ ցա-
րական կառավարության ներքին գործոց մինիստր
Վալուեին, Շահազիզի գաղափարական հակառա-

¹ «Հյուսիսափայլ», 1864, № 12, էջ 779:

² Նույն տեղում, էջ 780:

կորդների նախաձեռնութեամբ, ուղարկվեց անստորագիր, գաղտնի լրտեսագիր «Լեոնի վշտի» հրապարակման առթիւ: Լրտեսագիրը պետութեան ուշագրութեանն էր հանձնում Շահաղիղին իր երկի այն լուսավոր, առաջավոր գաղափարների համար, որոնցով նա արժեքավորվում է այսօր:

Ի՞նչ մեղադրանքներ էին Շահաղիղին վերագրված:

Նախ, «Հյուսիսասիայի» գրական կարծիքը «Լեոնի վշտի» հրատարակութեան առթիւ, որովհետեւ այդ ամսագրի հետեորդները «քաղաքական հանցավոր, Պետրոպավլովսկ բերդում նստած Նալբանդովի հետեորդներն են» և «Լեոնի վիշտը» ոմանց կողմից համարվել է «Նալբանդյանի վիշտը»:

Երկրորդ, «Լեոնի վշտի» մեջ կան բազմաթիւ հակապետական արտահայտութեաններ, ակնարկներ Գարիբալդիի, իտալացիների և լեհերի մասին: Խորհուրդ է տրվում հայերին ամեն ջանք գործադրել ստրկութեանից ազատագրվելու համար: Բացի այս, խիստ քննադատված է հոգեորականութեանը: Մեղադրանքների կետերից էր և այն, որ Շահաղիղի աշխատութեան մեջ հարձակման են ենթարկված ռուսական կառավարութեանը հալատուրիւմ և «Նալբանդովի կուսակցութեանը չպատկանող» անձինք:

Ահա այն հիմնական մեղադրանքները, որոնց համար առաջարկվում էր հանգիմանել գրաքննիչին, որ թույլատրել է գաղտնի նպատակներ հե-

տապնդող այդ վնասակար գրքի տպագրութիւնը և հսկողութեան տակ առնել գրքի հեղինակին:

Լրտեսագրի հեղինակի բուն նպատակը «Լեոնի վիշտը» քաղաքական անվտանգութեան, կառավարանքի տակ առնելն էր, բայց նա ընդհանրապես հետաքրքրական փաստութուղթ է¹ ժամանակի գրական-հասարակական միջավայրի որոշ խընդիրների և հատկապես «Հյուսիսամերիկի» ու Նալբանդյանի նկատմամբ հակառակորդ բանակի ներկայացուցիչների դիրքորոշումը լուսարանելու տեսակետից:

Շահագրիդի հակառակորդները չհասան իրենց հուսացած արդշունքին: «Լեոնի վիշտը» ուղարկվեց քննութեան Կ. Եղյանին. քննութեան արդշունքները հօգուտ հեղինակին էին, չնայած, Եղյանի դիտողութիւններէ մեջ ուշագրութեան էր առնված «...որ կան կառավարութեան դեմ ուղղված թշնամական տեղեր, ակնարկներ ալն մասին, որ ժողովուրդը չսկսեալ է կուրորեն հնազանդի ցարական կառավարութեան, շատ է խոսովում Գարիբալդիի մասին»²:

Բացի հիշյալ լրտեսագրից, գրվել էր և մի բողոքագիր «Լեոնի վշտի» ընդհանուր քննադա-

¹ Այս փաստութուղթը առաջին անգամ հրատարակեց Ա. Հովհաննիսյանը Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերում», 1935, էջ 705:

² Կ. Եղյանի եղրակացութիւնը «Լեոնի վշտի» մասին նույնպես առաջին անգամ տպագրվեց Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերում», էջ 706:

տական ոգու և հարուցած հարցերի դեմ: Շահա-
ղիղին անհայտ էր բողոքագրի հեղինակը, բայց նա
համոզված էր, որ այն գրված պետք է լիներ երեք
անձերի մասնակցութեամբ՝ Մ. Էմինի, Մ. Մսերյա-
նի և հետագայում ճեմարանի վերատեսուչ Գ. Քա-
նանյանի, որոնք հանձին Շահաղիղի տեսան
իրենց գաղափարական նոր հակառակորդին և
«Լեոնի վիշտը» ամբաստանեցին ճեմարանի
հոգաբարձու Սաչատուր Լուդարյանի մոտ: Վեր-
ջինս երկի քննութեանն հանձնեց ճեմարանի պրո-
ֆեսոր Իվան Կոնդրատիչ Բաբստին: Քննութեան
արդյունքը ի նպատակ Շահաղիղի էր: Բաբստի
տված կզրակացութեանից պարզվում է, որ մինչև
իսկ հարց է հարուցված կղեկ Շահաղիղին աշխա-
տանքից ազատել, որի դեմ իր տարակուսանքն է
հայտնել պրոֆեսորը.

„Он любим всем заведением; энерги-
чен, честен. Возможно ли его уволить?“¹:
«Լեոնի վիշտը», բացի ականհայտ հալածանքներից
ու գաղտնի ամբաստանութեանից, ինչպես ասա-
ցինք, մատնված էր անուշադրութեան ընդհանրա-
պես ժամանակի քննադատական, հասարակա-
կան մտքի կողմից: Այս մասին անդրադարձել է
Ալ. Ծատուրյանը 1894 թ. Մոսկվայում լույս տե-
սած «Ս. Շահաղիղի երեսնամյա հոբելյանը» վեր-
նագրով ժողովածուի ներածութեանում:

¹ Սմբ. Շահաղիղ, Հոբելյանի տարեգարձ, 1893, էջ 45:

«...«Լևոնի վշտի» նման մի փալլուն գործը համարյա աննկատելի մնաց այն ժամանակվա աշխարհիկ անփալլ և աղքատիկ բանաստեղծական գրականության մեջ»¹:

Ծառուրյանի խոսքը վերաբերում էր Շահաղիղի ստեղծագործությունն արժեքավորող լուրջ ուսումնասիրությունների բացակայությանը, այլապես հետագայում եղան Շահաղիղով՝ հատկապես «Լևոնի վշտով» զբաղվողներ, որոնք, բացառությամբ Եղիշե Մադաթյանի, չկարողացան գնահատել հեղինակի քաղաքական-հասարակական նպատակագրումները և արժեքավորել այն նորը, որ կապվում է Շահաղիղի անվան և հատկապես «Լևոնի վշտի» հետ: «Լևոնի վիշտը» համարվեց «Հյուսիսափալլ»-ի գաղափարների սոսկական կրկնությունը, զրկելով հեղինակին ինքնուրույնությունից և գեղարվեստական ընդհանրացման կարողություններից: Այս մասին հեղինակը Եր. Շահաղիղին գրած նամակներից մեկում ասում է:

«Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ հիշյալ թղթակցությունը (այսինքն՝ «Նոր Դարի» — Ա. Մ.) Մոսկվայի ցեցերի ծեփածն է: Մոսկվայի ցեցերը, իրանց նկարագիրը տեսնելով մեր գրքույկի 15, 16, 48 և 49 երեսների վերա, չէին կարող հանգիստ տեղը նստել: Ասածս հաստատում եմ այն բանից, որ գրություն եղանակը, — զուտ թշնամական, —

¹ «Մերատ Շահաղիղյանի երեսնամյա հորելյանը», 1894, էջ 6:

այն է, ինչ որ անցյալ տարին տպած պատք-
վիւրը «НОВОСТИ ДНЯ» լրագրի մեջ: Այնտեղ
ասած էր, որ «Լեոնի վիշաք» ամբողջապէս քա-
ղած է «Հյուսիսափայլի» առաջնորդողներէից. այդ
հոգւածի մեջ կրկնւած է նույն բանը, ավելացնե-
լով «այժմյան զանազան պարբերական հրատա-
րակություններից...»¹:

Շահադիւղի և «Լեոնի վշտի» շուրջը գոյու-
թյուն ունեցող սխալ մեկնություններին ու անտար-
բեր լուծյան վերջ տվեց երիտասարդ քննադատ
Ե. Մադաթյանը՝ «Սմբ. Շահադիւղյան, բանաստեղծ-
հրապարակախոս» ընդարձակ և շահեկան հոգւա-
ծով՝ տպագրւած «Մուրճ» ամսագրի 1891 և 1892
թվականների համարներում:

Քննադատը, ելնելով միանգամայն օբյեկտիւ
դիրքերից, փաստական մեջբերումներով ցույց
տվեց Նազարյանի և Շահադիւղի գաղափարական
ընդհանրությունները, բնավ չժխտելով բանա-
ստեղծի ինքնուրուշնությունը:

Երկրորդ հարցը, որը զբաղեցրել էր Մադա-
թյանին, հեղինակի և Լեոնի անհատական նկարա-
գրերի, նրանց խառնվածքի նուշնության ապա-
ցուցման հարցն էր: Այս բոլորից հետո ուսում-
նասիրության էր ենթարկել Լեոնի բարոյական-
հասարակական կերպարը՝ համարելով նրան նոր և
լուսավոր գաղափարների սերմանող, որի «...ուժը

¹ Գրականության և արվեստի թանգարան, Եր. Շա-
հադիւղի ֆոնդ, III բաժին, № 259:

յուր համոզմունքների անկեղծութիւնը և անկաշա-
ռութիւնը մեզ է, իսկ թուութիւնը՝ իրական կյան-
քին անծանոթ լինելու, կամքի անզորութիւնը և
անգործունեութիւնը մեզ»¹:

Ավարտելով պոեմի գրական-գեղարվեստական
վերլուծումը, Մաղաթյանը ցույց է տվել Շահա-
զիզի կրած ազդեցութիւնները ուսու և օտար գրա-
կանութիւններից՝ հատկապէս Բալլոնի «Չալիկ
Հարուգ»-ից:

Մաղաթյանի ուսումնասիրութիւնը նվիրված
էր ո՛չ միայն «Լևոնի վշտին», այլև հեղինակի
ողջ ժառանգութիւնը, բանաստեղծութիւններին
ու հրապարակախոսական երկերին: Ե. Մաղաթյա-
նը իրավամբ արժեքավորել է Շահազիզին իբրև
սիրո և բնութիւն երգչի, որպէս հայ նոր պոե-
զիայի հիմնադիրներից մեկի, մի բանաստեղծի,
որը երգել է ազատութիւն և հայրենասիրութիւն
սուրբ գաղափարները, անմիջականորեն արձա-
գանքելով հայ հասարակական կյանքի զարթոնքին:

Սմբ. Շահազիզի հրապարակախոսական երկե-
րը վերլուծելիս Մաղաթյանը ծանրացել է հատ-
կապէս նրա մանկավարժական հայացքների վրա,
նշելով դրանց առաջավոր բնույթը, իսկ «Հրապա-
րակախոս ձայնի» մասնակի վերլուծումներով փոր-
ձել է ապացուցել Շահազիզի մտածողութիւն
ինքնուրույնութիւնը, որոշ հարցերում նրա հա-
կադրութիւնն և քննադատական մոտեցումը Նա-

¹ «Մուրճ», 1892, № 1, էջ 121:

դարչանի նկատմամբ: Շահադիդը, գրում է Մա-
դաթյանը, «...ո՛չ որպես կույր երկրպագու, այլ
որպես համոզված գաղափարակից է մտնում Նա-
զարյանցի գրողակի տակ»¹:

Վերջնական եզրակացության մեջ Մադաթյա-
նը Շահադիդի պոեզիայում գերիշխողը համարել
է հրապարակախոսական տարրը, չնսմացնելով
երբեք բանաստեղծի վաստակն ու արժանիք-
ները:

Դառնացած քննադատների անհոգի վերաբեր-
մունքից, առանց սեփական ուժերի վերադնահա-
ման, Շահադիդը ինքը ևս փորձել է ցույց տալ
«Լեոնի վշտի» հասարակական նշանակութունը:
Եր. Շահադիդին գրած նամակում մի քանի տո-
ղերով նա բացատրել է, թե ի՞նչ մղումների ծը-
նունդ էր «Լեոնի վիշաք» և ինչ կենսական հար-
ցեր են առաջ քաշված այնտեղ:

«...Գլխ մի ժամանակ, երբ անաչառ դատա-
վորները, հայանի բան է, չհեռեկելով Թիգրանե-
րին (ալիսարկում է Տիգրան Հովհաննիսյանին—
Ա. Մ.) կտան «Լեոնի վշտին» իր տեղը հայ գրական
վերածնության մեջ: Այդ անաչառ դատավորները
ո՛չ «Լեոնի վշտի» ճրագին կնախանձին, և թե ար-
դարե մի այդպիսի ճրագ կա նրա մեջ, և ո՛չ կթաք-
ցընեն սույն հանգամանքը, որ նույն «վիշաք» ոչ թե
ճրագ է եղել, այլ միայն մի հաղիվ հազ առկալծող

¹ «Մուրճ», 1891, № 5, էջ 633:

պատրույք, որ խսկույն հանգել է և թանձր մուր է թողել նոր գրականության մեջ: Մի բուն միայն ևս չեմ հասկանում, թե ի՞նչպես է կարելի «հին հագուստ» կոչել այն, որ դեռ ոչ ոք չհագած մաշվել է: Մի՞թե մեղավոր է հագուստի կարող-ձեռքը, եթե նրա տերը — հասարակությունը — կամ մեռած է և կամ թե երկարատե հիվանդության անկողնում ընկած: «Լեոնի վշտի» գաղափարները, վերաբերյալ հասարակաց կյանքի կողմակերպության, շորի պես հնանում են այն ժամանակ, երբ «այդ հասարակաց կյանքը» արդեն մշակագործել է ինքը յուր մեջ և այնուհետև կարոտ է ուրիշ գաղափարների բարձրագույն առաջադիմության համար: Ինչ-որ «Լեոնի վշտը» պահանջել է հայերից, մինչև այսօր այնքան է իրագործվել, որ համարյա թե անկարելի է նկատել: «Լեոնի վշտի» առաջնորդող գաղափարը է մայրենի լեզվի զարգացումը հայերի մեջ, որի սկիզբը լիապես տրվում է մայրերի միջոցով: Վաթսուն թվականներից մինչև այսօր շատ է առաջ գնացել հայ կինը, և կարծում ենք, շատ և շատ փոքր: Հայ կինը առաջ է գնացել միայն նրանով, որ ամբողջապես ծվում է մոտանների բազմատեսակության մեջ: Այս տեսակ հարցերի մասին շատ երկար կլինեն խոսել: Իսկ մեր կրիտիկոսները, որոնց համար խոսքի տնտեսութուն չկար, անդադար շռայլում են տողեր ու

էջեր, միայն թե կարողանային «Լեոնի վշտի» նշանակութիւնը նսեմացնելու»¹:

Բանաստեղծի հուշերն արդարացան. ապա-
ղան արժեքավորեց նրա երկը, որը հայ գրական-
նութեան պատմութեան մեջ նշանակալից երեւելի
էր: Մինչ Շահազիզը պոեմի ժանրը մշակել էին
Մ. Թադիսդեանը, Ղ. Ալիշանը, Ռ. Պատկանյանը,
սակայն նրանց ստեղծագործութեան բովանդակու-
թիւնը դերազանցորեն պատմական անցյալն էր,
ինչպես օրինակ, Ռ. Պատկանյանի «Քաջ վարդան
Մամիկոնյանի մահը» և Ալիշանի «Պլպուն Ավա-
րայրին»: Շահազիզն առաջինն էր մեր գրականու-
թեան մեջ, որ իրական կյանքը, նրան հուզող առ-
օրյան դարձրեց պոեմի նյութ:

«Լեոնի վիշտը» լիրիկական-ռոմանտիկական
պոեմ է. նա չունի սյուժետային բարդ կառուց-
վածք և բազմաթիւ կերպարներ: Միակ հերոսը
Լեոնն է, որի ներքնաշխարհի, հուլիւրի, խորհըր-
դածութիւնների նկարագրութեանն է նվիրված
երկը:

Լեոնը հավաքական տիպ է, հեղինակի անհա-
տականութեան գերակշռող հատկանիշներով, և զըժ-
վար է սահմանադատել բանաստեղծին իր հերոսից:
Հեղինակի ներկայութիւնը, նրա միջամտութիւ-

¹ Գրականութեան և արվեստի թանգարան, Եր. Շա-
հազիզի ֆոնդ, III բաժին, № 231:

ներ, դատողությունները, համակրանքն ու հակակրանքն զգալի են ամենուրեք, հասարակական երևույթների, թե պատմական իրադարձությունների գնահատման դեպքերում:

Անկախ պաշտոնական հետապնդումներից, հալածանքից ու անտարբերությունից, մեծ էր «Լեոնի վշտի» առաջադրած հարցերի հասարակական նշանակությունը, այն դերն ու ներգործությունը, որ նա ունեցաւ ժամանակակից և հատկապես հետագա տասնամյակների հայ գրականության ու քննթերցող հասարակության վրա: Անժըխտելի է նրա ծառայությունը լեզվի՝ հատկապես աշխարհաբարի հաղթանակի ու ծավալման գործում, այն ժամանակ, երբ դեռևս ուժեղ էր պրաբարի մրցակցությունը և աշխարհաբարի հակառակորդների դիմադրությունը:

* *
* *

Շահագիլ-բանաստեղծի ամբողջական բնութագրման համար չպետք է անտեսել և այն հանգամանքը, որ բացի Կարաշրջանի և «Հյուսիսփայլի» գաղափարական ազդեցություններից, նա, որպես ստեղծագործող, կրել է ուսական և համաշխարհային գրականության ազդեցությունը: Ռուսական գրականությունից Շահագիլի նախատրած հեղինակներն էին Պուշկինը և Լերմոնտովը:

Յուրի Վեսելովսկուն ողջած նամակում, Շահագիլը հայտնել է, որ Պուշկինի պոեզիայի, հատ-

կապեա «Եւգենի Օնեգինի» և մասամբ «Դրաֆ Նուլինի» ազգեցութիւնը զգալի է «Լեոնի վշտում»։ Նա մինչև իսկ մտադիր է եղել ժամանակակից հայ կյանքից զրել «Եւգենի Օնեգինի» նմանությամբ մի պոեմ։

Պուշկինի ազգեցութիւնն զգալի է Շահազիզի բանաստեղծութիւնների առաջին ժողովածուի («Ազատության ժամեր») վրա։ Այստեղ է տպագրվել „Кубок янтарный“ բանաստեղծության թարգմանութիւնը։ Իր բանաստեղծութիւններից մի քանիսի բնարանները նա վերցրել է Պուշկինից։

Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը» եղել է Շահազիզի սիրած գրքերից մեկը, որից նա վերցրել է «Լեոնի վշտի» նախերգանքի բնարանը։ Լերմոնտովի „Прощались мы, но твой портрет“ բանաստեղծութիւնից երկու տող օգտագործված է «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» հրապարակախոսական աշխատության մեջ։

Շահազիզի ստեղծագործական կյանքի անբաժան հեղինակը Բալրոնն էր, որի երկերը կարդացել է հափշտակությամբ, ապրել, ոգևորվել անգլիացի մեծ բանաստեղծի ստեղծագործական հանճարով և հետևել նրան։

Բալրոնը գրական ասպարեզ մտավ 19 տարեկան հասակում «Ազատության ժամեր» („Hours of idleness“) ժողովածուով, որը նրա պատանեկան երախտիրքն էր։

Բալրոնի առաջին գրքույկը ինքնուրույն և

Թարգմանական բանաստեղծությունների ժողովածու է: Նա Թարգմանություններ կատարել է Էվրիպիդեսից, Էսքիլեսից, Կատոլլից, Հորացիոսից, Անակրեոնից, Վիրգիլիոսից և այլ հեղինակներից: Բալլրոնի անդրանիկ ժողովածուն ուներ կենսագրական որոշ արժեք, հետաքրքիր տվյալներ էր պարունակում բանաստեղծի պատանեկան տարիների ընկերական կապերի վերաբերյալ:

1860 թ. 19-ամյա Շահազիզը լույս ընծայեց իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն, Բալլրոնի գրքի՝ «Ազատության ժամեր» վերնագրով: Նմանությունը պատահական չէր. պատանի հայ բանաստեղծը գրական իր նախափորձերն սկսել էր Բալլրոնի հետեցությամբ:

Շահազիզն իր առաջին գրքուկով ընթերցող հառարակությանը՝ ծանոթացնում էր իր ներքնաշխարհի, հոգեկան տառապանքների ու հույզերի հետ. սգում էր եղբոր մահը, նկարագրում օտարության մեջ սովորող իր, միայնակ պատանու թախիծը, երգում բնությունը, հայրենի գյուղից ու հարազատներից անջատվելու վիշտը: Անշուշտ այս բոլորը միշտ էլ, բոլոր բանաստեղծների կողմից կարող են երգվել, բայց էականը Շահազիզի լիրիկայի ընդհանուր տրամադրությունն է, որը ներշնչված էր Բալլրոնից: Բալլրոնի լիրիկան անկեղծ է, կոնկրետ և հարուստ կենսագրական փաստերով: Այս ընդհանուր տրամադրությունն է, որ զգացվում է Շահազիզի մոտ, իհարկե վերարտա-

դրված ստեղծագործական անհամեմատ փոքր
ավյալներով և նվազ կարողությամբ:

Եթե գրական փորձի նախնական շրջանում
անդլիացի բանաստեղծը Շահազիզի համար գե-
րազանցապես ներշնչումների աղբյուր էր, ապա
հետագայում այդ ներշնչումներն ընդունեցին ավե-
լի որոշակի արտահայտություն, հատկապես «Լեո-
նի վշտի» մեջ:

1812 թ. լույս տեսավ «Զայլդ Հարուղը», ա-
վելի քան 50 տարի անց՝ 1865 թվականին՝ «Լեոնի
վիշտը»:

Տարբեր երկրների, քաղաքական-հասարակա-
կան տարբեր միջավայրերի ծնունդ են «Զայլդ
Հարուղը» և «Լեոնի վիշտը», սակայն, այս չի խան-
գարել, որ Շահազիզը որպես ստեղծագործող
հետևեր Բայրոնին:

Երկու պոեմները տարբեր են նաև իրենց հիմ-
նական բովանդակությամբ և հերոսների նկարա-
գրերով: Բայրոնի Հարուղը կյանքից հագեցած է,
հզվացած: Նրան անհայտ հեռուներն է մղում
կյանքի քաղմապիտությամբ ապրելու ցանկությու-
նը: Լեոնը՝ հախառակը: Հարուղը ապրում է իր
հայրենիքում և հիասթափված նրանից մեկնում է
գեպի օտար երկրներ, իսկ Լեոնը օտարության
մեջ է, հայրենիքի կարոտն ու նրան օգնելու գի-
տակցությունը հարկադրում են թողնել հյուսիսը:
Հարուղը ուղևորությունների ընթացքում վերապ-
րում է այցելած երկրների՝ Իտալիայի, Իսպա-

նիայի, Հունաստանի երբեմնի փառքը. նրա առջև վերականգնանում են պատմության անջնջելի էջեր հերոսների սխրագործությամբ և նա անցյալը հակադրում է այդ ժողովուրդների ներկա ստրկացած վիճակին: Տեսնելով այս բոլորը, Հարոլդը ապրում է համամարդկային վիշտ: Բայրոնի պոեմը միայն վառ զգացմունքներով հարուստ ճանապարհորդական օրագրություն չէ: Իր երկում նա անդրադարձել է ժամանակի քաղաքական-հասարակական հուզող հարցերին: Նա ջերմորեն արձագանքել է փոքր ժողովուրդների, մասնավորապես Հունաստանի ազգային-ազատագրական շարժմանը:

Շահազիզի՝ հերոսին՝ Լեոնին, տանջող ցավը հայ իրականությունն էր, հայ ժողովրդի քաղաքական վիճակը, նրա կուլտուրական և քաղաքական վերածնության խնդիրը: Հանձին հայ ժողովրդի նրա քնարից՝ որպես հումանիստ երգչի, հնչեցին ճնշված ժողովուրդների իրավունքի և ազատության պաշտպանության երգերը:

Լեոնի, ինչպես և Բայրոնի հերոսի թախիծը բողոք էր տիրող հասարակարգի դեմ: Բայրոնը և Շահազիզը միայն վշտի ու թախծի երգիչներ չէին, նրանց վիշտը զայրուլթի ու ատելության խոսք էր դաժան իրականությանն ուղղված:

«Լեոնի վիշտը» իր կառուցվածքով հիշեցնում է «Չալլի Հարուդին»: Բայրոնի պոեմը չափի սյուժեի առկայից ամբողջությամբ և ոչ էլ գործող անձինք:

Զորս գլուխներին կազմված պոեմի յուրաքան-
 չյուր գլուխ ինքնուրույն ամբողջություն է, ներ-
 քին կապը միակ հերոս Չալլի Հարուլդն է։ Այս է
 հիմնականը և ընդհանուրը երկու պոեմների կա-
 ուցվածքի մեջ։ Չալլի Հարուլդի և Լեոնի գործո-
 ղություն միջավայրերն ու նկարագրերի հիմնա-
 կան առանձնահատկությունները տարբեր լինելով
 հանդերձ, Շահադիդի հերոսը վերապրում է իր
 ազդի ողբերգությունը հոգեկան այնպիսի տառա-
 պանքներով, ինչպես Հարուլդը՝ տարբեր ազգերի։
 Մեկը մյուսին հաջորդող պատկերներով Լեոնի
 սուղ փրակենդանանում են հալ ժողովրդի պատ-
 մությունը գրվագները և անցյալը հակադրվում է
 ստրկացած ներկային։ Ուղեորություն ընթացքում
 ծանոթանալով իր ժողովրդի հասարակական կյան-
 քի դաժան պայմաններին, հայրենի երկրի բնա-
 կան գեղեցկությունն ու հարստություններին, Լեո-
 նը Հարուլդի նման անձնատուր է լինում տխուր
 խորհրդածությունների ու մտորումների։ Նրկուն
 էլ ապրում են նույն հոգեվիճակը, այն տարբերու-
 թյամբ, որ Հարուլդը Հունաստանի կամ Իսպանիա-
 լի անհետացած փառքն է գրվատում, իսկ Լեոնը՝
 իր հայրենիքի։

Շահադիդը և Լեոնը իրենց գաղափարական
 ու անհատական ընդհանուր նկարագրերով նույնն
 են, ինչ-որ Բայրոնը և Հարուլդը։ Պոեմում կան
 որոշ հատվածներ, լիրիկական շեղումներ, որոնք
 հիշեցնում են «Չալլի Հարուլդ»։

Յուլյ տալով ընդհանրությունները, բնավ
չպետք է չափազանցնել բայրոնիզմի ազդեցու-
թյունը Շահաղիղի վրա, ինչպես այդ արվել է
անցյալում: Շահաղիղին Բայրոնի հետ կապողը
մեծ երգչի ընդվզող քնարն էր հանուն ժողովուրդ-
ների ազատության և իրավունքների պաշտպա-
նության: Շահաղիղի «Լևոնի վիշաք» գուտ ազգա-
լին ստեղծագործություն է, 60-ական թվականնե-
րի հալ հասարակական-գրական շարժման հարա-
գատ ծնունդը:



Շահագիլի գրական ժառանգությունը հա-
րուստ է հրապարակախոսական աշխատություննե-
րով: Սկսած 1881 թ., երբ Մոսկվայում տպագրու-
վեց նրա «Հրապարակախոս ձայնը», հաջորդա-
բար լույս տեսան «Ամառնալին նամակները»,
«Հիշողություններ Վարդանանց տոնի առիթով»,
«Մի քանի խոսք իմ ընթերցողներին» ևրկերը,
որոնցից յուրաքանչյուրի հղացման առիթները
տարբեր լինելով հանդերձ, իրենց հիմնական բո-
վանդակությամբ շոշափում են ժամանակի հայ
իրականության քաղաքական-հասարակական կեն-
սական հարցերը:

1879 թ., Նազարյանի մահվանից մի քանի
ամիս անց, «Փորձի», 11-րդ և 1880 թ. առաջին
համարներում տպագրվեց Ալեք. Երիցյանի՝ «Ստե-
փանոս Նազարյանց և նրա գրական գործունեու-
թյունը» վերնագրով ուսումնասիրությունը: Երե-
ցյանը իր քննադատությամբ փաստորեն ժխտում

էր Նաղարչանի գերն ու նշանակութիւնը 50—60-ական թվականների մեր մտավոր վերածնութիւնը դործում, ամբողջովին կանգնելով սեփականութիւնների՝ Նաղարչանի հակառակորդների դիրքերում: Նաղարչանին նա մեղադրում էր հալ կլանքի, հալոց լեզվի, ժողովրդի վարքի ու բարքի անգիտութիւն, բանագոյութիւն, փաստերի ազավազման և բազմաթիվ նման այլ թերութիւնների ու զանցանքների մեջ: Նաղարչանին հասցեագրւում անպիտան մեղադրանքները միակողմանի էին և միտումնավոր:

Կարճ ժամանակ անց, հանդես եկավ Շահազիզը «Հրապարակախոս ձայն» պոլեմիկական աշխատութիւնը, որը նվիրւած էր Նաղարչանի և «Հյուսիսափայլի» պաշտպանութիւնը՝ Երիցյանի հարձակումներից:

Ուսումնասիրութիւն մեջ, նախքան բուն նյութերին անցնելը, Շահազիզը քննութիւն է հնթարկում հալ գրականութիւն վիճակը՝ սկսած հնագույն շրջաններից: Հասնելով XIX դարին, նա բարձր է գնահատում Աբովյանի «Վերք Հայաստանին» որպէս ազգային վերածնունդը, ազգային զարթոնքը ավատող առաջին վեպ, որը հակադէպն ներդրութիւն է տնեցել հալ գրականութիւն վրա:

«...ազգային լուսավորութիւն վերա խոսելով,— գրում է Շահազիզը,—մեծ անարգարութիւն պիտի լիներ մատենագրողի կողմից, և թե դա չհիշեր և Խ. Աբովյանի վաստակը: Առաջին արտասուքը, որ

մեր թմրության միջոցին ընկալ չալի վերքի վերա, էր Արուսիանի սքանչելի գործը՝ «Վերք Հաստտանի»¹:

Գրականության տեսական հարցերից Շահազիզին հատկապես զբաղեցրել է գրականության և կյանքի փոխադարձ կապը, գրականության զարգացման ընթացքը: Շահազիզը նշում է, որ կյանքի հարատև փոփոխությունների հետ փոխվում է նաև ոչդ կյանքն արտացոլող գրականությունը. «Եթե կյանքը, կենդանությունը հասկացվում է նյութերի անդադար փոփոխությունը թե՛ մտավորապես և թե՛ ֆիզիկապես,—ասլա ուրեմն և գրականությունը չէ մնում կապած և կաշկանդած յուր շրջանի մեջ, այլ ձևոն ի ձևոն հառաջ է խաղում այն նյութերի փոփոխության հետ, որպես նոցա արձագանքը ու պատկերը»²:

Շահազիզը միանգամայն ճիշտ է ըմբռնել գրականության ու կյանքի փոխհարաբերությունները: Այս առումով ուշագրավ են նրա դիտողությունները գրական ուղղությունների մասին: Նա արժեքավորում է և հաղթող համարում գրական այն ուղղությունը, որն առավել հարադատորեն է արտացոլում իրականությունը և կյանքի առաջադրած պահանջները. «Սովորաբար հաղթող է հանդիսանում այն ուղղությունը, — գրում է նա, — որ ար-

¹ Ամբ. Շահազիզ, Հրապարակախոս ձայն, էջ 36:

² Նույն տեղում, էջ 25—26:

տահալատում է հասարակութեան ամենահարկավոր ինքնակացութեան պայմանը և ժամանակակից է նորա բարոյական օգուտներին»¹:

Գրականութեւնը Շահազիզը իրավամբ համարում է ազգութեան պահպանման և զարգացման կարևորագույն գործոններից մեկը. «Գրականութեւնը, որպէս նախապատճառ քաղաքակրթութեան, ալն ազգերի համար է ուժ և զորութեւն, պահպանող ազգութեան, ամուր թումբ ընդդէմ թշնամու»²:

Ընդհանուր ալս հարցերից հետո, Շահազիզը վերլուծման է ենթարկում Նազարյանի ողջ գործունեութեւնը, և, հակառակ Երիցյանի, բարձր գնահատում «Հյուսիսամիայի» խմբագրի գրական-հասարակական դերը:

Շահազիզը ցույց է տալիս Նազարյանի հրակայական նշանակութեւնը, նրա առաջավոր հայացքները, ի հակադրութեւն Երիցյանի սահմանափակ մտածողութեան: Նա պերճախոս մեջբերումներ է անում Երիցյանից, Առ. Արարատյանից և Զերքեղյանից, համեմատում է նրանց լեզվական հայացքները աշխարհաբարի մասին և իրավամբ գտնում, որ Երիցյանը նույն պահպանողական դիրքերի վրա էր կանգնած, ինչ-որ Արարատյանն ու Զերքեղյանը, ալսինքն՝ պաշտպանում էր զրաբարը ընդդէմ աշխարհաբարի:

¹ Սմբ. Շահազիզ, Հրապարակախոս ձայն, էջ 26:

² Նույն տեղում, էջ 27:

Շահագրիզը, անցյալ դարի 50-ական թվականներին մտավոր վերածննդի մեծագույն նվաճումը համարում է աշխարհաբարի հաղթանակը, որը վերագրում է «Հյուսիսափայլին»:

«...Պ. Երիցյանը հիսնական թվականներին հնության և նորության պատերազմը մեջ բերելով, միաժամ չէ ընկնում տակ, որ դոցա շարժարանը «Հյուսիսափայլն էր»¹:

Ուսումնասիրություն հետագա ընթացքում ավելի մանրամասնություններ անդրադառնալով նույն հարցին, Շահագրիզը գրում է. «Նաղարյանցի հաղթություն պսակը հաստատ է. նոր աշխարհաբարի խնդիրը յուր հառաջագիծ գաղափարներով հավիտյան շաղկապված է նորա անվան հետ. ազգային մատենագրությունը խլելով գիտություն բռնակալներից, որ կամեին սեղմել ընդհանուրի հոգին և թաղել ամենայն քանքար, Նաղարյանցը կտակեց մեզ և՛ ժամանակի ինքնաշարժ սկիզբը»²:

Շահագրիզին հուզող հաջորդ հարցը կրոնն էր: Նա բավական հանդամանորեն կանգ է առնում Նաղարյանի կրոնական հայացքների վրա, ցույց տալով, որ Նաղարյանը ջերմեռանդ լուսավորչական է և երբեք չի դավաճանել իր կրոնական համոզումներին, ինչպես նրան մեղադրել է Երիցյա-

¹ Սմբ. Շահագրիզ, Հրապարակախոս ձայն, էջ 100:

² Նույն տեղում, էջ 162:

նը և մասնակից համարել Հայաստանում ունիթորական շարժման հրահրման մեջ:

Ամփոփելով Նազարյանի հրապարակախոսություն և գործունեություն հիմնական սկզբունքները, Շահազիզը գրանք բաժանում է հինգ խմբի.

Առաջին. Պալքար աշխարհաբարի հաղթանակի համար:

Երկրորդ. Ռեֆորմ հայ եկեղեցու մեջ, պալքար կրոնական փանտաիզմի և ազատ հոգևորականություն դեմ, չհերքելով երբեք կրոնի և եկեղեցու անհրաժեշտությունն ու դերը:

Երրորդ. Ազգի լուսավորություն և վերանորոգման համար իբրև միակ և ճիշտ ուղի հետևել Եվրոպային:

Չորրորդ. Հիմնել հանրային նպատակների համար կրթական և բարեօգուտ հասարակական կազմակերպություններ, որովհետև մարդը, ըստ Նազարյանի, լուր առանձնություն, միայնություն մեջ թույլ է և անկարող:

Հինգերորդ. Զարգացնել թատերական արվեստը, նկատի ունենալով նրա բարոյացուցիչ դերը, որովհետև թատրոնի ներգործությունը հասարակություն վրա առավել մեծ է, քան գրավոր խոսքը: Ըստ Նազարյանի, հայ ազգային թատրոնը պետք է վերականգնացնե անցյալի այն էջերը, որոնք կարող են դաստիարակել ժողովրդի ազատասիրություն և հայրենասիրություն ուղին:

Շահազիզը պաշտպանել է Նազարյանի քա-

դաքական-հասարակական դավանանքը, և համարել նրան ազգի վերանորոգիչ:

«Մեր վերանորոգողը Ստ. Նազարյանցն է. վերանորոգողի անունը ժառանգել է նա յուր հրապարակախոսության հանճարով և զազափարական ճշմարտասիրությամբ...»¹:

Շահազիզը ի վերջո համեմատություն է արել Նազարյանի և Նալբանդյանի միջև, նկատի ունենալով երկուսի հյուսիսափայլյան համատեղ գործունեության շրջանը:

«Այժմ կարող ենք ասել,—գրում է Շահազիզը,—որ արդարև Միքայիլ Նալբանդյանցը աջողության գործի է եղել «Հյուսիսափայլի» համար, բայց բուն «Հյուսիսափայլի» աջողությունը միայն դորան ընծայել,—վերջին տղայամտության գործ է: Նոր զազափարեներին հառաջադեմ ծառայելու համար բավական չէ մատենագրական քանքարը, այլ հարկավոր է բազմահայաց կրթություն, դարին և ժամանակին հավասար: Եթե Նազարյանցը չուներ Նալբանդյանցի մանրապատիւ ծանոթությունը ամենօրյա կյանքի հետ ու նորաստորագրական տաղանդը, բայց նա ուներ լիակատար գիտություն, գիտություն ընդհանուր մարդկեղեն զարգացավորության, որով և դրել է սկիզբը նոր զաափարակության»²:

¹ Սմբ. Շահազիզ, Հրապարակախոս ձայն, էջ 272:

² Նույն տեղում, էջ 287—288:

Այս Շահազիզի անկեղծ համոզումն էր, իսկ
բուն դրդապատճառը Նազարյանի և Նալբանդյա-
նի հասարակական դերերի համեմատության,
Երիցյանի գնահատականն է, որ տվել է Նալբան-
դյանին: Նա արժեքավորել է «Հյուսիսափայլի»
սկզբնական երկու տարիները, Նալբանդյանի աշ-
խատակցության շրջանը, որն իրավամբ «Հյուսի-
սափայլի» ամենափայլուն շրջանն էր. «Բայց այս-
տեղ էլ արդեն,—գրում է Երիցյանը,—ամսագրին
այդ կենդանութուն տվողը դորա օգնական տա-
ղանդավոր Նալբանդյանցն է»¹:

Զհամաձայնելով և միակողմանի համարելով
Երիցյանի գնահատականը, Շահազիզը փորձել է
ճշտել, բնութագրել նրանցից յուրաքանչյուրի տե-
ղը և դերը «Հյուսիսափայլի» մեջ:

Բարձր գնահատելով Նազարյանին, Շահազիզը
նույնքան բարձր է գնահատել և Նալբանդյանին:
Նա երկուսի, ինչպես և Աբովյանի, մեծագույն վաս-
տակը համարել է նրանց ստեղծագործության և
հասարակական գործունեության դեմոկրատական
ոգին: Իր ուսումնասիրության մեջ XVIII դարի
վերջի և XIX դարասկզբի գերմանական գրակա-
նության օրինակով ցույց է տալիս, թե ինչպես
գրականության դեմոկրատացումը հատուկ է
ազգային վերածնունդ ապրող ժողովուրդների
գրականությանը.

¹ «Փորձ», 1880, № 1, էջ 83:

«Դեմոկրատիկական ոգին, որ այն միջոցին տիրապետել էր գերմանական գրականությանը, որոշելով և դասակարգելով նոր ժամանակի հարաբերությունները, ներս բերեց և կենդանի հոսանք ու շարժողություն ժողովրդական կյանքի մեջ: Ռոմանտիկական վերացականությունը, որ ջանադիր էր վերականգնել միջին դարերը կրոնական և տապետական զանգվածով, այժմ փուլ էր հիկել հառաջագեմ գաղափարների առջև»¹:

Շահագիլի «Հրապարակախոս ձայնը» անցյալի գրական ժառանգությունը արժեքավորող մի առումնասիրություն էր՝ ուղղված Երիցյանի ոչ պատմական մոտեցման դեմ: Շահագիլը պահանջում էր պատմական գործիչներին արժեքավորելիս նկատի առնել քաղաքական-հասարակական այն կոնկրետ միջավայրը, ուր հանդես են հիկել նրանք ու գործել: Այս առումով «Հրապարակախոս ձայնը» մեր գրականության պատմության 50—60-ական թվականների ժամանակաշրջանը լուսաբանող կարևոր փաստաթղթերից է, որը ժամանակին գրական դեր կատարեց Նաղարյանին Երիցյանի միտումնավոր, հակապատմական քննադատությունից իրավամբ պաշտպանելու խնդրում: Հիմնական այս առաջադրանքին զուգընթաց, «Հրապարակախոս ձայնի» մեջ կան հետաքրքիր մտքեր, վերլուծություններ, հեղինակին

¹ Սմբ. Շահագիլ, Հրապարակախոս ձայն, էջ 13:

ճանաչելու, հատկապես նրա գրական ըմբռնում-
ներն ու հասկացությունները պարզաբանելու
համար:

Բայցի «Հրապարակախոս ձայնից», Շահազիզը
Նազարյանի մահվան առթիվ գրել է նրա դերն ու
հասարակական նշանակությունը մեծարող երկու
բանաստեղծություններ, որոնք ուսուցչի և բարե-
կամի հիշատակին նվիրված ջերմ խոսքեր են՝
երախտագետ աշակերտից նվիրաբերված:

Անձեռագործ դու մահարձան քեզ կանդնեցիր,
Ո՛չ հողանյութ, որպես երկաթ կամ որձաքար.
Հըզոր զըրչոյ, սուրբ վաստակով և անձանձիր,
Շունչ կենդանի և հետ մահվան հանդիսացար:

Ահա նոր Ազգ և նոր Լեզուդ յուր ձիթենին,
Քո ջրով բուսած, քե՛ղ է բերում, ո՛վ Ստեփանոս,
Խաղաղ մնա՛, մի՛ վրդովվիր, քոնն է դափնին,
Խավարի մեջ մեզ յույս ծագող, Պսոմեթեոս:

Աշխարհ ծնար և աշխարհիս դարձար մշակ,
Բայց չը տեսար այս աշխարհից անդորրություն.
Աշխատավոր մարդկանց բաժին է փշյա պսակ,—
Ա՛հ, քրտնաջան ոսկրներիդ խաղաղություն:

«Հրապարակախոս ձայնի» վերջին կցված է
մի փոքր ուսումնասիրություն՝ «Մեր առօրեական
չարն ու բարին» վերնագրով, որը նվիրված է
հատկապես սուլթանական լծի տակ ապրող թուր-
քահայերի վիճակին: Հեղինակը մեծ տագնապ է

ապրում հայերի կրօնական տարբեր գալստանք-ների հետեանքով առաջացած ներքին երկպառա-կությունների պատճառով:

«Բոլոր մեր ազգի թշվառությունը,—գրում է Շահազիզը,—այն բանումն է, որ նա երբեք չուր համագումար ուժերով չէ գլխել գեպի մի հայա-նի նպատակ. բաժան-բաժան, պատառ-պատառ միմյանցից, միշտ եղել է խաղալիք խորագետ թշնամու ձեռքում. և այսօր տաճիկ փաշաները գեղեցիկ պտուղ են քաղում նույն ազգի անընկերա-սեր բարք ու վարքից»¹:

Ժողովրդի գոյությանն սպառնացող այս վտանգը Շահազիզը քննարկել է ո՛չ միայն իր հրապարակախոսական երկերում, այլև ամենայն սրությամբ դրան անդրադարձել է և իր գեղարվես-տական ստեղծագործություններում: Զեյթունի ապստամբությանը նվիրված բանաստեղծության մեջ մենք տեսանք, թե նա ինչպես տհազանգում էր ապստամբներին՝ զգուշ լինել նույնքան վտան-գավոր մի այլ թշնամուց՝ կաթոլիկ քարոզիչ-ներից:

Գոյություն ունեցող իրականության դաժա-նությունները Շահազիզը տեսնում էր բոլոր ման-րամասնություններով և, ի պատիվ նրան, պետք է նշել, որ վերապրելով իր ազգի քաղաքական

¹ Ամբ. Շահազիզ, Հրապարակախոս ձայն, էջ 347—348:

ու բարոյական ողբերգությունը, երբեք չմատնել-
վեց հուսահատության: Նա լավատես էր ապագա-
յի նկատմամբ և երիտասարդությանը համարում
էր այն ուժը, որն իր ժողովրդին հասցնելու էր
մարդկության առաջավոր մտքի նվաճած բար-
ձունքներին, խառնարի ու տգիտության դեմ պալ-
քարելով:

«Այո՛, ևս հավատում եմ մի առավել պայծառ
ժամանակի ա՛յն ազգի համար, որի մեջ ծնվել եմ
և մեծացել. ևս հավատում եմ, որ այս իմ առաքի-
նական զգացմունքը փոխանորդաբար պիտի անցնի
ազգից ազգ, մինչև այդ ազգը կհասնի լուր ցան-
կացածին. և եթե՞ իմ սիրտս չբաբախվի այդ սուրբ
ողևորությամբ, ապա ի՞նչ հուսով այսքան երկար
խոսում եմ՝ ձեր հետ, Հայե՛ր: Ես գիտեմ, որ
մարդկությունը եթե ո՛չ շարունակաբար, բայց
մշտապես առաջ է գնում, և մենք, որպես մի
փոքրիկ հասարակություն, մարդասեր դարձա-
օրենքով ապահովված, չպիտի դադարինք այդ
հառաջադիմության ճանապարհին...

...Իմ միակ հույսս է այն մանուկ ազգը, որի
կենդանության տերևները ահա սկսում են կանա-
չել»¹:

Ի՞նչ հեռանկարներ ու հույսեր կալին «մա-
նուկ ազգի» կենդանության համար և որո՞նք էին

¹ Սմբ. Շահազիզ, Հրապարակախոս ձայն, էջ 350—351:

Նրա զարգացմանը նպաստող ու արգելափակող ուժերը: Ազատութիւն ստրկութիւնից և միջնադարյան խաւարից, լուսավորութիւն, ազգային լեզվի ու նկարագրի պահպանում, երիտասարդ սերնդի՝ որպէս մարդկութեան ազագայի ճիշտ դաստիարակութիւն, պալքար կրօնական նախապաշարումների, կամայականութիւնների և չարաշահումների դեմ,—ահա Շահազիզի երկերի հիմնական հարցերը, որոնց նա անդրադարձել է տարբեր վերնագրերի տակ լույս տեսած իր աշխատութիւններում:

1897 թ. լույս տեսավ Շահազիզի «Ամառնային նամակները», շարժաւիթը՝ Գ. Խալաթյանի «Армянский эпос в истории Армении М. Хоренского» գիրքն էր:

Պաշտպանութեան տակ վերցնելով Խորենացուն նրա դեմ հարուցվող մեղադրանքներից, Շահազիզը հաճախ դուրս է գալիս բանասիրական պրպտումների սահմաններից:

Նրա համար Խալաթյանը և Գարագաշյանը տոբիթներ էին միայն, ժամանակի հուզող հարցերին անդրադառնալու համար.

«Ինչպէս տեսնում ես,—հայտնում է Շահազիզը,—գրեցի քեզ ոչ Ա. Գարագաշյանի և ոչ պ. Խալաթյանի շարադրութեան մասին, այլ շարադրութեան ստիժով»¹:

¹ Սմբ. Շահազիզ, Ամառնային նամակներ, էջ 138:

Շահագիղի հայացքներն իր ապրած ժամանակաշրջանի գեպքերի, քաղաքական-հասարակական հարցերի մասին ավելի հետաքրքրական և կտրեոր են, քան պատմական զանազան անցքերի կոմպիլատիվ բնույթ կրող վերլուծումները¹:

Շահագիղը պատկանել է այն մտավորականների թվին, որոնք իրենց հայացքը թե՛ գեղարվեստական ստեղծագործության մեջ և թե՛ հրապարակախոսական երկերում սեռեւ են միշտ գեպի նորը, առաջավորը: Եվ այս գիրքերից նա վերանայել է պատմութունը, անցյալն իր դրական և բացասական էջերով օրինակ ծառայեցնել ներկային, ներառյալ մինչև իր օրերի քաղաքական-հասարակական գեպքերը, որոնց ըմբռնման ու մեկնաբանման մեջ զգացվում է հեղինակի սուր և թափանցող միտքը, հարցերի ճիշտ ընկալումը:

Շահագիղի տեսադաշտից չի վրիպել կապիտալիստական աշխարհի անհավասարութունը, հալիչտակութուններն ու իրավունքի ոտնահարումը, ինչպես և ռազմամոլ բնույթը: Նա սուր երգիծանքով ներկայացրել է «Երկաթյա կանցլեր» Բիսմարկին:

¹ Շահագիղը ինքը խոստովանել է, որ օգտվել է պրոֆ. Պետրովից՝ «որից զլիսավորաբար առել եմ այդ հոդվածը», այսինքն ուսումնասիրության այն բաժինը, ուր խոսում է պատմության, նրա գերի և հասարակական նշանակության, ինչպես և XVIII դարի փիլիսոփայության հարցերի մասին:

«Այն ինչ մեր օրերում, իշխան Բիսմարկի շնորհիվ, մեծ փառքի է հասել Ուլիմպիոսի աքսորական՝ չոլախ Հեփեստոսը, որովհետև երկաթ է ծածում կռուպյան թնդանոթների համար և երկաթի սրանք ձուլում վերանոց սերունդի համար»¹:

Հասարակական խնդիրներին զուգահեռ, Շահադիդն անդրադարձել է պատմության և գրականության դերին ու նշանակությանը: Գրականությունը, ինչպես նախորդ աշխատության մեջ, նույնպես և այստեղ, նա համարում է կյանքի երևույթները և կենսական առաջադրանքները արտացոլող արվեստ:

«Հայտնի է մեզ բոլորիս, — գրում է նա, — որ մինչև վաթսուհանյան թվականները, գրականությունը մեր մեջ համարվում էր որպես արվեստ, կտրված կենսական հարցերից և յուր հիմքը դրած ավելի օգի վերա, քան թե հողի: Նույն թվականներին՝ առաջ Խ. Աբովյան, բայց գլխավորաբար Ս. Նազարյանց և Մ. Նալբանդյանց յուրյանց կրիտիկական հոգովաներով ցույց տվին, որ գրականությունը ազգի պատմության գլխավոր գործորդն է. պատկանում է գեղարվեստին և գիտության և բացի լոկ ներշնչումներից, պետք է տարածեն ժողովրդի մեջ իդեաներ»²:

¹ Սմբ. Շահադիդ, Ամառնային նամակներ, էջ 139:

² Նույն տեղում, էջ 174:

Գրականության և արվեստի գնահատման հարցերում Շահազիզը կանգնած էր դարաշրջանի առաջավոր դիրքերում: Նրա գիտողությունները գրականության մասին այժմ էլ հետաքրքրական են և ուշագրավ: Առաջնությունը տալով գրականության մեջ սեփական ուղղությանը, նա օրինակներ է բերում ռուսաց գրականությունից, հատկապես Գոգոլից, որը կյանքը վերարտադրեց ո՛չ թե նրա գեղեցիկ ու հրապուրիչ կողմերով, այլ ներկայացրեց ճորտատիրական իրավակարգի անխուսափելի հետևանքն հանդիսացող ռուսական մռայլ իրականությունը, անխնա մերկացրեց ցարական Ռուսաստանի բյուրոկրատիան, կալվածատիրության ու չինովնիկների աշխարհը:

Շահազիզն ուներ գրականագիտական այնքան հասունացում, որ կարողացավ արժեքավորել, վերբարձրացնել ռուս հանճարեղ գրողի ստեղծագործական ատանձնահատկությունները.

«Այլ բան է Գոգոլը. սա պոպուլեն և սելիսֆներիկերով երևան հանեց ռուսաց նիստ ու կացի մանրանկարը, պոմեշչիկների ընտանեկան կյանքը չինովնիկների բյուրոկրատիական ձևապաշտությունը և սոհառարակ երկրի մոմխական անշարժությունը, այնպես որ օրհասականները դուրս պրծան նահապետական որջից և սկսվեց մի սարսափելի իրարանցում և պատերազմ, որ շարունակվում է մինչև օրս:

Այս գոգոլյան ուղղությունը և այսօր իսկ

մնում է տիրապետական ուսաց ընտիր գրական-
նության մեջ»¹:

Շահազիզը Գոգոլին բարձր է գնահատել որ-
պես Ռուսաստանի ժամանակակից կյանքը գեղար-
վեստական խոսքի միջոցով տաղանդավոր պատ-
կերողի, ընդգծելով նրա ռեալիստական արվեստի
հզորութունը:

«Գոգոլի մեծ արժանավորութունը նրանումն
է, որ նա յուր տիպերը առնում է կենդանի շրջա-
նից, այս պատճառով և այդ տիպերը խիստ ռեա-
լական են և պլաստիկական գծերով»²: Շահա-
զիզը գրական լեզվի և ոճի հարցերը քննելիս ևս
եղնում է ռեալիզմի պահանջներից: Ոճի «վայել-
չությունը» նա տեսնում է պարզության մեջ, միա-
ժամանակ, նա գտնում է, որ գրական լեզուն
պետք է հարստանա՝ «...գավառականի կենդանի
ձևերը փոխ առնելով և մասամբ կանոնավորվելով
հմուտ գրողներից ու թարգմանիչներից»³:

«Ամառնային նամակներում» Շահազիզին
զբաղեցրել են մարդկային հասարակարգի, հատ-
կապես հայ ժողովրդի հոգեկան և բարոյական կե-
ցությանն առնչվող բազմաթիվ երևույթներ: Այս
բաժնում մասնակի ուշադրության են արժանի
տասարդ սերնդի մտավոր կրթության ու դաս-
տիարակության խնդիրները:

¹ Սմբ. Շահազիզ, Ամառնային նամակներ, էջ 175—176:

² Նույն տեղում էջ, 178:

³ Նույն տեղում, էջ 186:

Շահազիզը ամենայն վճռականությամբ պաշ-
քար է հայտարարում «միջնադարյան մտածողու-
թյան», հնամուլության դեմ, որոնք ազգի դար-
դացման մեծագույն արգելքներից են:

Փոքր ժողովուրդների, այդ թվում հայ ժո-
ղովրդի համար մահացու համարելով ձուլման
վտանգը, Շահազիզը ազգության պահպանման
գործում առաջնակարգ դեր է հատկացնում դպրո-
ցին, նշելով, որ «մտավոր զենքի շարժող ուժը
դպրոցն է», հետևաբար և ուսուցիչն է այն հզոր,
ներգործող անձը, որ մշակում է մատաղ սերնդի
միտքը, բարոյական նկարագիրը և կազմակերպում
հոգեկան կերտվածքը: Իբրև փորձառու մանկա-
վարժ, Շահազիզը կարողացել է հմտորեն բացա-
հայտել, թե ի՞նչ մեծ դեր է վիճակված ուսուցչին
ազգության պահպանման և նրա ապագայի մեջ:
Եվ այս առթիվ է, որ նա շարագրել է իր ման-
կավարժական մի քանի էական դրույթները:

Շահազիզը պաշտպանում է աշակերտի ան-
հատական ընդունակությունների, հակումների ա-
զատ դարդացման սկզբունքը, բացասելով ծեծի,
ահաբեկման հակամանկավարժական միջոցները:
Ուսուցչի և աշակերտի կապերը խարսխված են
լինելու «կենդանի» և «ազատ» փոխհարաբերու-
թյունների վրա, միայն այդպիսով կարող է ապա-
հովվել ուսուցչի հաջողությունը: Հիմնված անձ-
նական մեծ փորձի վրա, Շահազիզը մանկավար-
ժական իր ողջ ուսմունքը տողորել է հումանիզ-

մի ոգով: Նա պահանջում էր ժամանակի տառա-
վոր գաղափարներով դաստիարակել ու զինել նոր
սերնդին, որովհետև նա է մարդկության ապագան,
նա է կյանքի վերանորոգիչ ուժը՝ ստեղծողը նորի:
«Ամեն ազգի վերանորոգիչ ուժը յուր մատաղ սե-
րունդն է»: Ահա այն թեզը, որին Շահազիզը ան-
դրադարձել է լազմիցս, որը գաղափարական հիմքն
է նրա գեղարվեստական ստեղծագործության և
հրապարակախոսական երկերի:

Հասարակական ակտիվ կյանքով ապրող բա-
նաստեղծ-քաղաքացուն, բացի ժողովրդի հոգեկան
վիճակից և դաստիարակչության հարցերից, հե-
տաքրքրել է և հասարակական գործչի կերպարը:
Ըստ Շահազիզի, վերջինը պետք է ծառայի վեհ
գաղափարների և իդեալների, նա կոչված է վի-
րահատի նշտարը ձեռքին արմատախիլ անել իրա-
կանության ժահրոտ, փտած, խոցելի կողմերը և
ո՛չ թե այն քողարկել: Նա անձնուրացությամբ
պայքարելու է, մինչև իսկ պատրաստ անձը զո-
հաբերելու:

«Ապրել հասարակության մեջ չի նշանակում
մասնակից լինել և նորա թերություններին: Ընդհա-
կառակն, գործիչը անդադար պիտի մաքառե այդ
թերությունների դեմ թե՛ գրչով, թե՛ գործով:
Հասարակության անկեղծ բարեկամը ալիպիսի
դեպքերում չպիտի խնայե և ո՛չ մի միջոց, մինչև
անգամ, եթե պահանջում է հանգամանքը և զին-

վորի պես, սուրը ձեռին, ընկնել կովի գաշտում»¹:

«Ամառնային նամակները» լույս տեսան 1897 թ., Արեւմտահայաստանում համիդյան արշունարբու կոտորածներին հաջորդող սեպտեմբերի շրջանում: Սրտի գառնությամբ ու ատելության թուլնով Շահազիզը անարդանքի սլունին է գամում հվրոպական տերությունների վստիք, անհոգի վերաբերմունքը դեպի հայերը.

«...Այս նամակս գրում եմ 14 օգոստոսի, որ պիտի արձանագրվի ոչ որպես «բարդուղիմեյան գիշեր», այլ բարդուղիմեյան օր և դժոխքի արյունահաշտդախ հաբսանիք, որ կատարվեց աշխարհաքաղաք Պոլսում, փափկասիրտ հվրոպացւոյ աչքի առջև»²:

Նույն թուրքիայի բարբարոսությունները և հվրոպական «քաղաքակիրթ» տերությունների դժան անտարբերությունը հարկադրեցին Շահազիզին հանգել ծանր, բայց իրավացի հետևության, որ ժամանակակից իրականությունը «փառաբանիչ է հանդիսանում մարդազոհության կոուլտին»³:

* * *

Շահազիզի կյանքի վերջին տարիների աշխատությունները ղուգադիպեցին 1905 թ. սեպտեմբերին:

¹ Սմբ. Շահազիզ, Ամառնային նամակներ, էջ 182:

² Նույն տեղում, էջ 35:

³ Նույն տեղում, էջ 144:

ցիտյին նախորդող ազատագրական շարժման վերելքին:

Բանաստեղծն իր աշխարհայացքով, հասարակական իդեաներով հեռու էր ռեուլյուցիայից, սակայն երկրում ծավալված բանվորական շարժումները, գյուղացիական հուզումները, ցարիզմի հալահալած քաղաքականությունը, հայկական դպրոցների փակումն ու եկեղեցական կալվածների բռնագրավումը որոշակի ազդեցություն ունեցան Շահազիզի քաղաքական-հասարակական հայացքների վրա: Այդ են վկայում բանաստեղծի այս շրջանի նամակագրությունները հարադատների հետ, «Հիշողություններ Վարդանանց տոնի տոթիթով» և «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» աշխատությունները:

Շահազիզի ուշադրությունը սեռված էր Ռուսաստանի փոքր ազգերի, մասնավորապես հայերի նկատմամբ ցարիզմի վարած ազդային քաղաքականությամբ: Նամակների բովանդակությունից պարզվում է, թե ինչպիսի ուշադրությամբ է նա հետևել ժամանակակից ռուսական մամուլին: 1904 թ. նոյեմբ. 12-ին եղբորորդուն գրած նամակում, բանաստեղծը դիպուկ տողերով մերկացրել է Սուլվորինի ղեակցիոն օրգան «Новое время» թերթը.

«Այո՛, ես էլ կարդում եմ համեմատաբար ազատ մամուլի թերթերը, բայց մշտափոփոխ և բազմերեսանի Սուլվորինի ազատամիտ հոսանքին չեմ հավատում. ես նրա թերթը ամենավը-

տանգավորն եմ համարում համայն կայսրության մեջ»¹:

Նույն նամակում Շահազիզը ամենախիստ որակումներով ու երգիծական բառախաղերով մերկացրել է ցարական ինքնակալության ներկայացուցիչներ ֆոն Պլեկի և Գոլիցինի հակաժողովրդական գործունեությունը.

«Ռուս մեծավորները, որպիսի են ֆոն-թքածները (ֆոն Պլեկ. — Ե. Շ.) և գալլածիններ (Գոլիցիններ. — Ե. Շ.) կարծելով, որ հպատակները քանի լուսավորված լինեն, այնքան էլ կարող են վրդովել աշխարհի բարօրությունը, ամեն արգելքներ դործ են դրել, որ այդ հպատակները խավարում նստեն»²:

Հիշյալ նամակից տարիներ առաջ, 1901 թ., Մոսկվայում հրատարակվեց «Հիշողությունների Վարդանանց տոնի առիթով» աշխատությունը, ուր շոշափված էին վերոհիշյալ հարցերը անուղղակի ձևով, որպես պատասխան Կովկասի կառավարչապետ Գոլիցինի, Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկու և „Кавказ“ պաշտոնական թերթի խմբագիր, բանաստեղծ Վելիչկովի հայահալած, մոլեղնոդ քաղաքականությունը:

Աղգալին լեզվի ու գրականության պահպանման, երիտասարդության դաստիարակության հարցերը միշտ եղել են Շահազիզի ուշադրության

¹ Եր. Շահազիզ, Սմբատ Շահազիզի կենսագրությունը, 1944, էջ 70:

² Նույն տեղում, էջ 71:

կենտրոնում, սակայն նրանք այնքալի հրատապ կերպով ծառանում են բանաստեղծի առջև այդ տարիներին: Ժամանակի հրամայական պահանջն էր պաշարել մոլեգնած ցարական սեակցիայի հաշա-հալած քաղաքականության դեմ:

Վարդանանց օրինակով Շահազիզը գիտում է նոր սերնդին, խրախուսելով նրանց մեջ ազնվություն և հայրենասիրության վեհ դատարաներ. «Բայց այստեղ հոգւածիս նյութը Վարդանանց երիտասարդական գործը լինելով, չեմ կարող չդիմել մեր երիտասարդ սերնդին և ասել. ո՞վ ազնիվ սերունդ, ցանիր դեղեցիկն ու աստվածավիշնը, որ քո ալիքն էլ կանաչի բարի սերմերով, ցանի՛ր, և թե կամենում ես, որ դու, քո ընտանիքը, քո ազգն էլ բախտավոր լինիք»¹:

Նույն V դարի հերոս հայուհիների կերպարները Շահազիզին ներշնչում են այն հաստատ համոզումը, թե մատաղ սերնդի դատարակության մեջ մեծ դերը վիճակված է կանանց. մայրն է մանուկի առաջին դպրոցը: Եվ որովհետեւ Շահազիզը մանկան դատարակությանը տալիս է քաղաքական նշանակություն, հետեւաբար՝ «Միակ դենքը, որ մենք այսուհետեւ պիտի գործ դնենք վտանգավոր հոսանքների դեմ,— այդ մանուկների

¹ Սմբ. Շահազիզ, Հիշողություններ Վարդանանց տոնի տոթթով, էջ 48:

դաստիարակութիւնն է, որ նույնիսկ բնութիւնից հանձնված է ձեր մալրական խնամքին»¹:

Շահազիզի «Հիշողութիւններ Վարդանանց տոնի առիթով» երկը պատմական ուսումնասիրութիւնն է: Պատմութիւնը այն կենդանի վկան էր, լավագույն օրինակը, որի օգնութեամբ նա ցանկանում էր բարձրացնել լեզվի, կրոնի, ինչպես և ժամանակակից հայ հասարակական-քաղաքական կյանքին հարակցվող կենսական մի քանի խնդիրներ: Այս մասին են վկայում Եր. Շահազիզին ուղղած նամակի այն հատվածները, ուր բանաստեղծը հայտնում է, թե սկզբում ինքը ցանկացել է գրքի վերնագիրը դնել «Կարևոր խորհրդածութիւններ», բայց գրաքննչական խստութիւններից վախեցած, հրաժարվել է: «Գործը Հազկերտի, Միհրներսէսի և պարսիկների անունով հարմարացրած է ներկա կարևոր կղրակացութիւնների հետ և կարծում եմ բավական հետաքրքրական պիտի լինի հասկացողների համար»²:

Շահազիզին զբաղեցնում էր ժողովրդի մտավոր և բարոյական ծանր դրութիւնը, մատաղ սերնդի ազգային դաստիարակութեան հարցը, դպրոցների վիճակը և կրոնի դերը հասարակական կյանքում: Ահա կենսական այն խնդիրները, որ

¹ Սմբ. Շահազիզ, Հիշողութիւններ Վարդանանց տոնի առիթով, էջ 59:

² Եր. Շահազիզ, Սմբ. Շահազիզի կենսագրութիւնը, 1944, էջ 71:

րանտատկզծը արծարծում է հիշյալ աշխատության մեջ, միաժամանակ կոչ անելով հետեւել եվրոպական քաղաքակրթությանը.

«Ամեն ազգի առաջադիմության հաստատ ճանապարհը է խոստովանել յուր բարոյական ցավերը և առանց ծածկելու դնել դրանց հրապարակի վերա: Հին մեղքերը մեզանից անպակտս կմնան, մինչև որ մենք չընդունենք եվրոպեաբար մտածելու և գործելու եղանակը»¹:

Դիմելով պատմության, Շահազիզը քննության է առնում զրադաշտական կրոնը և այն կործատաբեր հետեւանքները, որոնց կարող էր ենթարկվել հայ ժողովուրդը կրոնափոխության պարագայում: Կրոնը, ըստ Շահազիզի, ազգի պահպանման հիմնական նախադրյալն էր, և պատմության օրինակներով նա ցույց է տալիս օտար ազդեցությունների՝ հատկապես օտար լեզվի և օտար դպրոցների քաջքալիչ ներգործությունը:

Ազգային կուլտուրայի, դպրոցի, լեզվի և գրականության զարգացման հարցերն առաջ քաշելով, Շահազիզի նպատակն էր պաշտարել մի կողմից ցարական ռեակցիայի, մյուս կողմից կաթոլիկ քարոզիչների դեմ, որոնք, թե՛ մեկը և թե՛ մյուսը սպառնում էին հայ ժողովրդի գոյությանը:

¹ Սմբ. Շահազիզ, Հիշողություններ Վարդանանց տոնի տոթթով, էջ 24:

1903 թ. լույս տեսավ Շահազիզի «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» աշխատութիւնը։ Այստեղ ևս բանաստեղծի ուսումնասիրութեան հիմքը փոքր ազգութիւնների՝ հատկապէս հայ ժողովրդի ազգային ինքնութեան շարժումն, ասիմիլյացիայի լուրջ վտանգին դիմադրելու խնդիրն էր. «Ի՞նչ անենք, — տալիս պատասխան է հեղինակը, — որ փոքր ազգերը չհալվին ժամանակիս լայնափոր և լայնաբերան քուրայի մեջ»¹։

Հարցի պատասխանը որոնելու համար նա դարձյալ հետադարձ հայացք է նետում դեպի անցյալը, արժեքավորում Մամիկոնյան տոհմի մեծ դերն ու ժողովութիւնները հայ ժողովրդի անկախութեան պահպանման խնդրում։

Պատմութիւնից անցնելով ժամանակակից անցքերին, Շահազիզը օրինակներ է բերում միջազգային կյանքից, թե ինչպէս եվրոպացիները արեւելքի մի շարք ժողովուրդների՝ չինացիներին և բուրերին մատնում են վայրագ ստրկացման, զրկելով նրանց ազատութիւնից։

«Եվրոպայի վարմունքը Չինաստանի հետ կմնա մի սե բիծ համաշխարհային պատմութեան մեջ, մի վերին աստիճանի անիրավութեան կոթող, որովհետեւ այն անպաշտպան աշխարհը ողողվեց լուր հարազատ դավաճանների արյունով»²։

¹ Սմբ. Շահազիզ, Մի քանի խոսք իմ ընթերցողներին, էջ 22։

² Նույն տեղում, էջ 24—25։

Զինացիների իրավունքների պաշտպանութ-
 լւանն է նախընտրված բանաստեղծի մի նամակը՝
 ուղղված իր հղբորոքուհուն: Շահագիլիլը համակրան-
 քով լցված դեպի չինացիները, ամենայն խստու-
 թյամբ դատապարտում է «քաղաքակիրթ» ազգե-
 րի դողալից թափանցող բարբարոսությունները: «Զինա-
 ցիների մեծ բռնությունը¹, չինաց պատերազմի ժամա-
 նակ, մեղ էլ ոչ փոքր բռնույթ պատճառեց դրամա-
 կան տեսակետից: Թեև այս աշպես է, բայց ես
 շատ ուրախ եմ, որ արդարության դավադանը
 բարձրացավ մեղավորի գլխին—Եվրոպայի: Այն-
 քան արհամարհանք, որ Մաքիավել Եվրոպան
 հասցրեց խաղաղասեր խեղճերին, հարկավոր էր,
 վերջապես, վրեժխնդրութուն: Այժմ, կարծես, չի-
 նացիների մեծ փրկիստիա Մինչդին էլ չի կարող
 կրկնել յուր մի անգամ ասածը. «Ես, հիրավի,
 լսել եմ, որ բարբարոսները էլի մի բան սովորել
 են չինացիներից, բայց ես հրեք չեմ լսել, որ
 Զինաստանը մի բան սովորած լինի բարբարոս-
 ներից...»²:

¹ Շահագիլիլ այս նամակը ամենայն հավանականու-
 թյամբ արձագանքն է 1899—1901 թթ. Զինաստանում
 ծագած հակաֆեոդալական, հակաիմպերիալիստական ժո-
 դովրդական շարժման, որը կոչվում էր բոկսյորական
 շարժում (բռնություն սիմվոլն էր արդարության և համա-
 ձայնության):

² Եր. Շահագիլի, Սմբատ Շահագիլի կենսագրություն-
 նը, 1944, էջ 64:

Գաղութարարների նվաճողական քաղաքականութիւնն զլիսավոր նպատակն էր նախ և առաջ հպատակ ժողովրդի քաղաքական ստրկացումը տնտեսական շահագործման հետ միասին, որոնց հաջորդում էր հալածանքը հոգևոր կուլտուրայի, մայրենի լեզվի ու գրականութիւնն դեմ, և այսպիսով «...սկսվում է մի կատարյալ որսորդական արշավանք, ինչպես վայրենի թռչունի և վայրենի դադանների դեմ: Տիրապետողը առում է. «այս ավելորդ, այս պակասորդ. պետք է խուզել, պետք է դղել, պետք է դղել», — բայց այնպես է խուզում, որ կաշին էլ հետն է՝ քերթում և այնպես դղում, որ բոլոր ոսկորներն էլ միասին ջարդում»¹:

Ահա թե ինչպես հոգևոր ստրկացմանն հաջորդում է տնտեսական քայքայումն ու ֆիզիկական բնաջնջումը:

Շահագլխի գիտողութիւնները սուր են և ամբողջութեամբ ուղղված գաղութային քաղաքականութիւնն դեմ, բայց երբ նա անդրադառնում է բուրերի ազդակին ինքնուրույնութիւն և մարդկային իրավունքների պաշտպանութիւն հարցերին, դրում է.

«Ինչ ասենք այն խեղճ բուրերի մասին, որ ամբողջ երկու տարի պատերազմեցին բազմաթիվ անգլիական զորքերի դեմ և վերջ ի վերջո պետք է հրաժարվեին անկախութիւնից և բռնի մահի

¹ Սմբ. Շահագլխ, Մի քանի խոսք իմ ընթերցողներին, էջ 23—24:

Յենթարկվեին: Թեպետ չի կարելի չհամակրել անդլիսացւոց մտքի մեծության, նրանց դաստիարակչական ու վարչական սիստեմին ու հասարակաց տարք ու կարգին, բայց այդ համակրանքը չի կարող խեղդել մեր մեջ արդարության ձայնը դեպի բուրերը: Դժբախտաբար ոչ մի եվրոպացի պետութիւն իրավունք չունի դատապարտել այդ կոպիտ ուժի բռնութիւնը, որովհետեւ ոչ մեկին էլ չի կարելի ասել «անմեղն ի ձէնջ նախ արկցէ քար ի վերայ գորտ»: Ամենեւին ուրիշ հարց է, որ մի քանի տարի էլ չի անցնիլ, երբ բուրերը միանգամայն կընտելանան տիրապետողին, կստանան քաղաքացիության հավասար իրավունք և կյանքի ու դուլքի ապահովութիւն»¹:

Դեռեւ Շահազիզից շատ տարիներ առաջ Խ. Աբովյանը՝ «Ամերիկու լիս քցելը» իր հայտնի յայտնամասիրութիւնում, պատմական հարուստ փաստերով ներկայացրել է «լուսավորյալ» եվրոպացիներին, որոնք զինված «քաղաքակրթութեամբ», դաժան հարստահարման ու ավերածութիւնների են մատնել Արեւելքը: Աբովյանի կզրակացութիւնները ավելի հետեւողական են, քան Շահազիզինը. նա կարողացավ թափանցել եվրոպական տերութիւնների քաղաքական նկատառումների և տնտեսական հեռավոր ձգտումների մեջ: Շահազիզի աշխարհայացքի սահմանափակութեամբ

¹ Սմբ. Շահազիզ, Մի քանի խոսք իմ ընթերցողներին, էջ 25—26:

պետք է բացատրել քաղաքական այն պատրանքը, թե բուրերը անգլիացիների տիրապետութիւն տակ երբեք կարող են ստանալ «քաղաքացիական հաւատար իրավունք և կյանքի ու գոյքի ապահովութիւն»:

Նույն համոզմունքներից թելադրւած՝ Շահազիզը Թուրքիայի քաղաքական, անտեսական ու մտաւոր ճգնաժամից ազատագրվելու միակ հնարաւոր ելքը համարում է ռեֆորմները, որոնցով իւր կարող էր ապահովել քրիստոնյա հպատակ ժողովուրդների, հետեաբար և հայերի բարոյական բարձրացումն ու մտաւոր առաջխաղացումը:

«Միակ ճանապարհը, — գրում է Շահազիզը, — որ դեռեւ կարող էր փրկել Թուրքիային լուր օրհասական վիճակից, այդ այն ռեֆորմներն են, որ նա 25 տարի առաջ խոստացել է մտցնել քրիստոնյա հպատակների մեջ. այն է՝ շինել և բարեկարգել աշխարհը. սանձահարել ավազակաբարո, ճրիակեր հրոսակներին և առհասարակ հրավեր կարգաւ բոլորին դեպի նոր կյանք, նոր գործունեութիւն շրջան»¹:

Ըստ էութեան, ռեֆորմներով բաւարարվելը և նրանցով իշխող հասարակարգը վերափոխելու պատրանքը լիբերալիզմի արտահայտութիւն է, որը զգալի է քաղաքական-հասարակական որոշ

¹ Սմբ. Շահազիզ, Մի քանի խոսք իմ ընթերցողներին, էջ 26—27:

հարցերի շահագլխյան մեկնարանություններում։ Բացի այս, Շահագլխի աշխարհայացքում կան և հակասություններ, տատանումներ։ Եթե «Լեոնի վիշաք» հեղինակի գաղափարական ամենաբարձր նվաճումն քննադատություն էր տիրող իրականության նկատմամբ, ապա 80-ական թվականներին բանաստեղծն արդեն դոճուհակություն է հայանում սուսական կայսրության մեջ գոյություն ունեցող օրենքներից։

«Բայց, որ ինչ վերաբերում էր Ռուսաստանի հայերիս,—գրում է նա,—պարտ է ասել, որ ոչ մի տերութենական օրենք չէ արդելում ուսանել մեզ մեր լեզուն. լալն և արձակ ձգած է կամուրջը լուսավորության խաղարից դեպի լույս. որոնք միանգամայն կամին անցանել այդ կամրջից յուրյանց հատուկ զանգվածով և բարեպատեհ սպասավորությամբ, ուրախություն պիտի բերե ազատամիտ կայսրությանս և ոչ արամություն»¹։

Շարունակելով յուր մտքերը, նա հորդորում է ամեն մի տերության քաղաքացու «ձեռք ու թիկունք» դառնալ նույն տերության, օրինակ բերելով իր անձը և թեկադրելով ուրիշներին «բարեհպատակություն»։

«Ամենայն մարդ, ամենայն տերության պաշտոնյա խաղաղ ու համեստ մտածողությամբ պի-

¹ Ամբ. Շահագլխ, Հրապարակախոս ձայն, էջ 340։

տի ձեռք և թիկունք դառնա նույն տերության.
ևս, որպէս երդված սպասաւոր ալս մեծ կայսրու-
թյան, պարտական եմ իմ քաղաքացիներին սիր-
տը ուղղել դեպի առաքինութիւն, որ միակ նշանն
է ամենայն քաղաքական բարեհալատտութիւն:
Ահա ինչ պատճառով մեր խիղճը ազատ ենք հա-
մարում ամենայն բանադրանքից և ունինք մեզ
պաշտպան նույն տերութիւն արդարակշիռ օրեն-
քը¹:

Հաւատարմութիւնը դեպի տիրող կարգերը
Շահագիւղի աշխարհայացքի նույն բուժուական
լիբերալիզմի արտահայտութիւններից էր: Նրա
քննադատութիւնը չհասավ գոյութիւն ունեցող
իրականութիւն բացասմանն ու մերժմանը, նա,
ինչպէս տեսնում ենք, մնաց տերութիւնը հաւա-
տարիմ քաղաքացի, տեղի տալով իր աշխարհա-
յացքի մեջ հակասութիւնների ու տատանումների:

Այս նույն թվականներին էր, որ Շահագիւղը
հայոց հարցի լուծումը կապում էր եվրոպական
տերութիւնների միջամտութիւն հետ, հուլիս դնե-
լով նրանց «մարդասիրական» զգացմունքների
վրա:

«Պահանջմունքը, որ ալսօրջան հայկական ազ-
գը ուղարկում է Եվրոպայի դատաստաններին,
շահախնդիր և կամապաշտ մասնաւորների ցան-
կութիւնն է, այլ բոլոր ժողովրդի կենսական ին-

¹ Ոմբ. Շահագիւղ, Հրապարակախոս ձայն, էջ 344:

տերեաներն են. նորա գուլքի և պատվի ապահովությունն է, նորա հասարակաց բարին է,—մի սուրբ և թանկագին բան ամենի աչքում... բողոքը շրթունքին դռա հայտնում են յուրյանց ցավերը, խաղաղության օրեր խնդրելով Եվրոպայից»¹:

Հետագայում բանաստեղծը ապրեց խոր հիասթափություն: Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը սթափեցրեց նրան քաղաքական սին հուլիսերից, խորտակիկ և ռուսական կայսրության նկատմամբ հղած պատրանքը: Ռեուլյուցիային նախորդող տարիներին նրա մեջ ուժեղացավ քննադատության ոգին դեպի ցարական Ռուսաստանը: Իսկ համիդյան սանձազերծ ջարդերն ու կոտորածները նրան համոզեցին, որ հայ ժողովուրդը ոչ միայն թուրքական լաթաղանի, այլև մեծ տերությունների դիվանագիտական դավերի դոհն է: Ատելությամբ լցված եվրոպական տերությունների հանդեպ, նա տեսավ թե ինչպե՞ս նրանց կաշառված ներկայացուցիչները իրենց գրիչը վաճառում են սուլթանի ոսկիներին և «...ստրկաբար խուսկ են ծխում բաշիբուզուկների «մեծահոգության», որովհետև նրանք հաղարավոր զոհերի գլուխը միանգամից չեն թոցնում, այլ մի քանի անգամից»²:

Շահագիղը անարգանքի սյունին դամեց Եվ-

¹ Սմբ. Շահագիղ, Հրապարակ խոսք ձայն, էջ 333—334:

² Սմբ. Շահագիղ, Մի քանի խոսք իմ բնթերցողներին,

բոսպալի «խաչատուակ դիպլոմատիան», ցույց տվեց, որ Եվրոպայի «մարդասիրությունը», «քաղաքակրթությունը» սոսկ դատարկ հնչյուններ են:

«Հայության շունչը սպառում է յուր ազնիվ և դյուցազնական կրթի մեջ և Եվրոպան խաղ է անում, մի անարգ և բարբարոսական կոմեդիա. տասնիններորդ դարի էջերը կմնան սևացած պատմության մեջ և կարճանադրեն խաչատուակ դիպլոմատիայի հնարագիտությունները: Եվրոպայի մարդասիրությունը, Եվրոպայի պրոգրեսը, ոչ ալ ինչ է, քան թե մի ամբողջ շարք վայրենի կրքեր և անառակություն: Թճեմ ալ գիլիլիդացիայի կրեսին, որ ներկայացնում է մի կատարյալ մտավորական սիֆիլիզացիա: Տես՝ ի՛նչ գիրք է բռնել այն ճղճիկան ֆրանսիան, որ մեզ ուսուցանում էր եղբայրություն և հավասարություն, այժմ ինքը փոխվել է ստրուկ և ծառա և պապանձել է լեզվով, որ մի ժպիտ անգամ չհանե այն անմեղ զոհերի համար, որոնք պաշտպան են հանդիսանում նրա դավանած սկզբունքների համար: Գրիչո հրաժարվում է շարունակել այս անտանելի պատմությունը: Բայց այնուամենայնիվ ալեկի պիտի հուսալ, քան վհատիլ»¹:

Հայրենասեր բանաստեղծը ծանր ապրելով իր ժողովրդի ողբերգությունը, չհուսալքվեց, ալ գտավ, որ «ալեկի պիտի հուսալ, քան վհատիլ»:

¹ Եր. Շահագիր, Մաթա Շահագիրյի կենսագրությունը, 1944, էջ 94:

Հայ ժողովրդի թե՛ անցյալի և թե՛ ժամանակակից քաղաքական գիրքերի գնահատմանը նվիրված Շահազիզի երկերը լուսաբանում են նրա աշխարհայացքը: Վերջինս, ինչպես տեսանք, թեև զարգացել է որոշ հակասություններով, բայց «Լեոնի վշտի» հեղինակի համար գերակշռողը և հատկանշականը եղել է դեմոկրատիզմը:

* * *

Շահազիզը հայ գրականության պատմության մեջ ունի յուր մնայուն, առանձնահատուկ տեղը: Նա գրական տապարեղ մուտք գործեց, երբ XIX դարի հայ պոեզիան գեռես ձևավորված չէր, նոր էր միայն սկզբնավորվում: Շահազիզը հանդիսացավ այդ պոեզիայի ու աշխարհաբարի հաղթանակի համար պայքարող առաջին երգիչներից մեկը:

Շահազիզն իր ողջ ուժերը, ստեղծագործական կարողությունները ի սպաս դրեց հայ լեզվի և գրականության զարգացմանը, հայ մանուկների դաստիարակությանը: Նա պայքարել է ազգային հպարտության և արժանապատվության համար ո՛չ միայն գեղարվեստական, հրապարակախոսական երկերով, այլ ամենուրեք՝ հասարակական վայրերում, թե քննարական շրջաններում, մինչև իսկ մասնավոր թղթակցությունների մեջ:

«Ո՞վ է հառաքրքրվում հայ հեղինակի գործով,—գրում է Շահազիզը. — հայերս մի վայրենի

հասկացողություն ունենք հայերեն գրքերի և հա-
րադատ լեզվի մասին: Մենք բոլոր ժամանակը
օտար լեզուներով ենք կոտրատում, որովհետև այդ
օգտակար է մեզ. կթե երբեմն մի քանի հայերեն
խոսքեր ենք արտասանում, այդ միայն նրա հա-
մար է, որ լսողին հիշեցնենք, որ մենք էլ հայ
ենք ծագումով»¹:

Չնայած վերևում հիշված հակասություննե-
րին ու տատանումներին, Շահազիզի քնարից չեն
հնչել հավուր պատշաճի ներբողներ կամ սգո մե-
ղեղիններ. «Ես իմ կյանքում մի ապսպրած բան
չեմ գրած. հենց որ խնդրում են դրեմ, մեխի
պես բանդ է լինում, չգիտեմ ի՛նչ անեմ»²:

Հեռու հայրենիքից, Շահազիզը մամուլի և
մասնավոր թղթակցությունների միջոցով, կենդա-
նի հետաքրքրությամբ հետևում էր հարադատ
ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի
ընթացքին:

Նույնպիսի հետաքրքրությամբ նա հետևել է
և հայ գրականության հետագա զարգացմանը, նրա
ականավոր ներկայացուցիչների գործունեու-
թյանը: Բանաստեղծը ջերմ համակրանք է տածել դեպի
Բաֆֆին, Դ. Աղալանը, իր հայրենակից Պ. Պոռ-

¹ Գրականության և արվեստի թանգարան, Եր. Շա-
հազիզի ֆոնդ, III բաժ. № 232:

² Նույն տեղում, № 237:

շլանը, Հովհ. Թումանյանը: Բաֆֆու մահվան առ-
թիվ դրել է. «Բաֆֆիի մահը մեծ բարոյական
հարված պատճառեց ինձ որպես նորա վաստակ-
ները սիրողի և նորա վարկը խոստովանողի»¹:

Շահազիզը բարձր է գնահատել Ռ. Պատկա-
նյանի տաղանդը և միշտ բանաստեղծին մեծա-
րող հանդեսներին հնարավորություն չունենալով
անձամբ մասնակցելու, շնորհավորական հեռագրի-
րով արտահայտել է լուր համակրանքը: Նա Պատ-
կանյանի արձանի բացումը համարել է «հայոց
ազգի» «մտավոր հաղթանակ»:

Շահազիզը մեծ հայրենասեր էր և հումա-
նիստ: Հոգով հարուստ, նկարագրով կայուն, անձ-
նուրաց քաղաքացի: Նրա համար չկար ոչինչ
ավելի նվիրական, քան հայրենիքը. «Իմ առաջին
ազգակիցը իմ հայրենիքն է», — այսպես է ասել հե-
ղինակը իր մասին և իսկապես նա իր ողջ կյանքը
ի սպաս է դրել հայրենիքին ու հարազատ ժողո-
վրդին և ծառայել նրանց: Նրա մարդկային նկա-
րագրի, հասարակական պայքարի ամփոփումը
տրված է «Զոհեր» բանաստեղծության մեջ, ուր
հետադարձ հայացք նետելով դեպի անցած ողին,
բանաստեղծը ցույց է տվել այն սուրբ գործը,
որի հաղթանակի մեջ էր նրա կոչումը:

¹ Գրականության և արվեստի թանգարան, Եր. Շա-
հազիզի ֆոնդ, III բաժին, № 195:

Բայց թող հայկական որդիքն իմանան,
Որ իմ սուգս նոցա վիճակն է եղել.
Որ երբեք վախժուկ զինվորի նման
Թշնամուս առջև վահան չեմ ձգել:

Չեմ երկրպագել ես ոսկի հորթին,
Եվ ոչ կռուքերին պաշտել օտարի.
Այլ միշտ հողեոր կարոտ ծարավի,
Տվել եմ արժանն ամեն մի մարդին:

Չեմ տաշել զազազ, ու մատաղ կյանքի
կանաչ ծառի սկես ծաղիկն եմ հույսեր:
Սրսիկն եմ զբանց ջրով կենդանի,
Որ զալոց ազդին լինին պտղարեր:

Սմբատ Շահապիղի ստեղծագործական ուղին լուսավորված էր 60-ական թվականների ազատագրական պայքարներով: Նա պատկանել է լուսավորիչների այն սերնդին, որոնց հասարակական գործունեության էությունը, ինչպես Լենինն է բնութագրել, «կրքոտ» թշնամություն էր «...դեպի ճորտատիրական իրավունքը և նրա բոլոր արտահայտությունները անտեսական, սոցիալական և իրավական բնագավառում»¹, նրանք կողմնակից էին «...լուսավորության, ինքնավարության, ազատության, կյանքի և վրոպական ձևերի...»² և համոզված էին, «...թե ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների վերացումն

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատոր 2, էջ 652:

² Նույն տեղում:

իր հետ ընդհանուր բարեկեցություն կրերի, և
դրան օժանդակելու անկեղծ ցանկությունը¹:

Սմբ. Շահադիզը թե՛ որպես բանաստեղծ,
թե՛ որպես հրապարակախոս-մանկավարժ խոշոր
և նշանակալից դեր կատարեց հայ դրականության,
հասարակական մտքի պատմության մեջ: Նա ուղի
հարթեց արևելահայ պոեզիայի, մասնավորապես
քնարերգության հետագա զարգացման համար:

Բանաստեղծական անկեղծ ներշնչմամբ զբը-
ված նրա լավագույն ստեղծագործությունները
մինչև օրս պահպանել են իրենց հմայքը:

¹ Վ. Ի. Լեևիև, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 2, էջ 653:



ԱՆԻՍ ՍԱՐԳՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՄՐԱՍ ՇՍՀԱԶԻԶ

Գառ. խմբագիր՝ Ա. Մ. ԻնճիճՅԱՆ
 Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
 Նկարչական ձևավորումը՝ Կ. Տ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
 Տեխն. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶԵԿՅԱՆ
 Վերատուգող սրբագրիչ՝ Օ. Ա. ԱՐԶՈՒՄՅԱՆՅԱՆ

ՎՖ 05580	Գատվեր 262	Տիրած 3666
	ԽՀԽ 545	Հրատ. 1707

Հանձնված է արտադրության 9/VI 1959 թ.,
 ստորագրված է տպագրության 4/VIII 1959 թ.,
 տպագր. $9\frac{1}{8}$ մամուլ, հրատ. 4,35 մամուլ,
 + 1 ներդիր, թուղթ $70 \times 92\frac{1}{32}$,
 Գինը 2 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության
 տպարան, Երևան, Արտվյան, 124:

ԳԻՆԸ 2 Ռ.

A $\frac{I}{321}$